2010

200
219-Բ

ԲԵՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ

ՔԱՐՈԶՉԱԿԱՆ

ԹՈԹՈՎԱՆՔՆԵՐ

800

ԱՂԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ,
ՏՊԱՐԱՆ ԱԿՈՎԲ ՎԱՍԱԲԵԱՆՑԻ
1903

24
Բ-49

ԲԵՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ

№ 9348

ՔԱՐՈԶՉԱԿԱՆ

ԹՈԹՈՎԱՆՔՆԵՐ

1004
48061

Բ.

ԱԶԳԷՔՍԱՆԴՐԱՊԱՏ,
ՀՊԱՐԱՆ ՅԱԿՈՎԲ ՂԱՍԱԲԵԱՆՑԻ
1903

Дозволено Ценз. Тифлисъ, 21 Декабря 1902 г.

108114-42

ՅԱՇԿ

Ա. Յիսուսի վերջին օրերը կամ Յուդա, Պիղատոս, ամբոխ.
Բ. Իմ աղօթքը.
Գ. Հաւատն է փրկում.
Դ. Ի խորոց սրտէ.
Ե. Գեորգ Դ. Կաթուղիկոսի Օրհնեալ յիշատակին.
Զ. Քրիստոնեական միայնութիւն.
Է. Փարձութիւն.
Ը. Իմաստուն անիրաւութիւն եւ փոքր բանի մէջ հաւատարմութիւն.
Թ. Վա՜յ ձեզ.
Ժ. Ս. Լուսաւորիչը.
ԺԱ. Յո՜ւշ լիցի ձեզ.
ԺԲ. Քաջարի նահատակներ.
ԺԳ. Հայրիկն Հայոց.
ԺԴ. Մի նոր աւերակ աւերակաց աշխարհում.
ԺԵ. Արդարութիւն.
ԺԶ. Հայ օրիորդի բարի վարկն է գովելի.

ТИФЛИССКАГО СОБРАНІЯ БИБЛІОТЕКА

Ըստ բարձր հրամանի Նորին Ս. Օծութեան Վեհափառ Հայրապետի ազգիս, Դիւանս թոյլատրէ տպագրութիւն բարոզագրոյս. հաստատելով ստորագրութեամբ եւ դրոշմամբ կնքոյ Հայրապետական Դիւանի: ի 12 դեկտեմբերի 1902 ամի ի Ք. Տփխիս թ. 1791.

Դիւանապետ՝ ԳՈՐԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ

Առ ոտս մեծի Քարոզչի Հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ՝ ՀԱՅՐԻԿԻՆ ՀԱՅՈՑ։

ՀԱՅՐԻԿԴ ՀԱՅՈՑ

Քարոզչական թոթովանքներուս Բ. գրքոյկն առ ոտս Քս արկանեմ։ Հայոց դեղերում ցանքի ժամանակ բարեպաշտ գիւղացիք իրենց սերմից մի մի բուռ կ'բերեն առ հայր քահանան որ օրհնէ. ապա օրհնեալ սերմը կ'տանեն երկիւղածութեամբ կ'խառնեն ամբողջի հետ և յոյս-հաւատով կ'ցանեն հերկերուն մէջ։ Ես էլ իմ գրքոյկս կ'բերեմ, որ Օրհնեա Մեծ Քարոզիչ, Օրհնեա իմ թոթով լեզուն, որ կապանքներն արձակուին. թերևս շահաւէտ լինիմ այն նուիրական եկեղեցւոյն, որի պայծառութեան համար 50 տարի հնչել է Քս հղօր ձայնը։

Հեմ ապերասում որ Սրբազնագոյն Հայրապետդ Օրհնէ զիս, որ պաշտօնէութեան ասպարիզի վերայ յառաջ գնամ, տիւղտոներով ճոխանամ, կ'ապերսեմ միայն որ Մեծ Քարոզիչդ Օրհնէ զիս, որպէս զի «Բանիս վարդապետութեան ծիլը աճի ծառ դառնայ ինձնում. կապերսեմ որ քարոզչական շնորհացդ կրակէն մի կայծ մօտեցնես շրթունքներիս և հրով սրբես դայնս։ Պաշտօնն, ասպիճանն ու իշխանութիւնը վաղ-

անցուկ են, կանցնին. անցողականի ցանկացող չեմ. բայց աստուածային շնորհալի խօսքն ու քարոզը երբէք չեն անցնի. և Դու անանց ես, Հայրիկդ Հայոց, քանի Քո քարոզներուդ, գաղափարներուդ զգորդն արձագանքներով պիտի կրկնուի սերունդէ սերունդ, մինչ երկիրս վերայ Հայ կայ և հայկական աղօթիդ մրմունջ։ Գաղափարը, հշմարիտ խօսքը չի մեռնի և յաւիտեան է. «Իսկզբանէ էր Բանն և Բանն էր առ Աստուած և Աստուած էր Բանն»։

«Բանիս հրաշունչ վարդապետ, ընդունէ իմ գրքոյկ, Օրհնէ իմ խօսք որ այժ առնի և Քո սիրած որբաղան գործին ծառայէ։ Երբ շնորհներ ու օրհնութիւններ բաժնելու լինիս հոգևոր զաւակներուդ, խնդրածս միայն քարոզչական մաշկեակդ պիտի լինի Եպիսկի օրինակով։

Մեծի Վարդապետիդ
ամենախոնարհ ծառայ
Բենիկ վարդապետ.

Ը.

ՑԻՍՈՒՍԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ

կամ

ՑՈՒԳԱՍ, ՊԻՂԱՏՈՍ, ԱՄԲՈՒՆ

Ինչպէս երկնքի մարտը ցօղ դարնան նորածիլ ծաղիկների դրկում, ինչպէս բարկ ամրան դժոխքար անձրև ցամքած, չորցած, պատառուտուն դաշտերի վերայ, ինչպէս լեռնային ամուշիկ զեփիւռ տենդոտ մարդու այրուող երեսին, այնպէս զովարար, սփոփիչ է, Հնաշխարհիկ վարդապետի վերջին օրերի նկարագիրը, աշխարհային կենաց վերջին շրնաչ պատկերը ճշմարիտ քրիստոնէի համար։

Քրիստոսի խաչաղարդ դրօշակի զինուորներ, ինձ ունկնդիր եղբայրներ, թօթափեցէք մի վայրկեան ձեզ աշխարհի հետ կապող դերիշ շղթաները, ազատուեցեան լեռներ տուէք, թրդոշներ դէպի ս. Աստուածանի աշխարհը, մարի աչքով տեսնեք Փրկչի սուրբ երեսը, սուրբ գործը իւր կենաց վերջին օրերում. ինչ տխուր, բայց և ինչ մխիթարիչ, ոգեւորող, հոգեպարար կեանք։

Ահա բազմած է Նա իր իսկ հզօր հրամանով յարութիւն առած Ղազարոսի տանը. հաւատի բուռն զգացմունքը ճնշում է հաւատացող Մարիամի՝ Ղազարոսի քրոջ սիրտը. ինչպէս արտայայտէ Նա իր սէրը, իր հաւատը. բերում է իր մէկ շիշ անուշահոտ Նարդոսի ալաբաստրը, թափում է Փրկչի ոտքերի վերայ, օծում և վարսերովը սրբում։ Նարդոսի անուշահոտութեան հետ մարմար հաւատի անուշահոտութիւնն է բուրում. այդ բուրմունքից երանութեան ժպիտն է ծագում Փրկչի առաքեալների դէմքին։ Նոցանից միայն մէկը խաւար այրի պէս մայլ ու մութ հայեացքով նայում է թափուած իւղի վերայ և արտանջելով բողոքում. «Ափսոս չէր այդ իւղն որ թափուեցաւ. աւելի լաւ չէր լինի որ 300 դենարի ծախէինք և աղքատներին տայինք»։ Ցամաք սիրտ, որի վրայից հաւատի ջուրը չի հոսում։ Բայց Նա աղքատների հոգսը չէր քաշում. Նա ինքն առաքեալների գանձապահն էր, ուզում էր որ դրամն արկղը մտնի, որ մի մասը գաղանայ «քան զի գող էր և գարկղն յինքն ունէր»։

Ղազարոսի տանից ելաւ. աշակերտները հետևեցին Նորան, հետևենք և մենք։ Նա էշի վերայ նստած Երուսաղէմ է գնում. դղրդում է Երուսաղէմ, հազարաւոր ամբոխ ծառերի ճիւղերով

ու ծաղիկներով նորան ընդառաջ է գնում. «Օսաննա, օսաննա, բարով եկար, Դու ես Դաւիթ Իսրայէլի թագաւորը, Օրհնեալ է Դու» և օրը թնդում է «օսաննա, օսաննա» աղաղակով։ Բայց այս հաղարաւոր ամբոխի կեցցէները Մարիամի թափած իւղի մի կաթիլն արժէին. ոչ, ոչ երբէք. կոյր ամբոխը բանական թագաւոր կ'կարծէր նորան. կ'կարծէր թէ նա շուտով զօրք պիտի կազմէ և Իսրայէլի թշնամիների գլուխը պիտի ջախջախէ. չէ որ նա կարող էր այդ անել, նա, որ Ղազարոսին յարութիւն տուաւ։ Թեթեամիտ ամբոխը չէր հասկանում թէ նորա թագաւորութիւնը այս աշխարհի թագաւորութեան նման չէ։

Աւագ հինգշաբթի օրն է, երեկոյեան ժամանակ. ահա նա նստած է մի վերնատան մէջ. վերջին ընթրիքն է վայելում իւր սիրելի աշակերտների հետ. խորհրդաւոր ու սուրբ ընթրիք. սրտիսի երկնային վեհ գաղափարներ յեղյեղուեցան քո շուրջդ, սուրբ սեղան։ Այդ ընթրիքը վերջին կատակի ընթրիքն էր, վերջին հրաժեշտի սրբազան ժողով։ Թողեց սեղանը, եկաւ ջուր ու սրբիչ ուզեց, ծունկի իջաւ իւր աշակերտների առաջ և մէկիկ մէկիկ լուաց նոցա ոտքերը։ Նա մօտեցաւ Պետրոսին. սիրող սիրտը յետ յետ փախաւ. «Տէր, Տէր, ինչ ես անում,

Դու իմ տարս պէտք է լուանաս». «Ո՜հ, Պետրոս, խոնարհութեան մէկ օրինակ եմ տալիս ձեզ և եթէ չթողնես, որ տարդ լուանամ, ինձ հետ բաժին չունիս» և լուաց։

Սեղանի ծայրին սև երեսով, մայլ հայեացքով պլխիկոր նստած է զանձապահ առաքեալը. լապտերի լոյսն ընկնում է նորա երեսին. նա այդ լուսից թաղցնելու համար իւր հագին մոտնով դէմքը, պլխիկոր մար կնայի։ Փրկիչը մոտեցաւ. լուանում է և նորա տարը։ Նոյն բոպէին սատանան զանձապահի խորտակուած սրտի աւերակներից շշնջում է նորան «մատնիր, մատնիր դրան, երեսուն արծաթը պերազատիր խոնարհ վարդապետիցդ»։ «Եւ ի լինել ընթրեալ-ցին սատանայի իսկ արկեալ էր ի սիրտ Նորա, զի մատնեսցէ զՆա»։

Վերջացաւ ոտնալուան. Նա սեղան նստաւ, վշտերի մի քրտինք վրան կաթեց «խռովեցաւ յոգի իւր» և ասաց «ճշմարիտն եմ ասում, որ ձեզնից մէկն ինձ մատնելու է»։ Սիրոց ատրիաները սասկացին, բայց սատանան շշնջում է զանձապահին «չ՛չփոխեմ ուրիս, հաստատ լեր, մատնիր շուտով, արծաթ կեր». «Ո՜հ, ձայնեց Յիսուս, ինձ հետ հաց ուտողը խաբէութիւն է գործում իմ դէմ», իսկ սատանան՝ Յուդային. Սիրտ առ պինդ կաց զանձապահ, միայն ար-

ծամին է անմահ»։ Փրկիչն այս ճանապարհով կամենում է հետզհետէ մերկացնելով շարագործին զգման բերել նորան։ Նորից խօսում է «Որին լծացած պատառս կ'տամ, նա կ'մատնէ, Ինձ» և տալիս է Յուդային. «Դու չ'զգաս շշնջում է թշնամին»։ Վերջապէս Փրկիչն անուղղակի առաքելին դառնալով ասում է. «Վեր կաց, արա ինչպէս կամենում ես, գնա այս տեղից». «Վեր կաց համարձակ, շշնջում է չար գեր մօտ է երեսուն արծաթ»։

Ուրբաթ գիշերուայ մթութեան մէջ չար գեն առաջնորդում էր Յուդային դէպի քահանայապետի տուն երեսուն արծաթը կշռելու, այն ժամանակ երբ Յիսուս իւր վերջին կտակն էր աւանդում իւր աշակերտներին, իւր հրաշալի կտակը. «Որպեսզի իմ, սիրեցէք միմեանց այնպէս, ինչպէս ես ձեզ սիրեցի. թող չվշտանան ձեր սրտերը, այլ Ինձ հաւատացէք, Աստուծուն հաւատացէք։ Եթէ աշխարհը Ձեզ ատէ, ի հարցէ, իմացէք որ առաջ Ինձ ատեց և հալածեց, նշանակութիւն մի տար անմիտ ամբոխի հալածանքին։ «Մեծ ես քան դայս սէր ոչ որ ունի, եթէ զանձն իւր դիցէ ի վերայ բարեկամաց իւրոց.....»։

Գիշեր էր երբ Նա բազաքից դուրս եկաւ և Կեդրոնի ձորակի ճանապարհը բռնեց. աշա-

կերաններբ սրտաբեկ ու գլխիկոր հետևում էին Նորան։

Զիլիենեաց պարտիզի մեջ, ծառերի տակ արյունքով ցոլացած, վշտերով ծեծկտած առաքեալներն ընկած քնած են։ Քարընկէց մի հեռու ծունկ է իջած Փրկիչն Յիսուս. Նորա աչքերը յառած են դէպի երկինք, Նա խորհում խօսում է իւր երկնաւոր Հօր հետ. «Հայր, կարելի չէ՞ որ շարշարանքի գաւն բաժակը չխմեմ. բայց... ոչ, թող եւ մեռնիմ, թող աշխարհ փրկուի»։ Եւ ջերմ աղօթում է Նա, տապնապի քրտունքը լեփուլում է Նորա գլխոտար ճակատից ու թանում Գեթսեմանի պարտիզի հողը։ Նա իբրեւ մարդ աղօթեց, իբրեւ Աստուած վեր կացաւ։

Յանկարծ խաւարի ամբոխը սրոբ ու բրոբ պարտէզ խուժեց. նոցա երկու առաջնորդները մօտեցան հեղ Փրկչին. մէկը համբուրեց Նորան, այդ դանձապահ առաքեալն էր, միւսը մի ծանր ապտակ զարկեց Նորան, այդ այն անգամալոյծն էր, որ երեսուն տարի Սելոամի աւազանի մօտն ընկած էր անտէրունչ և Փրկչի մի հրամանովն էր բժշկուել։ Սակայն ոչէ՞ ու ապերախտ անգամալոյծի ապտակն այնքան ցաւ չտուաւ Նորան, որչափ խորը խոցեց ուրացող աշակերտի քնքոյշ համբոյրը և Նա խօսեց.

«Բարեկամդ եմ, համբուրելով ես մատնում Մարդասիրդ»։ Ամբոխը պիղծ բերանի թքով օծեց Նորա գլուխը, ապա փշէ պսակ բոլորեց. անօրէն ձեռքեր դէպի օդ բարձրացան և փայտերի, շղթաների, բռունցքների, քարերի մի տարափ տեղաց զեղեցիկ կիսամերկ մարմնի վերայ. ոչ ոք կար Նորան պաշտպանող, ոչ ոք կար անիրաւութեան դէմ բողոքող։ Ո՞ւր էին Փրկչի առատ ձեռքից այնքան բարիք վայելածները. ո՞ւր էր զօսացած ձեռքով բժշկուածը, ո՞ւր Նայինի յարուցեալ պատանին, ո՞ւր էին տասնեակ սրբեալ բորոտներ, ո՞ւր հարիւրապետի բժշկուած մանուկ, ո՞ւր քարկոծումից ազատ կին պոռնիկ, ո՞ւր էին այն բազմաթիւ մարդիկ, որոնք տաճարի դռներում շարուած կաղագակէին «Յիսո՛ւս ողորմած». Եւ Յիսուս ակամէ, աչք, սիր, սրտ, ողջութիւն, կ'ոփուէր ամէն իր դիմողներուն։ Այո՛, ոչ ոք կար այն երախտապարտ, բայց ապերախտ մարդկանցից. մէկն էր միայն յայտնի, երեսուն տարուայ անդամալոյծը, որ իւր փրկողին առաջին ապտակը հանեց։

Ուրբաթ առաւօտուն, արիւնլուայ անմեղ կայտառորը կանգնած էր երկրի դատաւորի առենում. երեք օր յառաջ օդը թնդացնող ամբոխի ձայնը «Ոսանա՛, Ոսանա՛» փոխուել էր ուրիշ արքունական դնդոցի «ի խաչ, ի խաչ

հան գԴա»։ Խաչիր Դրան և արձակիր մեզ բանդից մարդասպան, աւազակ Բարաբբային։ Իսկ հեզ Փրկիչը՝ ոչ ձայն ոչ ծպտուն։ Վերջացաւ քննութիւնը. եկաւ դատաւոր, ջուր ուզեց, ձեռքերը լուաց հրէաների առաջ և ասաց «քաւեալ եմ ես այս արդարի արիւնից. սորա վերայ ես մի յանցանք չգտայ»։ «Ա՜հ, եկիր դու դրան չխաչես, մենք քեզ կայսերը կ՚մատնենք», ազաղակեց ամբոխը. և դատաւորը իւր պաշտօնից զրկուելու երկիւղից անմեղին կատաղի ամբոխի ձեռքը տուեց որ տանեն ու խաչ հանեն։

Մատնիչ գանձապահը Իսկարիովտացի Յուդան էր, դատաւոր՝ Պիղատոս։

Երեք անուն՝ Յուդա, Պիղատոս, խաչտան ամբոխ իրենց հաւասար նշանակութեան, անարգանքի անուն չունին. դոցանից մին է ուրի անդամների, մին է աստուծ զգուանք յարուցանող, ես չգիտեմ. միայն գիտեմ երեքն էլ հաւասար չարագործ են։ Յուդան մատնեց, ամբոխը չարչարեց, Պիղատոսը նորա անմեղութիւնը խոստովանելով դատապարտեց. Յուդան իւր մարդասպանին երեսուն արծաթի փոխանակեց, Պիղատոսն իւր խիղճը պաշտօնին զոհեց, ամբոխը Փրկչին խաչեց աւազակ Բարաբբային ազատեց. Յուդայի համբոյր, Պիղատոսի դա-

տասան, ամբոխի սուտ վկայութիւն Փրկչին խաչի վերայ բեռեցին։

Բայց ով յաղթանակեց. թողնենք այդ մինչև որ անարդ դաշնակիցների (Յուդա, Պիղատոս, ամբոխ) և արդարութեան մարտի դաշտին երկնից հրեշտակ համբաւ բերէ՝ Հոգն անմեղին շպահեց իւր ծոց, *Քրիստոս Յարեաւ ի մեռելոց* *)։

---

*) Ծանօթ. խօսուած է Օդեսայի Ս. Լուսաւորիչ եկեղեցում 1897 թ. Հապ հինգշաբթի գիշերը։

Բ.

ԻՄ ԼԱՂՕԹՔԸ

«Լսարեմ, ասի՝ Ես արձանս» (Յով. ժա. 43).

Դու, հրաշագործ ձայն, որ հնչեցիր Ղազարոսի գերեզմանական այրի կամարներու տակ, հազար չորեքօրեայ մեռեալին ու վերստին դէպի կեանքը կոչեցիր, Դու խօսիր և այժմ մեր սրտերում, ուր նոյն Ղազարոսի գերեզմանի խաւարն ու մամուռն է տիրում։ Փրկարար ձայն, երկու հազար տարի է տօնում ենք քեզ, երկու հազար տարի է, որ բարոյապէս մեռեալ աշխարհը վերակենդանուիլեան կոչեցիր ու անցար. Քո արձագանգդ դեռ կայ. Նա գալիս բազխում է մեր կուրծք, ուր մի մի գիակնացած մեռեալ սիրտ է պառկած, բայց Նա կարծես անզօր է դարձել չորեքօրեայն կենդանացնելու։

Ղազարոսի կենդանուիլեան դեղը, Փրկիչ, Քո հաւատն ու արցունքն էր, Մարիամի ու Մարթայի արցունքն ու հաւատն էր. Նոքա քո ահեղ զօրուիլեանդ հաւատում էին. «Տէր, եթէ այստեղ եղած լինէիր, մեր եղբայրը չէր

մեռնի» և արցունք էին յօգում նոցա ամպոտ աչքերը։ Դու ինքդ էլ սիրոյ արտասուքով լծացիր Ղազարոսիդ գերեզմանը, ուր ջերմ հաւատով աղօթեցիր. «Հայր, գոհանամ քեզնից զի լուար ինձ և ես գիտէի զի յամենայն ժամ լսես ինձ»։ Այդ արտասուքից, այդ հաւատից Ղազարոսին կենդանութիւն ծնեցաւ։

Սակայն ուր է Մարիամի և Մարթայի արցունքն ու հաւատ. մեր լուսաւորեալ օրերում չկան նորա. կանք մենք միայն, մեռեալ ու չոր-բերբերեայ Ղազարոսներս, բայց՝ արցունք մեր սխալների համար, հաւատ մեր բարոյական վերակենդանութեան համար ծաղրելի բաներ են դարձել։ Ապաշխարութեան ձեր պահում ենք, բայց զղջման արտասուքի փոխարէն մեր աչքերի մէջ արծաթի փայլն է խաղում, կենդանարար հաւատի տեղ մեր կրծքերում անտարբերութեան սառցէ սարն է կանգնած։

Դու եկար ցրուած Իսրայէլի զաւակներին ժողովելու, զօսացածին ձեռք, բորոտին սրբրումն, անդամալոյծին առողջութիւն, դիւահարին բժշկութիւն, անյոյսին յոյս տալու, անհաւատին հաւատ ներշնչելու. Նայենի միամօր որդու յարութեամբ մի սնանկ ՀԱՅ ազգին սրբելու, Ղազարոսի վերակենդանութեամբ ճշմարիտ հաւատի ոյժը [illegible] եղբայրա-

ՀԱՅԿԱԶՆ ԳԻԱԴԻՐԱՆ
Армянская Библиотека
Մ. Մ. ԱՍԻ ՅԱՆԻ ԱՆՎԱՆ
Имени М. Масиняна
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՏ-ԱՌԱՔ

կորոյս Մարիամն ու Մարիայն միխիթարելու։ Իսկ մենք Քո անունն այստեղ կարդացողներս ինչ արինք նոր Իսրայէլի՝ մեր արենակից եղբարց համար. միմիայն Քո տուածը դաս չէր։ Մի կողմից կեանքի փոխարիկ, միւս կողմից բարոյական մեռելութեան հոգին քանդեցին Քո ժողովրդիդ բոյներն ու տարագիր եղան նոքա. աշնան ծառերի տերևի նման թափթփեցան ու ցրուեցան օտար աշխարհ, Քո օրինակովդ մեզ մօտ եկածներին ժողովեցինք։ Մէկի զաւակ, միւսի ամուսին, երրորդի հայրը, չորրորդի քոյրը, հինգերորդի եղբայրն ու սիրելին Քո անուանդ համար ազգային տաճարի ս. սեղանի վերայ դրին իրենց աբիւնոտ գլուխները. մէն մէնակ մնալով զօսացած ձեռք, անդամազուրկ անդամալոյծ դարձան, Քո պատուէրիդ համաձայն մեր ձեռքերը ծառայեցին նոցա։

Այս հարցերի պատասխանը մեզ համար Քո անսուտ աւետարանիդ, միշտ թարմ, միշտ վճիտ ապրիւրումն է. ցուցամոյ փարիսեցու առատաձեռնութիւնը, անիրաւ դատաւորի դատաստան, ապրատիկ Ղազարոսի և մեծատան առակը մեզ, մեզ կ'վերաբերի։ Մենք մի քանի արծաթի տուինք թմբուած դէմքերով, որ բարեգործի անուն ժառանգենք, միքանի մեկ-

նած ձեռքերում գրում գրինք, որ անճար բոլորաւորի նման չ՝ ձանձրացնեն մեզ «Դատ արա ինձ» ասելով. և միթէ մեր ճոխ սեղաններից մի բան պակսեց, որ ապրատիկ Ղազարոս եղբայրները յագենային։

Եւ վերջապէս, Ողորմած Փրկիչ, այսօր Քո տաճարիդ մէջ Քո ապրատիկ եղբայրներիցդ երկու անմեղ մանուկ բողոքում են Քեզ, բողոքում են մեր սուտ ապաշխարութեան դէմ։ Բնաւեր դառնալով այստեղ էին ապաւինել նոքա. մի կուրծք կար, որ այդ մանկանց ջերմութիւն էր տալիս։ այս բարոյապէս ցուրտ երկրում. մենք ամէնքս այդ կրծքի մէջ փառ կրակը հանդցրինք. վիշտ, տառապանք, քաղց, ծարաւ, մերկութիւն վերջ դրին մեր երիտասարդ մօր կեանքին մեզ մօտ, մեր աչքի առաջ. Ո՜հ, հարուստ մեռեալի դաղդի վերայ դէղդէղ թափուող պտակներից մէկի ծախքը հերիք էր որ մի հայ մօր ճրագը փառ մնար. և մեր հանդպաւ, օտար երկնքի տակ, հեռու հայրենի հողից, սիբելեաց դերեզմաններից..... Եւ ինչ դանդաղութիւն կայ թշուառ մօր և մի այլ մօր մէջ. միայն այս որ առաջինն ապրատ է, երկրորդը հարուստ։ Անիրաւ արդարութիւն, որ փակում ես բարդաւորի աչքը իւր անբաղդ քրոջ տառապանքը ծածկելու համար։

Բայց կարելի է պատկերացնել այն բոլոր թշուառութիւնը, որ հեղեղեց Քո ժողովրդին մի ցէր. Քո մարմնաւոր հայրենիքդ՝ Իսրայէլի աշխարհն այնքան քաջ չունի, որքան մեր երկիրն աւերակ ունի, հայրենիքիդ զեռերն այնքան ջուր չունին, որչափ Քո հնադարեան այս երկրագործ ազգը թափուած անմեղ արիւն ունի, Սինայի անապատն այնքան աւազ չունի, որքան այս ազգը նահատակաց գերեզման ունի, Հրէաստանի երկինքն այնքան անձրև չունի, որքան այս աշխարհն արցունք ունի. աւերակների աշխարհ է մեր աշխարհ։ Երկրաւոր կեանքիդ մեծախորհուրդ շարժմն է սկսուում. դեռ Գոլգոթայ չ'բարձրացած, նայիր ու տես այս աշխարհ. Դու, ժողովող Քրիստոս, ցրուած մի թաղուր քո հօտը. Դու՝ յարուցանող ձայն և մեղ, կանչիր մեռելութիւնից ի կեանս «Զարթիր արի մեկ արտաքս»։

Գիտեմ, աւերակները կ'շինուին, տաճարները կ'կանգնին, մեռեալները յարութիւն կառնեն, եթէ միայն մեր աւերակ որտերը վերականգնես, Ով ցէր, եթէ բանաս մեր աչք ու տեսնենք մեր սեփական թշուառութիւնը, եթէ օտարաց կեանքով չանարուց դարձնես մեզ, որ մեր կեանքովն ապրենք։

Այսօր քո ողորմութեանդ դուռը բանալ

պիտի խնդրէ. Հայոց եկեղեցին ընդունիր մեր ապերսը «բաց մեզ, Տէր, բաց մեզ զդուռն ողորմութեան որ ապրելով կարդամբ առ քեզ». Քո շարչարանաց օրերու շնորհիր և «Ցուր զորութիւն ծառայի քո, կեցո զորդի աղախնոյ քո և արա առիս նշան բարութեան». Թերևս Քո խորհրդաւոր կեանքիդ ժամերը, Քո հառաչանքդ միանայ ծառայիդ տկար ձայնի հետ և բարութեան նշան տեսնուի այսուհետև քո ժողովրդիդ մէջ։ Ամէն *)։

ГИСТОРИЧЕСКАЯ БИБЛИОТЕКА

---

*) Ծանօթ. Խօսուած է Օգեսայի Ս. Լուսաւորիչ եկեղեցում 1897 թուի Ծաղկազարդին։

Գ.

ՀԱՒԱՏՆ Է ՓՐԿՈՒՄ

„Տէր յաւել մեզ հաւատս".

Գեննեսարէթի ծովակը կատաղի բարկութեամբ կ'լայնանայ, կ'խարանայ ու իւր այժերն անդունդներից հաւաքելով փրփուրի լեռներ կ'հանէ իւր դէմքի վերայ. այդ ալիքներից մահ կ'հոտի։ Մէկ ալիքների կատաղը բարձրանալով մէկ նոցա խոր գիրկն անյայտանալով կ'օրօրուի տաշեղի նման մի խղճուկ նաւակ։ Մահու տագնապը նման ալիքով կ'բռվիէ և ներքուստ խղճուկ թիավարների կուրծքը։ Նոցա բազուկները լծուլցան, անխուսափելի է մահը։ Յուսակտուր աչքերով նոքա կ'նայեն նաւակի ծայրումը խաղաղ քնած մարդու վերայ ու կ'մտածեն դառն զղջմամբ. «Ա՜հ, յաւիտենական կեանք էիր խոստանում մեզ. ինչպէ՞ս խաբուեցանք. միևնոյն էլի մի վայրկեան և ձկների աշխարհում կ'բացուի մեր գերեզման։

Քնած է Նա. Նա էլ է յոգնած, ալիքներով ծեծուած, բայց ոչ ծովի, այլ մարդկանց ատելութեան փրփրաղէզ ալիքներով ծեծուած

և այժմ հանդչում է անայլ բան մտած։ Վերահաս մահից սարսափած ձայն են տալիս Նորան. «Վարդապետ, ոչինչ է, թեզ փոյթ, կորնչիմք տհաւասիկ»։ Զարթեց, հրեշտակի հանդարտութեամբ վերկացաւ, ձեռքը դէպի հոգմերն ու ալիքը մեկնեց ու հրամայեց նոցա. «Դադարեա, կարկեաց. և դադարեաց հոգմն և եղև խաղաղութիւն մեծ». և դառնալով իր ապշած աշակերտներին քաղցրութեամբ յանդիմանեց. «Ընդէր այդպէս վատասիրաք էք, չե՞ս ունիք հաւատս»։

Նաւակէն ոտն իջաւ. մտախոհ յառաջ կերթայ Յայրոս իշխանի հաւատը պսակելու, Նորա մերձ ի մահ դստերը բժշկելու։ Ժողովուրդը շարիշար կերթայ Նորա ետեւից։ Ամբոխը ճեղքելով մէկ կին, 12 տարի հիւանդութեամբ տանջուած մէկ կին, յոյսերի արցունքներով ցօղուած, հաւատի ժպիտն երեսին յառաջ կերթայ. «Ա՜խ, երբ կ'հասնեմ Նորան, երբ կ'մերձենամ Նորա հանդերձին. ինչպէս անեմ, որ ինքը չ'իմանայ»։ Հասաւ. դողդոջ շրթունքներն տպան Նորա վերարկուի քղանցներին։ Գաղտնիքների աշխարհները տեսնող Փրկիչը թափանցեց Նորա սիրտը, տեսաւ որ այնտեղ հաւատի խարոյկը կ'բորբոքուի, հրդեհ կ'բոցավառուի. ոչ դուստ իմ, «Հաւատք քո կեցուցին զքեզ, երթ ի խաղաղութիւն և եղիջիր ողջ ի

տանջանաց քաց» և քարոզը հայեացքից զուտ-
ըստ մի ցող իջաւ թշուառ կնոջ վերայ ու փրկեց
նորան կոկծեցուցիչ հիւանդութիւնից։

Ի՛մ սանկնդիրներ, եթէ ձեր շրջակ գարդերի
մէջ Փրկչի Աւետարանն էլ տեղ ունենար ձեր
սեղանների վերայ, ես ամենուրդ կառաջարկէի
գնալ բանալ այն գիրքը և անմահութեան հոտ
բուրող հաւատոյ հոգարերանով ծաղիկների դաշ-
տը տեսնել հոգու աչքերով։ Այլ ափսո՜ս, ինչ-
պէս ցաւագար աչքի համար արևի ճառագայթն
անդուր է, խայթող, ծակող է, այնպէս էլ ցա-
ւագար հոգին չի կարող առնել հաւատի լոյսը.
ուստի Աւետարան, հաւատ վաղուց թէ ասել
թռել են մեր սրտերից, այնտեղ պատարկու-
թիւն ու անմտութիւն թողնելով միայն։

Քրիստոսի անունով գրոշմուած Քրիստո-
նեաներ, Աւետարանի հոգը հաւատն է, փրկու-
թեան գէնքը հաւատն է, երկրի ու երկնքի
դրախտը տանող ճանապարհը հաւատն է, հզօր-
ներից հզօրագոյնը հաւատն է։

Բայց ինչ է հաւատ։ Մտածելու շնորհքն
զուրկ մարդու համար դա մի վերացական ան-
հասկանալի բան է, սակայն արտաքին բնու-
թիւն և իւր հոգեկան աշխարհն ուսումնասի-
րող մարդու համար հաւատը նոյնքան պարզ,
նոյնքան հասկանալի է, որքան արևի ճառա-

գայլմն երկնակամարի բարձունքում բայց աչքի համար։ Հաւատալ մի ներքին անընկճելի համոզմունք է թվ. կայ մի Աստուած, որի ձեռքումն է մարդկանց բաղդը, որ օրէնքներ ունի և նոցանով կառավարում է ազգեր ու ժողովուրդներ. Նորա օրէնքներն անփոփոխ ու յաւիտենական են, նոցա առաջ բաց սրտերը վարձատրուում են միշտ, նոցա համար փակ սրտերը պատուհասուում են։ Մենք Աստուծուն այդ օրէնքներից գիտենք։ Ով ստեղծեց ալիքները, ով հրաման տրաւ երկնից լուսաւորներուն միշտական հերթով գոր ու գիշեր լուսաւորել, ով բաժանեց գիշերը ցերեկից, աշխատանքի ժամերը հանգստաւորման ժամերից, ով տարուայ հրաշալի յաջորդական անխախտ եղանակները սահմանեց, ստեղծեց կենդանական թագաւորութիւնը ապրելու զգալու համար և բուսականը՝ վայելելու համար. ով սահմանեց կեանքն ու մահը։ Բայց մանենք մարդու հոգեկան աշխարհը. ով դրեց մարդու կրծքի մէջ արդարութիւն, փոխադարձ սիրոյ, կատարելութիւն, յուսոյ և նման զգացմունքները. ով պահապան դրեց մարդկանց գործերի վերայ խղճի հզօր ձայնը։ Մարդիկ. բայց մարդկանց խղճուկ խելքով կազմուած օրէնքները փոփոխական են, կարճատև են, այլ չեն յաւիտենական արդարու-

թեան, սիրոյ օրէնքները. չէ՞ յաւիտենական մարդկային խիղճը. չէ՞ յաւիտենական սիրոյ զգացմունքը։ Թերահաւատները գուցէ կասեն թէ «պատահմունք՝մէ այդ». բայց մի՞թէ պատահմունքի մէջ որոշ խելացի կարգ կարող է լինել. պատահմունքը օրէնք չունի։ Նորահաւատներն էլ գուցէ կասեն թէ «բնութեան այժն է որ յառաջ է բերել այդ ամէնն». Աստուծուն «բնութեան այժ» անունը տալով խոցոտի զլուխները կ՚կարծեն թէ աւելի հասկանալի բան ասացին քան թէ որ ս. Աւետարանի մէջն է ասուած. այդ թէ՞ այժ է որ յաւիտենական իմաստութեամբ լի է. թէ՞ այժ է որ բարձրագոյն ու անօրինակ գիտակցութեամբ կ՚գործէ։ Դա նոյն Աստուածն է, որի առջև ծունկ կ՚իջնի ճշմարիտ քրիստոնեան, զէպի որը բացկատարած գոգոջուն ձեռքերով, յուսալից աչքերով կ՚ապրիլ թեամբ Աւետարանի ճշմարիտ աշակերտը։ Կանգնեցէք ձորակի ծայրերը մարուր ցօղով սրսկոյ առուակի ափին, զովացրէք ձեր կուրծքը նորա պաղ ջրով. զուք նորա սիրտը չէք տեսնում. բայց կարող էք ուրանալ թէ նա հեռուստը լերան լանջին ակն ունի, այն ակն է որ ապրիւր է թաւալում։ Այդպէս էլ արտաքին աշխարհը և մեր հոգեկան աշխարհի հանրամարդկային յաւիտենական

զգացմունքները չոշափելով ու տեսնելով ամէն օր, ամէն ժամ, ամէն վայրկեան, կարող ենք ուրանալ թէ այդ ամէնը հեղինակ ունի, բղխող ակն ունի, եթէ յիրաւի մենք աչք, սիրտ և խելք ունինք։

Այսպէս անարատ, բնական մարդու համար հաւատից առաւել հասկանալի բան չկայ։ Հաւատի զգացմունքը խառնուածքն չդիտէ. նա դարպասում է ամէնքի կուրծքը՝ ազգաստի և հարստի, անգէտի և ճշմարիտ գիտունի, գիւղացու և քաղաքացու, մանկան և ծերի։ Դա ամէնքին մատչելի գանձն է, իսկ արենակիցներին միմեանց հետ կապող ոսկէ օղն է։

Եղել էք դուք երբեմն գիւղացու արտում. տեսել էք դուք վաստակաւոր գիւղացուն մանդաղով հնձելիս իւր ցորենը։ Նա հնձում, բուռ-բուռ գնում է հնձածը։ Երբեմն յանկարծ բարձրանում է հոգմ, ցրում է վնջերն արտի երեսով. հնձուորը վազում ընկնում է նոցա հետից և ի մի հաւաքելով կեմի (խոտից սղրած պարան) վերայ գնում խուրձ է կապում։ Այնուհետև թող սղրան ուզէ բամին պլսել խուրձը, նորա հասկերն ամրացած են կեմով, ոչ մէկը չի կորչի։

Հայ եղբայրներ, բաժան բաժան հայու միութեան կապը հայու հաւատն է. դարաւոր

ժամանակներից ի վեր կեանքի շարագուշակ հոգմերն ամէն կողմից փչեցին ու գլորուեցաւ հայկական խուրձը. սակայն նորա հասկերը չկորան։ Բայց եկան օրեր (մեր անդարձ կորչէին նորա) երբ անմիտ հայը կարել կամեցաւ այդ կապոյ օրը. հայու հաւատը, որ լուսաւորչու ձեռքով էր ոլորուած, և հոգմերը գիշակեր հաւքերու պէս ասան գլորեցին ու տարան հայոց բակուած խրձի հասկերը և անխրատ հայը գինովցածի պէս գլխու չի ընկնում թէ, իւր գրիւր, իւր կորուստը, իւր բարոյական ու նիւթական անկումը կրօնի, հաւատի կապն արհամարհելու մէջն է։ Աշխարհիս դարձուցէք գէպի Վան և այլ դաւառներ ու տեսէք թէ ինչպէս ազգային հաւատի անտարբերութեան հատած հայն իւր ամբողջական կապը կտրելով ոսկով կ'ծախէ, ու հայութեան մնաս բարով կասէ։ Գուցէ կասէք «քաղցն է որ կ'ստիպէ». բայց դա չէ արդարացնում. աստծին ժողովրդի համար հաւատը գօրեղ է քաղցից, գօրեղ մահու ատգնապից։ Դատն է այս ճշմարտութիւն և առաւել դատն, երբ այսօր Վարդանանց նահատակաց յիշատակին կ'ապօթենք, երբ «Հաւատոյ զինուր վառեալ Մամիկոնեան գօրավարին» կ'ասենք ու Աւարայրի արիւնը գոգուած ու ամրացած հայու հաւատի կապը կ'արհամարհենք։

ճանճին մէկը մարուր օդի մէջ կ'լողար, կ'կայտառէր. մէկէն ի մէկ խելքին փչեց հետեւալը. «Է՜հ, ձանձրացայ այս օդի մէջ ազատ շրջելէն, գնամ այս մօտակայ տունը մտնեմ» և մտաւ մի կիսաբանդ մէջին աւերակ, ուր սարդը պատի անկիւնում իւր ոստայնն էր հիւսում։ Մօտեցաւ անմիտը և իւր թեւերով կպաւ ոստայնին։ «Օ՜ֆ, ինչ փափուկ անկողին է, ասաց, այստեղ պառկիմ, այս է իմ հանգիստ»։ Սարդը որ՝ դարան մտած ճանճին էր սպասում, հէնց որ տեսաւ թէ ճանճը ոստայնի մէջ բռնուեցաւ, վրայ թռաւ, իւր խայթոցը նորա սիրտը խրեց, ծծեց արիւնն ու ցամքեցաւ ճանճը։ Հայու համար Հայոց եկեղեցու ազատ ու ազնիւ օդը ձանձրալի թուաց, նա օտար աւերակների ոստայնը սիրեց և արնքամ եղաւ։

Հաւատով մարդը բոյն ունի, հաց ունի, սիրտ ունի, թերահաւատ մարդը բոյն չունի, թափառաշրջիկ է, հաց չունի, սիրտ չունի։ Սրան առաքինութիւնները հաւատի հնոցումն են ձուլուում։ Որն է թերահաւատ ազգի վերայ նայեցէք. նախանձի՝ որ խայթոց, ատելութեան՝ որ թոյն, չարութեան՝ որ եղջիւր, շարախօսութեան՝ որ ամոլ, գրպարտութեան՝ որ կարկուտ, ոտութեան՝ որ կայծակ չեն տեղում, չեն թափւում այնտեղ։ Այսպիսի ժողովուրդ արդարու-

թեան օրէնքով զրկուում և՛ երկրաւոր և՛ երկնաւոր դրախտից։

Յիշեմ Սրբազան պատմութիւնից մի դէպք, ուր փրկարար ու յաղթական հաւատի ոյժն է փայլում. Ս. Գրքի այդ փոքրիկ պատմութիւնը հազարաւոր տարիների փորձն ու իմաստութիւնն իւր մէջն ունի։

Իւր պատանեկական օրերու հաւատով զօրեղ և Աստուծուն սիրելի Սաւուղը թագաւորութեան վերջին տարիներում թուլացաւ հաւատով, պապաւ տարիութիւններից, վախկոտ, կասկածոտ դարձաւ։ Իւր ժողովուրդն էլ պակեցաւ հայրենի տաճարի սիրուց, հաւատից, օտարաստէր դարձաւ, դուարճութիւնների հաճոյն ընկաւ ու անարի եղաւ։ Փղշտացիք Իսրայէլին խորտակելու յարմար վայրկեան համարեցին և Սաւուղի վերայ պատերազմ եկան։ Երկու թշնամի ազգ բանակ են դրել իրար դիմաց։ Փղշտացոց բանակից մի փղշտաձև հսկայ ամէն առաւօտ դուրս է գալիս կանգնում Իսրայէլացոց առաջ հեգնանոսի անզուսպ խօսքերով անարգում նոցա ու նոցա Աստուծուն և իրեն հետ մենամարտոց է պահանջում։ Սաւուղն ու իւր զօրքը, որոց սրտում նախնեաց հզօր հաւատը թուլացել էր, որոց հոգու մէջ փառքի նախանձախնդրութեան հուրը չէր բորբքուում,

ան ու դողի մէջ էին կոպիտ Փղշտացու առաջ, որի հետ բարոյապէս մաշուած Իսրայէլը կռուելու հերոս չունէր։ Բարեպաշտ Յեսսէի պատանի որդին՝ Դաւիթը իւր զինուոր եղբայրներին հայ էր բերել բանակը. պատահմամբ նա տեսաւ Փղշտացուն Իսրայէլի Աստուծուն անարգելիս։ Յաւէց պատանու հոգին, երբ տեսաւ թէ յոյսն ու հաւատն առ Աստուած այնքան պակսել է Իսրայէլացոց բանակում, որ հեթանոսի անարգանքը տանում են։ Հաւատացած լինելով թէ Աստուած կարող է յոխորտացող Գոլիաթին խորտակել նոյն իսկ պատանու ձեռքով, մի ոգորկ քար է գնում պարոատիկի մէջ վրայ վազում տհեղ Գոլիաթին. հաւատի քարը դիպչում է նորա ճակատին, հսկան վար փռուում աւանդում հոգին։

Բաւական է. յօդուածին կոչելով մեզ այսօրուայ ոսնելի ս. Նահատակաց հոգին, մօտենանք բարձրեալ Աստուծուն և սրբազան առաքելոց անուշ մրմունջով ասելենք «Ձէր, յաւել մեզ հաւատս» *)։

---

*) Դանիէլ Խօսուած է Օդեսայի Ս. Լուսաւորիչ եկեղեցում 1897 թուին, Ս. Վարդանանց տօնի օրը։

Գ.

Ի ԽՈՐՈՑ ՄՐՏԷ.

(Նուէր ճեմարանական կրտսեր ընկերներիս)

Նուիրական այս վայրում, ընկերասէր խաղաղութեան ծոցում, ինչպէս գիրգ մանուկ ծնողի գրկում, անցաւ և այս տարին ձեզ համար այն օրուանից, երբ ձեր անոյշ գեղգեղանքով առաջնորդեցիք մեզ դէպի Աւարայրի արիւնածիլ ծաղիկները։ Մատաղ եղբայրներ, ես չեմ մոռացել այն օր, երբ դուք հրաւիրում, տանում էիք մեզ դէպի Վանանդեցի երէցը, որի հոգեշունչ քարոզը քրիստոնեայ հայ կտրիճներ փակեց այն դաշտի վերայ և մեռան նոքա ինչպէս ցորենի հատիկը հողի մէջ, որպէս զի «բազում արդիւնս տանեն» ըստ աւետարանական բանին։ Բոլորեց տարին, կրկնեցիք նոյն հանդէս։ Քանի՞ յոյսեր, քանի՞ սիրելի երազներ չդարձեցին մեր անբջատ զրուխներում այն օր, երբ Վանանդի փառքն ու Աւարայրը կ՚դիտէինք, ունկնդիր կ՚լինէինք ձեր մատաղ կրծքի խընդիւնին այն հրաշալի տեսարանի առաջ և կ՚խոնարհուար մեր սիրտ ուրախութեան դգայմունքից, ինչպէս գալարին՝ գեղեցիկ առաջ,

ու մեր երևակայութեան մէջ կ՚պատկերանան թէ դուք այն արնալից գեղեցիկ էր աճել, թէ Աստուծոյ բաջաց ոգին իւր շնչով շօշափել է ձեզ։

Այսօր էլ նոյն միաբանական պատկառելի ուխտը եկել ու շուրջ բոլորել է ձեզ։ Ցեսել էր դուք ոսկեծղի արտեր թարմ առաւօտու զոհարներով պսակուած, օրօրուելիս մեղմ հովից վարդավառ արշալոյսին. կամ թէ ապամանդեայ, շողշողուն հատիկներ հերարձակ որթերի կուրծքը զարդարելիս։ Եւ տեսել էր դուք երբ սոսկալի շառաչիւնով բացուել է երկինք, մի ծայրից միւս ծայրը հոսել է մի հրեղէն գետ և՝ ինչպէս շոր տերև մրրիկի առաջ, թափուել է կարկուտ պերճ դաշտի վերայ. այն հպարտ հասկերը խոնարհուել և ուժաթափ փռուել են իրենց արմատների մօտ, արտը մերկացել է իւր հոյս հանդերձն ու լերկ դարձել և կանաչ-վարս որթերի գագաթները շոր զանգի փոխուել։ Ճիշտ այսպէս է այն միաբանութիւնն այսօր, որ խոցոտուած Յոբ երանելու նման հեռագնեալ առուել շարագոյն համբաւների է ոտասում և հոգմաթոր քշուում, ո՛ պիտէ, անյատակ ծովի մէջ թէ Յովնանի նման կէտ ձկների փորում գտնելու իւր գերեզման։ Բայց նա չէ լքանում. «Յոյս ոչ երբէք ամաչեցուցանէ» առաքելական բանը յոգնութիւն կոչելով, կրկին եկել է այսօր

յոյսերի այս վայրը սիրտ առնելու, մխիթարութիւն գտնելու։

Այս վիճակի մէջ էր և Հայոց ազգեղարու հոգևորականութիւնը հալածանքների ծովում ծփալիս և պշուցեալ բայց յուսալից աչքերով վանքերի պարիսպներից նեռս էր նայում թէ, երբ, երբ պիտի ճշմարիտ ազատութեան և անկախ հայրենասիրութեան սերմերն աճին, հասունանան և հոգեվարք հայրենիքին փրկարար այժ տան։ Ցեսան նորա իրենց վասակը. Ասուած Հայոց եկեղեցու քարերից Աբրահամի որդիք յարոյց, որոնք կարիչ Վարդանի առաջնորդութեամբ Տզմուտի ափերը կարմիր ներկեցին ի փառս Աստուծոյ, ի պարծանս հայրենեաց և ի պատիւ անձանց։ Ո՞ւշադ դեղեցիկ էր այն հանդէս, որ այսօր մեր առջև բացիք յանուն Վարդանայ և Սրբոց Վարդանանց։

Բայց, եղբայրներ, որչափ էլ մեր աստուածաբանները ջոկել անջատել ձգին հայրենասիրութիւնը կրօնից, եւ առաւել պիտի հաստատուիմ իմ հաւատիս մէջ թէ, հայրենասիրութեան հիմունքը Ս. Գրքի ընկերսիրութիւնն է և Հայու հայրենասիրութիւնը Հայոց վանքերի գաւիթներում է ծլել։ Վանքերի աշակերտ ու վանական Պարթև Սահակի լեզուն էր որ խօսեց. «Բայց գիտարդ լինիցի ինձ այդ փոխանակել

ղիմ ախտացեալ ոչխար ընդ այլում առողջ դաղանի». վանքերի աշակերտ Ղեոնդի շունչն էր հոգիացնում Ուարայրի քաջերին և շղթայակապ, այլ բայց ճակատով կսրալլուխ դաւաճանին շամփրում եռեփյը ձայն տալով «Եմէ դու, դաւաճան, կենդանութեամբ զգլուխդ ի վերայ ուսոցդ ի Հայս տանիս, ապա ընդիս Ցեռան Ասատուծոյ չէ խօսեցեալ». վանքերի աշակերտ կարմիր Վարդանի ձայնն էր որոտում վառքի դաշտում. «Հատատաուն կայէք, ով քաջք, յանշուշտ զօրալլուին մեր, երկիւղ թերահաւատութեան է նշանակ». վանքերի աշակերտ անուշիկ Եղիշէն էր, որ ազգային միութեան օրէնքը սորուեցուց. «Զուգութիւն է մայր բարեաց, անզուգութիւն ծնող չարեաց». վանքերի աշակերտներ էին անմոռան ու Գայլ Վահաններ. անվեհեր Մուշեղներ և հազարաւոր՝ հայրենասիրութեամբ լի առաքինի սրաեր և եմէ վանական պարտէզներից քաղուած այս ընտիր վենջին միացնենք Խորենացիներ, Փարպեցիներ և նոցա ընկերներ, որոնք տամուկ աչքերով վանքերի ապօտ անկիւններում դրեցին ու իրրև ժառանգութիւն թողին մեզ մեր անցեալը—, այն ժամանակ անհերքելի պիտի լինի, որ մեր ողնարութեան բուն ապրիւրը վանքերի դաստիարակն է բղխել, մեր ձգտումնե-

բին յարմար հերոսներ միշտ այն տեղերումն ենք որոնել ու գտել։ Այսօր և դուք վկայեցիք որ բռնաւոր Ցարկերաը առաւել խաչից էր երկնչում քան սրից և Հայոց զօրքին առաջնորդող խմբի մէջ Քառաթեն ու երէց Վանանդեցին էին փայլում։

Այսօր եթէ միաբանութիւնը նոյնը չէ, վիճակը նոյնն է. եթէ կարիքը նոյնը չէ՝ պահանջը նոյնն է, եթէ ալիքներն այլ՝ ծովը նոյնն է. եթէ զէնքերն այլ՝ պատերազմը նոյնն է և առաւել սոսկալի։ Եւ երանի՜ նոցա, որ պողպատի զէնքերով խոցեցին ու խոցուեցան ու ինքնազոհութեան ժպիտն երեսին թռան այս աշխարհից երկնից պռակն ստանալու, երկրի վերայ անանց փառք վաստակելով։ Ես չգիտեմ դեռ մի կորած ազգ, որի յիշատակը պատերազմի դաշտումը թառամած լինի, որի գոյութեան արմատը սրով կտրուած լինի, բայց գիտեմ, որ ազգային անտարբերութեան, անխնայութեան ծոցում շատ ազգեր իրենց գերեզմանը պեղեցին։ Եւ ինչ է այսօրուան մեր կեանք, եթէ ոչ անտարբերութիւն զէպի մեր սեփական կեանք, նոյնութիւն նկատելը հարազատ և օտար հոգի մէջ, անտարբերութիւն զէպի ազգային կրօնն, որի մէջն է միայն ազգային յառաջադիմութեան շարժող ոգին։

Մահաշունչ անտարբերության պատճառները բազմապիսի են, բայց գլխաւորն՝ ազգայնացած ստուածայինը չհասկանալու, շուսումնասիրելու և ճշմարտութիւնը օտարի աչքով տեսնելու մէջն է։ Ազգայնութիւն արհամարելու անբաժան հետեւանքը օտարամոլութիւնն է կամ առնուազն անտարբերութիւնն է. իսկ անտարբերության ապականուած հոգը միշտ ապանդաւորներ է հանում եկեղեցու մէջ, դաւանաններ՝ հայրենիքի ծոցում, որոց իդէալը կապոյտ երկերքից սահում իջնում է մինչև անդունդի ոսկին կամ առնուազն մինչև օտարի սարը։ Այսպէս են բազմանում այն գայլերը, որոնք մեր հօտի անդամ կոչուելով հանդերձ իրենց անդամակիցների մսոմն են յաղնում։ Անտարբերութիւնը իւր հետից քաշում բերում է նաև մօդայի անունով ապականութեան մի հեղեղ որի ալիքների տակն են թաղուում ազգային որոշ կեանք, սովորութիւն, սրբութիւն, աւանդութիւն և լեզուն։ Մէկ խօսքով անտարբերութիւնը ապականուած սրտի բնական բերքն է և ազգութեան վսեմ գաղափարների անդարձ կորուստն ու գերեզման։ Եւ այն օրուանից երբ այս ոգին և մեզ փակեց, բանաստեղծի խօսքով՝

«Փչեց քամին, եղան հովեր, սառեցաւ շունչը հայուն

Դառնահամբոյր դարձան դարեր, տարին ու կեանքը Հայուն
Խորշակահար ինկաւ գետին Նարգիզ, Ջուշանը Հայուն,
Գլխիկն ի կոր, թերթն ի թփին կենսատու Վարդը Հայուն»։

Այն, անտարբերութեան խորշակը դարկեց թոթափեց ու թառամեց Հայու Վարդ, Նարգիզ ու Ջուշան. Նորա ոգին իբրև մի մահաշունչ քոյր ծածկեց մեր կեանք. և մինչև հնարաւոր է Նորա տակից նախնեաց ոգեորութեամբ անձնապիր քաջեր սպասել։

Ահա այն սոսկալի թշնամին, որի դէմ պիտի կռուի ժամանակակից զինուորը, մի զինուորութիւն, որ ընտրեալներին է պահուած։ Բայց ո՞ւր են ընտրեալները. երբ, ա՜խ երբ պիտի Աստուած մշակներ հանէ ի հունձս իւր։ Արդարև ազգի կարիքն ու օգուտը դպրոցներ են ծնում և դպրոցի քարոզիչները շատ են, բայց ա՞յդ են դրա եղէ, ոչ անտարբերութեան զաւակներ, հեշտակեցութեան և արծաթի մոլեալ երկրպագուներ, որոնց քարոզը մի անհոգի ձն է, զուրկ սրտի անկեղծութիւնից և նոցա խօսքը ծաղր է առաքելի քարոզած վեհ ճշմարտութեան, «Զի ոչ եղէ բանիւք է արքայութիւնն Աստուծոյ, այլ զօրութեամբ»։ Ուստի, ուստի ակնկալէ ազգային անտարբերութիւնն ոդրացող Հայրապետն ու

պատկառելի միաբանութիւնն անտարբերութեան դէմ մարտող կարիճներ.....
Ուստի ակնկալ, միաբանութիւնը Պարիսի ձայնը վերստին լսել թէ՝ ճշմարտութիւնն այս է, որ իմ հիւանդ ոչխարը լաւ է օտար առողջ գաղանից։

Ձեզ, եղբայրներ, միայն ձեզ է մնում պատկել այս յոյսեր. զուր էր միայն ձեռնհաս այս նուիրական յարկի տակ քրքրել Հայու անցեալն ու ներկան և ճշմարտութիւնը այնտեղ որոնել։ Եթէ բաներ չեն այդ պերճախօս արտաբերութիւններն, որոնք սիրտ շարժելու չափ զօրեղ են, եթէ զօրութեամբ է այդ բառերն և ոչ «բանիւք», եթէ Ուարայրի հերոսներն իրենց բնակութիւնը ձեր սրտերումն են ընտրել, այն ժամանակ միաբանութիւնը կարող է համարձակ կրկնել. «Յոյս ոչ երբէք ամաչեցուցանէ» և առաքինի Նախնիք իրենց պատկը դէպի ձեզ մեկնելով երկնքից ձայն պիտի տան Մայր Սիօնին. «Զարթիր, զարթիր Սիօն և զգեցիր զփառս քո, զի ոչ յաւելցին այսուհետեւ անցանել ընդ քեզ պիղծք և անթլպատք»։

Կմնայ մեզ, Սրբազան հարք, սիրել այս ազնիւ ու անբիծ սրտեր, որոնք խոստանում են իրենց անձով պատկ կապել Սիօնի շուրջը.

աղօթել որ Աստուծոյ օրհնութիւնն առատանայ դէպի այս անպատանի վերայ։

Վարդանանց կարմիր յիշատակն անջինջ պահելով մեր սրտերում աղօթենք այս խորհրդաւոր վայրկեանին ամենից համար. «Աստուած, մերժեցեր և աւերեցեր զմեզ, բարկացար և գթացիս ի մեզ։ Մի ընկենուր զմեզ, Տէր, ի ժամանակս ծերութեան, ի պակասել զօրութեան մերոյ, մի լքուցուր զմեզ։ Երի, Աստուած և զատեա զդատաստանս քո, յիշեա զնախատինս մեր, որ յանդգնամայ զօրհնաստաղ.....» *)։

---

*) Ծանօթ. Խօսուած է 1896 թ. փետրուարի 1-ին Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանի հանդիսին ի յիշատակ Սրբոց Վարդանանց նահատակաց ի դիմաց հանդիսական միաբանութեան։

Ե.

ԳԷՈՐԳ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ՕՐՀՆԵԱԼ ՑԻԶԱՏԿԻՆ

Մեծ մարդու յիշատակի առաջն ենք կանգնած, օրհնուած յուշարձան, որի առաջ խորհող մարդու գլուխն է խոնարհուում։ Լաւագոյն զգացմունքների փնջեր ենք դնում այդ արձանացած անուան պատուանդանի վերայ։ Ցեղյեղուող զգայմանց ալիքը քշում տանում է մեզ դէպի խոհականութեան խորունկ ծովը, որի ափին մեծ մարդիկն են պատկերանում։ Դաքա բոլորն էլ գէմքով նման, տարբեր են միմեանցից իրենց հանգերձներով միայն։ Մէկը լայն վերարկուն հագած, բոբիկ ոտքով ու գլխաբաց իւր աչքը դէպի մութ ապագան է սեւեռել. դա մարգարէ է։ Միւսը՝ խաչակիր հսկայմէ, կրծքին աւետարան է սեղմել. շրթունքներից կայծեր են ցայտում, որոնք վառում. դա քարոզիչ է։ Երրորդը ակօս-ակօս կնճիռներ է հանել իւր ճակտին, մտածմունքի մէջ է ընկղմուել, մարդու սկիզբն ու վախճանն է որոնում. դա փիլիսոփան է։ Մի ուրիշը գայիսոն ունի, գէմքից սարսափ է թափուում, որից յանցագործներն են սարսում. դա արդա-

բութեան գահը բազմած խաղաղութեան իմաստուն թագաւոր՝ մէջ և այլն։ Զատ են դրա, միմեանց նման, հաւասար սիրելի, հաւասար անմման։

Որքան և ձգտիր մօտենալու մեծ մարդուն, դուք չէք կարող հասկանալ նորան, մի հայեացքով տեսնել նորա ամբողջութիւնը. դա մի աշխարհ է, մեր աշխարհից մեծ, մի անհուն տարածութիւն, մի հանելուկ, որի լուծումն փոքր մարդու բան չէ, դան դի «Ոգիք մարդարէից մարդարէից միայն հնազանդ են»։ Այս իսկ պատճառով դժուարանում եմ ասել պնդապէս թէ ինչ է մեծ մարդ, բայց միայն այս թէ մեծ մարդը երկնային մի օրհնութիւն է, որ երկնքից է ուղարկուում աշխարհ, անհամ կեանքը համեմելու, այն է ինչ որ կոչուել է աղ երկրի։ Բայց կ'յօժարիմ ճշմարիտ մեծութեան էական յատկութիւններն յառաջ բերել։

Ճշմարիտ մեծը, որ աշխարհ է եկել տիրական շնորհներով, մարդկանցից սովորելու բան քիչ ունի, ուսոմ և մեծի նուիրական դպրատունն առանձնութիւնն է, գիրքը՝ բնութիւն, զրաղմունքը՝ դիտողութիւն. մեծն ինքն է իւր ուսուցիչ և ինքն իւր աշակերտ։

Յաւիտենական մի ամենապօր աջ օժտում է մեծին մտաց ամենաթափանց աչքով, որ

մարդկանց ապագան նախատեսի. սրտով՝ որ այլոց համար բարախի, գործով՝ որ այլոց համար գոհ ապա։

Մեծը ճշմարտությեան գինուորն է. իսկ ճշմարտությունը խօսքի և գործի ներդաշնակությունն է, մտքի և իրականության ներդաշնակությունը։ Նա խորապէս համոզուած է թէ ճշմարտությունն իւր մէջ առողջարար բալդամ ունի, մոլորությունը՝ թունաւուած թոյն. նա համոզուած է թէ առաւել հեշտ է կարծել որ թունաւորներն իրենց անպօր թեւերով արևի երեսը կ'ծածկեն, քան հաստատել թէ մոլորությունն ու ապիտությունը կարող լինեն ճշմարտությունը խափանել։

Մեծ մարդը հարթ հաւասար դաշտ չէ, ուր ամէն ձայն, ողբ ու կոծ, խինդ հառաչանք, գնում կորչում է անարձագանք, այլ լեռների ու հովիտների մի անհարթ տարածությունն, ուր ամէն ձայն զօրեղ արձագանքով է կրկնուում։

«Մեծի գլխում աշխարհն իբրև տեսությունն կամ վարդապետությունն գոյությունն չունի, այլ իբրև ջինջ պատկեր» ասում է մի իմաստասէր։

Բարքաք ու վեհ զգացմունք, մտքի վսեմ թռիչք, անսղղոգ կամք, ահա այն թեւերն

որ մեծմարդուն Ողիմպոսի լեռն են հանում, անմահ աստուածներին խառնում։

Տարօրինակ է մեծութիւն. իսկ ամբոխն ու թերաւսութիւն հալածում են ամէն գեղեցիկ տարօրինակութիւն։ Անմիջապէս անշնորհութիւնը փշէ պսակ է բոլորում շնորհալի մեծութեան ճակտին։ Սակայն մեծ մարդուն չեն սարսափեցնում ոչ Պասքալեանոսի տանջանքները, ոչ Լուսաւորչի թունալից վիրապ և ոչ Դանիէլի առիւծուց գուբ. վասն զի մեծ մարդու հոգին ապառ է, իսկ մարմինը նոյնքան օտար իրեն, որչափ մի արտաքին իր։

Մեծ մարդու վարձատրութիւնը գերեզմանի այն կողմն է լինում. գերեզմանի վերայ են հասանելում մեծի ցանած պտուղներ, ու յետնորդաց քիմքը քաղցրացնում։ Մեծ մարդը մահանում է որ յարութիւն առնի և անմահանայ, դարերի վերայ թագաւոր դառնայ։

Մեծերի հոգին ըմբռնող մեծ Կարլէյլն ասում է թէ. «Մեծ մարդիկը զարմանալի մարդիկ են և իսկապէս նոցանից առաւել զարմանալի ոչինչ չ'կայ։ Մարդու կրծքում աւելի ազնիւ զգացմունք չկայ քան հիացմունքը մեծութեան առաջ։ Անկումն ոչ մի ժամանակի չէր սպառնայ, եթէ այդ ժամանակը մեծ մարդ ունենար»։

Երդ՝, սանտանը ճեմարանի, ի գուճ, ի գուճ մեծուվեան և մասնաւորապէս հիմնադրի արձանացած մեծուվեան առաջ. դա ընտիր նախնեաց մեծուվիւնն է, որ ժառանգաբար մեզ հիմնադրին հասաւ։ Մերձեցէք մեզ մարդու քղանցքներին, թող նորա շունչը հոգի ձեզ։ Մեզ նախնիք վերն են մնացել, մեր ժամանակին անկումն է սպասնում. վեր նայեցէք նոցա ու բարկ հառաչանքով կարդացէք. «Հայր, հայր կառքդ Իսրայէլի և հեծեալքդ նորին, հանդիցէ հոգի քոյ ի վերայ մեր» և թող հանդչի ձեզ վերայ Մեծին Գէորգայ և մեզ նախնեաց հոգին ու հրեշտակները վերէն ձայն տան՝

Հայոց սպասնալիք չկայ,
Զի նոցա մէջ շատ մեծ մարդ կայ։ *)

---

*) Ծանօթ. Խօսուած է 1899 թ. Գէորգեան ճեմարանի 25-ամեայ յոբելեանին Ս. Էջմիածնի սեղանատանը կարգադրութեամբ հանդիսադիր Տեղապահ Տ. Երիստակէս Սրբազան Եպիսկոպոսի։

Պարտականութեան ծանր ու քաղցր լուծը չալակած, Հայ քրիստոնեայ համարիւն եղբայրներիս սիրովը թեւաւորուած, աչքս դէպի սիրասպակ Խաչն Յիսուսի, զոգոց բայլերով Տիրոջ Սրբազան սարն եմ բարձրանում. այս Սրբազան սարի լանջէն թոթով լեզուով Տիրոջը խօսքը պիտի բարոգեմ ձեզ, քրիստոնեայ Հայ եղբայրներ։ Երեակայութեանս առաջ յոյսերի ծաղկով ցանուած մի աշխարհ է բացուում թէ դուք, իմ ունկնդիրներս, մեծի պահոց խորհրդաւոր օրերում լայն սրտով, լայն հոգով կ'լսէք ձեր եղբորը։ Ակնկալեցէք, որ կենդանի խօսքի հոգեղեն վարդապետը այժ տայ իմ տկար ձայնին, որպէս զի անարձագանք չկորչի նա, այլ ձեր լսելիքից խաղաղ հոսանքով ձեր սիրան թջնի, սիրոյ խարոյկ վառէ, յուսոյ ալիք յուզէ, հաւատի վէմ հաստատէ ձեր կրծքի ներքն։

Զ.

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՄԻԱՑՆՈՒԹԻՒՆ

Երբ ես ուզում եմ քրիստոնէական կեանքի ճանապարհը ցոյց տալ, որ տանում է դէպի վեր, դէպի կատարելութիւն, դէպի երանական մէկ վիճակ, ուր ատելութեան տրիւրը սիրոյ բարկ արևից ցամքած է, ուր նախանձի ծառը ճղակոտոր թափուած ընկած է, ուր մարդկային վիշտը լռել, ժպիտն է ծաղկել, բռնութիւն ընկել, բարութիւն կանգնել, իմ առջևս այդ ճանապարհի սկզբում արձանանում է *Միայնութիւն* եւ *փոքրութիւն*: Ահա այն երկու դժուարանցանելի դարպասները, որոնցով քրիստոնեան կատարելութեան ճանապարհն է մտնում։

Առանձնութիւնը կամ միայնութիւնը երկու կերպ է լինում։ Դիշերուան սև շղարշը երկնքից իջնելով ծածկել է երկիր. հեռու գիւղից, հեռու իւր ընտանեկան օջախից, հովտի մէջ, վտակի ափին նստած է հովիւը։ Ոչխարները մակաղած լուռ են ու մունջ, ինչպէս գիշերուան բնութիւն. մարդկային ոչ մի ձայն, որ վտակի միապաղաղ կարկաչն ընդհատէ։

Միայն է հովիւ, բայց չէ միայնակ. նորա հոգու մէջ պատկերանում, արձանանում է հովուութիւն, իւր գաւակները, որոնց վարը տեսնելու անժխտելի յոյսն ունի։ Հովիւը միայնակ՝ սիրտը չէ միայն։

Լուսնկայ պարզ գիշեր. պայծառ լուսին իւր բիւրաւոր ուղեկիցներով խաղում է մարմանդ ծովի մանրիկ ալիքների հետ։ Ծովի խորքում լողում է մի նաւակ. միայն մի զոյգ հոգոր բազուկ առաջ է վարում նաւակը, փռում հանիւց լայն ուռկան. մարդկային ոչ մի ձայն, որ ընդհատէր թիակների եղ և էջը։ Ձկնորսը միայն է, բայց չէ միայնակ. նորա երևակայութեան մէջ ժպտերես կանգնում են կինը և գաւակները, որոնց սէրը սիրտ է տալիս ձկնորսին, որոնց վիզը փարուելու յոյսը թև է տալիս նորան։ Ձկնորսը միայնակ՝ սիրտը չէ միայն։

Միայնութեան այս տեսակը արտաքին է, քաղցր է և չէ սոսկալի։

Երբ դու մարդկանց բազմութեան մէջն ես. ամէն կողմից ժպիտներ են փայլում քո աչքիդ առաջ, դու էլ ակամայ ժպտում ես. ձեռքեր են մէկնում և դու սեղմում ես. խօսում են՝ պատասխան ես տալիս. բայց ոչ ժպիտներ, ոչ սեղմումն, ոչ խօսքը բազմութեան չի կենդանացնում քո հոգիդ, համակրութեան կրակով չի

չի տաբայնում քո սիրտ. մարդիկ սիրտդ չեն հասկանում. ճնշուում է նա պատռուել ուզում։ Դու այդ բազմութեան մէջ իսկապէս միայնակ ես, միայնակ ու թշուառ։ Շուրջդ լիք մարդիկ՝ սիրտդ է միայնակ։

Ահա թեզ մեծատան ապարանք. բազմաթիւ աշտանակների պայծառ լոյսը հեղեղել է ոսկեղէն պատեր, ոսկեղէն արդ ու զարդ։ Այդ լուսեղէն հեղեղի մէջ գահաւորակների վերայ սեղանների շուրջը բազմած են հարիւրաւոր մարդիկ. ցնծութիւն, ծիծաղ, պար, երգ, սէր, գինի միացել և կեանքի գուբեկան ժխորն են կազմել։ Դուն էլ այդտեղ ես. բայց կեանքի փրփրուն ժխորը յարութիւն չի տալիս պաղած սրտիդ. թեզ չեն հասկանում. դու միայնակ ես՝ ինչպէս անապատում։ Շուրջդ լիք մարդիկ սիրտդ է միայնակ։

Երբ յետ ես դառնում գերեզմաններից, ուր սրտիդ կէսը թաղեցիր, բազմութեան սուգը, ցաւակցութիւնը, խօսքը, ձայնը թեզ աւելորդ են թուում, անախորժ և անտանելի։ Եթէ այդ բազմութեան աչքը լուսոյ ճառագայթի պէս թափանցէր կրծքիդ մէջ, այն ժամանակ կ՚տեսնէր միայն թէ սիրտդ իսկապէս միայնակ է։ Այո, շուրջդ լիք մարդիկ՝ սիրտդ է միայնակ։

С.-ПЕТЕРБУРГСКАГО СОБР. БИБЛІОТЕКА

Ահա այս տեսակի մենակությունն է բարոյական մենակությունը, երբ քեզ չեն հասկանում, երբ սիրող միայնությունից ցամաքում չորանում է և մերթ յուսաբեկությամբ փչերով խոցոտում հոգիդ։ Այն, որի մենակությունը բոլոր մենակություններից առաւել սոսկալին է։

Սորանից փոքր ինչ տարբեր, առաւել դան բայց և առաւել վսեմ է քրիստոնէական, դպրապարական միայնությունը։

Ամէն մի նորածիլ ճշմարտությունն, որ դեռ ծառ չի դարձել, անթիւ ճիւղ ու լայն տերև չի փռել իւր շուրջը, տեսանելի չէ ամբոխին. վսեմագոյն մարդիկն են միայն, որոնց աչխարհ է ուղարկում Բարձրեալի հոգու Աջը, որոնք ճշմարտությունը իրենց կրծքի մէջ տրնկելով աչխարհ են գալիս. նորա սիրոյ ծագիկ ունին իրենց ձեռքում, որի անոյշ հոտից առաւելության ժանտախտն է խուսափում. նորա ճշմարտության մուրճ ունին, որի ամէն մի հարուածից մոլորությունն ու կեղծիքն է դողում։ Բայց նոցա քարոզը անլսելի է մնում, ինչպէս անբնակ անապատում արձակուած մի ձայն։ Այս դեռ քիչ է։ Սիրոյ և ճշմարտության հերոսների դէմ կանգնում է կոյր ամբոխի նախանձը, բուռն առեղծություն, հալածանք, ծաղր, անարիւն սանջանք, որ շատ անգամ նահատա-

կութեան վարդ արիւնով է պսակու

քեալը որ Հռոմի բանդում իւր թուղթն այս սրամամաշ խօսքերով էր վերջացնում «Ամէնքն էլ թողին ինձ ու հեռացան»։ Միայնակ էր վաթսուն հազար ժողովրդի առաջնորդ հզօր Մովսէսը, որի սիրտը չէր հասկանում Եգիպտոսի սոխ ու սխտորի սիրահար ապերախտ ժողովուրդը....

Ցիրաւի երբ ճշմարտութեան սերմերն ընձիւղ տուին ու որբոց կերեզմանների վերայ ծառ դարձան, բիւրաւոր հալածողների շրթունքներից տար տար համբոյրներ տեղացին նոցա նշխարները գրկող սուրբ հողերի վերայ. իսկ մինչև այդ միայնակ էին նոքա, միայնակ ու նկուն։

Բայց այդ բոլոր միայնութիւնները նսեմանում են բացարձակ միայնակ Փրկիչ Յիսուսի միայնութեան առաջ։

Տիեզերքից առաւել լայն սիրտը լցրել է անհուն բարութեամբ, երկնքի մարգարիտներով, շրջում է Հրէաստանի բարձունքների վերայ, տաճարներում ու դաշտերում. Նորան խառն բազմութիւն է հետևում ամէն տեղ. նա աշակերտներ ունի, որոնք սիրում են Նորան. բայց միայնակ է նա. ոչ ոք կ'հասկանայ Նորա սիրտ։ Գեթսեմանիի ալեկոծուած ծովի վերայ նաւակում քնած է նա, երբ արթուն աշակերտ-

ները վտանգի բերանում մեղադրում են Նորան, ափսոսում որ Նորա խոսքերին հաւատալով աշակերտ դարձան և այժմ խեղդուում են, տրրանջում են Նորա դէմ։ Նա աշակերտներ ունի բայց միայնակ է։

Միայնակ էր Նա անապատում, միայնակ էր Նա Գեթսեմանի պարտիզում արտասուագին աղօթելիս, միայնակ էր Նա մատնուելման գիշեր, երբ սիրելիքն անգամ թողին ու փախան, միայնակ էր Նա քառաթեի վերայ տարածուած ժամանակը։

Այս կատարեալ միայնութեան մէջ աշխարհի հրապոյրը չխախտեց Նորա կամքը, աշխարհի փառքի առաջ անշարժ մնաց, կեանքի դեռը չկարողացաւ քշել Նորան. Նա անդրդուելի մնաց իւր ցաւերի մէջ ու անմման հերոսութեամբ պաշտպանեց բան երկնքի լուսաւորները պայծառ վսեմ դաղափարները։ Այսպիսի հերոսական ու սուրբ մարտման ժամանակ, այսպիսի կատարեալ առանձնութեան մէջ Նա տեսնում էր Երկնաւոր Հօրը միայն. «Հայրն ինձ հետ է» ասում էր Նա, աղօթքով խօսում Բարձրեալի հետ ու Նորանից իբրև մարդ քաջալերութիւն ստանում։

Արդ, հասկանալի է թէ ինչ է քրիստո-

նէական առանձնութիւնը, քրիստոնէի միայնութիւնը։

Իմ պատուական ունկնդիրներ, հաւատում եմ թէ դուք քրիստոնեայ էք և ուրեմն ունիք միայնութեան ժամեր, ունիք սուրբ առանձնութիւն, երբ ձեզ չեն հասկանում և դիտէք տանջուել միայնութեան մէջ։

Քահանայ եղբայր, երբ սրտիդ մէջ ժողովրդասիրութեան ծառը բարձրանայ, ճիւղաւորուի, տերևակալի ու դու կամենաս փռել գայն քո հօտիդ վերայ բայց նա չհասկանայ քո սիրտ և ինքդ միայնակ մնալով վհատիս, սպասես սէրը կրծքիդ մէջ և փոխանակ սուրբ միայնութեան մէջ տանջուելու և աղօթելու, շահերիդ համար գնաս ու խառնուիս մարդ ամբոխին, դու թէ և փիլոնապարդ թէ և խաչակիր, բայց չես քահանայ։

Քոյր իմ, հայ տիկին, երբ մայրական կոչման հաւատարմութեանդ մէջ սիրտդ չհասկանան, առաքինի հոգիդ չգնահատեն նորա, որոնց համար ապրում ու շնչում ես և դու վհատիս ու տանջանքներով լի ս. միայնութիւնդ թողնես, մոռանաս աղօթել և զուարճասէրների ժխորի մէջ ուզենաս թաղել քո ցաւդ, դու թէ և զաւակների տէր, բայց դու չես լաւ մայր։

Հայ քրիստոնեայ շնորհալի օրիորդ, երբ ս. առանձնութեան մէջ նորաբաց աչքով մատաղ կեանքի զարթած առաքինութիւններդ պաշտպանես ընդդէմ արագաթափ զգայմունքների, միայնակ զգաս քեզ և միայնութիւնդդ անժամանակ նեռուիս կեանքի փրփրուն գեռը, դու թէև օրիորդ, բայց շես քրիստոնեայ հայ օրիորդ. հաւատա՛ ինձ, որ մեռաքսի մէջ ծրարուած, զուարճութիւնների յորձանքներում պատուսների երջանկութիւնը հէնց առաջին մեռաքսի հպումի հետ կ'ը մաշուի և կեանքի մնացեալ տարիների համար կ'մնայ լոկ հիասթափութիւն և յուսահատութիւն։

Հայ մարդ, հայ ժողովուրդ, երբ տեսնես թէ աշխարհը քեզ չի հասկանում, սուրբ առանձնութիւնը ծանր թուի քեզ և դու փոխանակ հայ քրիստոնէի առաքինութեամբ տանջուելու և ապրելու, աշխարհական գեռերի մէջ թաղես քո յուսաբեկ գլուխը, վա՛յ քեզ, դու կ'մնաս զուցէ մարդ, ժողովուրդ բայց ոչ երջանիկ մարդ և ոչ հայ քրիստոնեայ ժողովուրդ։

Քրիստոնէական ս. միայնութեան մէջն է երջանկութեան և երկնքի թագաւորութեան առաջին բոյլը. այդ միայնութիւնը սուրբ պահեցէք. ապրեցէք և վստահ եղեք թէ ձեր արցունքաց աչքերին յանդիման կ'գայ Երկնաւոր

Հայրը, որ ձեզ սիրա կ'տայ, կ'քաջալերէ, ու կ'քաղցրացնէ ձեր միայնութիւնը։

Ապաշխարութեան առաջին դասը թող քրիստոնէի ս. միայնութիւնը լինի ձեզ համար. իսկ յաջորդ քարոզով ես փորձութեան դասը կ'բացխեմ։

---

*) Ծանօթութիւն. Խօսուած է 1904 թ. Մեծի Պահոց երկրորդ Կիրակէին Ջուչու Եղուլեաց Մայր Տաճարում։

Ը.

ՓՈՐՁՈՒԹԻՒՆ

„Եթէ չեմ իմ ուսանողաց զայրագոյութիւն իմ եմ։"

Քրիստոնեայ Հայ եղբայրներ.

Հիացմունքով լցուում է քնուիթեան լեզուն հառկացող, նորա վիրկին ամփոփուող մարդը։ Հիանալի չէ՞ արդեօք, երբ տեսնում ես գլխիդ վերև փռուած մի անսահման կապուտակ, անջուր ծով, որի միջով ամէն օր իւր քնարանիցը վեր է կենում վարդագոյն արեւակը, շաղ է տալիս աշխարհի վերայ իւր ոսկեղէն վարսերը և լողալով երկնակամարի մէկ ծայրից միւսը՝ վերջապէս նորից իւր քնարանն է իջնում։ Հիանալի է այն։ Բայց երկու կետ կայ արևի ճանապարհի վերայ, երկու կայարան, որոնցում նա կատարեալ հրաշալիք է գտնում. այդ նորա ելքն ու մուտքն է, երբ արևելք ու արևմուտք, երկնքի այդ ծայրերը՝ հրդեհով են բռնկուում և այդ բոցավառ հրդեհի մէկի միջից՝ ծնուում, իսկ արևմուտքում մի բոցավառ ժպիտով թաղչում է նա։ Այս երկու հրաշալի տեսարանի առաջ ծունկ են իջել, աղօթել են թէ հին և թէ նոր ազգերը։

Հիանալի է Փրկիչ Յիսուսի կարած ապարէզն այս աշխարհի վերայ, Նորա կեանքը մարդկանց կեանքի մէջ. բայց հրաշալի է Նա իւր շարատանջ կեանքի երկու կեանում, երկու կայարանում։ Դեռա են անապատի փորձութիւն և Գեթսեմանի պարտիզի արտասուպին ապօթքը շարշարանքից առաջ։ Անեռարանի և ոչ մի տեղում Նորա կատարեալ մարդկութիւնն ու կատարեալ Աստուածութիւնն այնպէս պայծառ չի երևում իմ աչքում, ինչպէս փորձութեան անապատում, Գեթսեմանի տանջանաց և ապօթքի պարտիզում։

Իմ պատուական ունկնդիրներ, հետևեցէք ինձ հաւատի աչքով, ես ձեզ փորձութեան անապատը պիտի առաջնորդեմ, որ հրեշտակ Յիսուսին այնտեղ տեսնէք։

Յորդանանի մկրտութեան ջրերը ցօղում լուանում են Նորա մարմինը, իսկ հոգին, սիրտը, որ ջրով չի լուացուում, մաքրութեան է կարօտ, փորձութեան կրակ պէտք էր, որ վառեր այրէր Նորա հոգու մէջ մարդկային ակարութիւնը, թուլութիւնը և այնտեղ Աստուածամարդը յաջողական դրօշակով կանգնէր շարութեան առաջ։ Եւ ահա Նա իւր հետն է թողնում երանութեան սարի ծայրագագաթը,

Գենեսարէթի ծովակի ծիծաղկոտ ափերը և գնում է անապատ։

Եբիբովի արիմտեան կողմում, այրուած անապատի մի հարթութեան վերայ ցից ցից ժայռերով բարձր կանգնած է մինչև այսօր մի մերկ և անպտուղ լեռ։ Նորա սարտուում մութ փայլով երերուում են մեռեալ ծովի դառնահամ ջրերը, ուր մի ժամանակ Սոդոմի քաղաքն էր լողում անօրէնութեան մէջ։ Այդ սարի, այդ ջրերի, այդ անապատի, լերկ ժայռերի վերայ կարծես երկնքի նգովքն է թափուել. մի տեղ որ յարմար է շաբ ոգիների բնակութեան համար։ Ահա այդ սարն ընտրեց Փրկիչը իւր առանձնութեան, իւր աղօթքի համար, որպէս զի ս. միայնութեան մէջ իւր Սրբազան Առաքելութեան գործը կազմակերպէ։

Քառասուն օր նա ոչինչ չիերաւ, ասում է ս. Աւետարանիչը և ապա քաղց զգաց։ Զէ այս այլաբանութիւն և ոչ կասկածելի զարմանք. երբ մարդու հոգին սատակ լարուած է, զգացմունքները փրփրած, մարդ քաղց չի զգում։ Ուստիկ է այս, հարցրէք ամբողջ հոգու խորքում վշտաւոր մարդուն. որի միտքը կամքը, զգացմունքը օրերով սիրելու գերեզմանից չեն հեռանում. հարցրէք պատերազմի դաշտում վաստաբշալոյսից մինչև արեւի յետին շողը կռուող,

իւր մարմնի հոսուն արիւնը չտեսնող, վէրքերի ցաւը չ'զգացող գինուորից, որ չգիտէ քաղցն ինչ է։ Բայց.... բայց երբ հոգու ոյժն սպառուում է, սոսկալի է դառնում մարմնի պահանջը. այդ վայրկեանին քաղցածը իւր կեանքը կ'տայ մի կտոր հացի համար, ծարաւը՝ մի բաժակ ջրի համար։

Քառասուն օր հոգեկան սրտամաշ լարումից յետոյ Փրկիչը սաստիկ քաղցում է։ Այդ վայրկենից ահա օգտուում է սատանան ու գալիս է Նորան հաց առաջարկում. «Ի՞նչ անմիտ բանէ մարերի ալիքներով տարուբերուել, երկնքի թագաւորութեան խնդիրներով զբաղուել ու տանջուել. տա այս քարերին թող հաց լինին, թէ համար հաց պատրաստիր կեր և մարմնդ պահիր»։ Աւանդութիւնն ասում է, որ փորձութեան սարի ցցուած ժայռերը Սողոմի օրերու քարացած հացերն են։ Սոսկալի քաղցի վերայ այս աւանդութեան յիշողութիւնն էլ բորբոքում է Փրկչի երեսակայութիւնը և բորբոքում քաղցի զգացմունք։ Նա, որ Իսրայէլի քաղցած ժողովրդին մանանայով կերակրեց անապատում, Նա կարող էր անշուշտ և իւր համար ուտելիք ճարել։ Բայց փորձութեան դեր հացի գնով ուզում էր վսեմագոյն խոհերն ու սրբազան գաղափարները մոռացնել տալ, մարմնի պահանջը

յառաջ մղելով, հոգու պահանջներն էր ուզում մեռցնել։ Ի՞նչպէս պէտք է ամօթամտար անել շար ոգուն, երբ հացի գնով կամենայ մեր սիրան ապականել, Փրկիչն իրրև մարդ սովորեցրեց մեզ շարին պատասխանելով. «Ո՛վ շար, միայն հացով չի ապրում մարդ, իսկական կեանք ունենալու համար Աստուծոյ խօսքն էլ պէտք է»։ Ով շարութիւն. մարդը մարմնեղէն և հոգեղէն է, եթէ մարմինը հացի պահանջ ունի, հոգին էլ առաքինութեան, միայն մարմին պարարելով սիրտը երջանիկ չի լինի. երջանիկ են այդեօք ճոխութեան մէջ թաւալուող մարմնասէրները. բայէ՛ք նոցա կուրծք նոցա կուրծք ու նոցա սև սիրտը տեսէ՛ք։

Այս առաջին փարձութիւնից ամօթամտար շարը օգտուելով Փրկչի խօսքերից թէ Աստուծոյ խօսքերով կարելի է ապրել, կամեցաւ մոլորեցնել նորան հպարտութեամբ. «Հա՛, լաւ, եթէ Դու այդքան յոյս ես դնում Աստուծոյ վերայ, ուրեմն ցոյց տուր որ Դու Աստուծոյ որդին ես, ցոյց տուր որ յիրաւի Աստուած քեզ կ՚պահի, ընկիր այս բարձրութիւնից և թող հրեշտակները չեմոլնեն, որ քո ոտքդ քարին դիպչի»։—Գրուած է, ով շարոգի, թէ ինչքան և արժանաւոր լինիս չ՚հպարտանաս, անձնապաստան չ՚լինիս ու չփորձես քո Տէր Աստուծուդ։

Մի երեք տասանան այժմ մտնենում է Փրկչին մարդու բնութեան մի ուրիշ թոյլ կողմից, շահասիրութեան և անտարբերութեան կողմից. նա Փրկչի առաջն է բերում ամբողջ աշխարհի թագաւորութիւնն և ասում է, «եթէ ինձ երկրպագութիւն տաս քեզ կ'տամ այս բոլորը»։ Ի՞նչ կար այդ աշխարհի մէջ. թագ ու գայիսան, հոկայական ապարանքներ, ոսկի և արծաթ, խնճոյքներ ու կանայք և այն, վերջապէս այն ամէն զուարճութիւն, ինչ որ մարմնական զգացմունքների ծնունդ է։—Այն, երկրպագութիւն տուր ինձ, աչքերդ դարձուր առաքինութիւնից և ես ամենը քեզ կ'տամ»։

«Բայց այս բոլորն առանց առաքինութիւնների, առանց վսեմագոյն սիրոյ, առանց հաւատի և յուսոյ, առանց ապօթքի և ոգեղէն արցունքների կարող են կատարեալ երջանկութեան ծաղիկ ցանել իմ հոգու մէջ» անշուշտ մտածում էր Փրկիչը։ Այդ վայրկենին Նորա տարակուսած հոգում կռուում են շարն ու բարին, սատանան և Աստուած։ Վերջապէս Նա վճիռ է դնում. «Գրիր սատանայ, գրուած է թէ միայն քո Տէր Աստուծուդ երկրպագիր և միայն Նորան ծառայիր»։

Երբ Նա փորձութեան մէջ տարակուսում ու տանջուում էր կատարեալ մարդ էր, իսկ

երբ յոպիական վճիռը տուաւ նա Աստուած էր, սատանան խոյսն չբացաւ և հրեշտակներն երկնքեն ու սկսան պաշտել նորան։

Հէնց այդ ժամանակ ապրում էր մի մարդ, որ ծէր էր ամբողջ աշխարհին. անսահման հարստութիւն, անսահման իշխանութիւն, անսահման զուարճութիւններ. ահա այն դիտելն, որոց մէջ լոպանում էր ամէն օր Հռոմի հղօր կայսրը Տիբերիոս։ Փորձով սատանան յոպիանակ էր տարել նորա վերայ. բայց երջանիկ էր նա։ Պատմիչն ասում է թէ, ամենաաղուր և ամենաթշուառ մարդն էր. իսկ ինքը մեկուութեան, անձնահաճ մոլի զուարճութեանց ծոցից գրում էր իւր ապականուած ծերակուտին «Ո՞ն թող Աստուածները ինձ միանգամից ոչնչացնեն, աւելի հանգիստ կ'լինիմ քան թէ այժմ. ես ամէն օր զգում եմ որ քայքայուում և աւելի եմ թշուառանում»։

Փրկչի տնուան կողքին յիշեցի շարութեան այս երկրպագուին, որպէս զի փորձութեան զարափարը պայծառ լինի։

Արդ, քրիստոնեայ հայ եղբայրներ, Փրկչի տուած փորձութեան դասը ձեր առջեն է. քրիստոնէի իսկական նշանակութիւնը հէնց նորանումն է, որ օգտուի աւետարանական դասերից։

Ոչ ոք իւր կեանքի մէջ ազատ չէ փոր-

ձուլիթիւնից և մանուկ և աշակերտ և մարդ և կին և օրիորդ և քահանայ. ամէնքի սրտի դուռն էլ բացվում է սատանան, փորձուլիանայս գիր։

Երևի կ'հարցնէք, ուր է սատանան, ով է տեսել սատանային. ես ոչ տեսելեմ և ոչ էլ տեսնողներից եմ լսել նորա նկարագիրը, բայց նորա ազդեցուլիւնը և ինձ և ամէնքիս յայտնի է։

Ես խորասկէս համոզուած եմ թէ Աստուած մարդուն կատարելուլիան հասցնելու համար նորա կրծքի մէջ մի կռուի դաշտ է սահմանել. կռուողները մարմնի և հոգու պահանջներն են, շար ու բարի հակումները։ Բարի հակումները մարմնանում են մարդու երևակայուլիան մէջ հրեշտակի կերպարանքով, շարերը՝ սատանայի։ Պատերազմը հաշտուլիամբ չի վերջանում. կռուողներից մէկը անշուշտ պիտի յաղթուի, երկուքի համար բնակուելու տեղ չկայ մարդու կրծքում. (Ոչ կարէք ծառայել Աստուծոյ և մամոնայի). յաղթուում է բարին, հեռանում մարդու սրտից շարը իւր իշխանական ամբոխը դնելով մարդու կրծքում լիշու�առուլիան հեղեղ է կապում այնտեղ։ Պարտուում է շարը, բարու հրեշտակը պահպանում է առաքինի մարդու սիրտը և երանուլիան քաղցր խաղաղ երջանկուլիամբ լցնում մարդու կուրծքը։

Սակայն շար խոհերը մի կամ միատեսակ

չեն, այս պատճառով և շար սատանան դանագան կերպարանքով է երևում։ Փրկչի ցույց տուած օրինակով, շար գիր շարիք է գործել տալիս նախ՝ հայի գնով. երբ մարմինը հայ ունի փառքի է ձգտում, այս դէպքում փորձիչը փառասիրութեան զգացմունքով է մօտենում. երբ այս պահանջն էլ լրացած է՝ ագահութեան և գուարճասիրութեան պատկերով։

Եթէ մէկն ասի թէ, երբէք փորձող շար հակումով չի ալեկոծուել՝ սուտ է ասում. բոլոր սրբերից սկսած մինչև յետին մարդը փորձութեան ենթակայ են, գայթակղութեան են ենթարկուում. առաքինութեան յաղթանակը միայն այս է, որ մարդ կարող լինի շար հակումը խեղդել իւր մէջ, թոյլ չտայ որ գործ դառնայ։

Արդ՝, եթէ դու վաճառական ես և ուզում ես փող դիզել, քո փորձիչը կերևայ քեզ ամենահարուստ վաճառականի ձևով, կը սոփսրեցնէ քեզ հաշիւ կեղծել, խաբել, ստել սրբի և այրու կայքը սեփականել այլոց թշուառութեամբն յաղենալ. եթէ դու առաքինի վաճառական ես պատասխանիր. «Ե՛բթ յետս իմ սատանայ»։

Եթէ դու քահանայ ես, քո փորձիչդ կը-մօտենայ քեզ իբրև մի անհաւատ, շողոքորթող, որ անբաւ հարստութիւն է դիզել. կ՚ու զէ քո հաւատդ ճշմարտախօսութիւնդ սրտիցդ

հանել և տեղն արծաթի դնել. եթէ դու, առաքինի քահանայ ես պատասխանիր. «Երթ յետս իմ սատանայ»։

Եթէ դու փառասէր ես, փորձիչդ կ'գայ նախանձից ատամ կրճտելով քեզնից առաւել արժանաւորի դէմ, կ'սոսրեցնէ ատամներով պատառել նորան, լեզուով թունաւորել, որ դու միայն մնաս ու շնորհալու կոչին անշնորհ շերեաս. եթէ դու առաքինի ես պատասխանիր. «Երթ՝ յետս իմ սատանայ»։

Եթէ դու հայ տիկին ես, քո փորձիչդ կ'գայ ատամանդներով ցոցուած. կերպասներով ծրարուած կնոջ կերպարանքով և կուզէ զարդարանքների զնով մոռացնել տալ քեզ այն, ինչ որ կնոջ կոչման ծպիին է կոչուում. եթէ դու, առաքինի հայ տիկին ես, պատասխանիր. «Երթ յետս իմ սատանայ»։

Եթէ դու հայ օրիորդ ես, քո փորձիչդ կ'գայ գեղեցիկ երիտասարդի կերպարանքով, շրթունքների վերայ հրապոյրի կեղծ ժպիտը ցանուած. զգոյշ, մի շտապիր. եթէ դու առաքինի օրիորդ ես պատասխանիր «Երթ՝ յետս իմ սատանայ»։

Եթէ դու ժողովուրդների մէջ ժողովուրդ՝մ ես և մի խղճուկ անկիւն ունիս ապրելու, ուր քեզ համար սիրելի յիշատակներ, խնդ ու տր-

ցունը է պատուած, քս փորձիչդ կ'գայ ճոխ, պերճ ազգի օրինակով, որ մուտցնել ուզ քեզ քոնը. զգոյշ, քս արցունքն ու վիշտ առաւել սիրէ, քան օտարի խնճոյք, որ քեզ համար երջանկութիւն չի բերի. եթէ դու առաքինի ազգ ես, պատասխանիր. «Երթ յետս իմ սատանայ»։

Այն Աստուածը, որ փորձութեան կարիք չունէր, բայց փորձուեց, որ մեզ սովորեցնէ թէ ինչպէս պէտք է շարին յաղթել. Նա որ փորձութեան մէջ եղած հերոսներին դիմանալու և յաղթանարելու այժ է պարգևում, Նա թող այժ ուզ ու մեզ զէմ դնելու փորձող դեին և բաջութեամբ պատասխանելու. «Երթ յետս իմ, սատանայ։*)

---

*) Ծանօթութիւն։ Խօսուած է 1901 թ. մեծի պահոց երրորդ կիրակէին Զուչոյ Ղազանչիցոց եկեղեցում։

Բ.

ԻՄԱՍՏՈՒՆ ԱՆԻՐԱՒՈՒԹԻՒՆ ԵՒ ՓՈՔՐ ԲԱՆԻ ՄԷՋ ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԻՒՆ.

„Եւ գովեաց տէր զսնտեան անիրաւութեան... Եւ ի փոքուն հաւատարիմ է եւ ի բազմին հաւատարիմ է, որ ի փոքուն անիրաւ է եւ ի բազմին անիրաւ է,„
Ղուկ Ժ. 9.

Քրիստոնեայ հայ եղբայրներ.

Պատահել է ձեզ որ սարի լանջումը ծաղիկներ ջոկելիս փունջ կազմելու համար դրժուարանաք ընտրութիւն անել. մէրը քաղեմ, մէն է սիրուն, մէի հոտն առաւել անոյշ է, տեսքը հրապուրիչ։ Ամէնքն էլ իրենց տեսակի մէջ գեղեցիկ են, ամէնքն էլ հոտաւէտ, ամէնքն էլ երեսիդ ժպտացող ու պիտանի սիրունիկ փնջի համար և դու ընտրութեանդ մէջ հիացմամբ շուարում կանգնում ես։ Ճիշտ այդպէս հիացմունքով շուարել կանգնել էի, երբ այսօր սրբազան բեմից հայր քահանան ս. աւետարանի թանգարանից երկնքի մարգարիտներ էր վաճառում. մէն է լաւ, տեսեսի առակը թէ հրաւէրքներ. պարաբերի մէջ հաւատարիմ լինելունը թէ Ղազարոսներ։ Ես հիացմունքով շուարած, ձեռքս մեկնեցի գէպի

երկնքի մարգարիտների վաճառականը ու սիրոյ թելի վրայ շարած երկու անբաժան մարգարիտ սաացայ, որոնց անունն է խմաստութիւն և փորբ բանի մէջ հաւատարմութիւն։ Իմ գրնած մարգարիտները ծրարուած են երկնագոյն հանդերձանքի մէջ որի վերայ գրուած է, «Տրնտեսի առակը»։

Իմ պատուական ունկնդիրներ, ես ուզում եմ այդ հանդերձանքի հանդոյցն արձակել որ դուք էլ երկնքի մարգարիտները տեսնէք ու սիրէք նոցա։ Բայց ծանրակոյտ եմ ես, ինձ դժուար է հասկանալ. իմ թերութիւնը ծածկելու համար կապաշեմ ձեր ուշադրութիւնն աւելացնէք։

Մարգարէների օրերը թեաւորուելով թռել գնացել էին Հրէաստանից ու իրենց թեերով տարել ճշմարիտ հաւատը, որտի մաքուր կրօնը. Մովսիսի ամոռի վերայ նստել էին գպիրներն ու փարիսեցիները. սարա էին ժողովրդի կըրթութեան, հաւատի պահպանութեան եկեղեցական ու աշխարհական առաջնորդները։ Ճաճարի երկրպագութիւնն էլի կար, հաւատն էր պակսել. աղօթքի բուրվառը կար՝ աղօթքն էր պակսել. Տիրոջ օրէնքը կար՝ սէրն էր պակսել. գթութեան քարոզը կար՝ որբի և այրու հայն էր պակսել... մէկ խօսքով Աստուածապաշտութեան ձեր կար՝ ծայրին էր պակսել։

Ամէնքի սրտում խիղճը քնած՝ արծամն էր խօսում. հրեշտակը լալիս՝ չար դեմ էր խնդում. սէրը կրծքի մէջ դադարում դրած՝ տեղումիւնը նրա վերայ հոգոց էր կարդում։

Այս վիճակում ուժեղն անոյժին ճնշելով հանում է նորանից կենդանական կրակը, մատնում ցուրտ ապրատուլիան ու տաղապանքի և այս անիրաւութիւնը ձեւական կանոնով սրբագործում. մէկ խօսքով մամոնայի հզօր և անհաւատ իշխանութիւն։

Այս սոսկալի անիրաւութեան դէմ բոլոր-բոլոր մի հրաշալի ձայն առաջին անգամ հնչում է Գալիլիայի բարձունքներում, անցնում է շատ քաղաքներով, մտնում Երուսաղէմի տաճարը և նորա կամարների տակ այսպիսի արձականք տալիս. «Ցիրուց հոգին ինձ վերայ է, ուստի և ինձ օծել է. ուղարկել է ապրատներին աւետիք տալու, ցաւած սրտերը բժշկելու, գերիներին ազատութիւն քարոզելու, կոյրերին աչքի լոյս տալու, սպաւորներին մխիթարելու»։ Բայց ով է ապրատացրել ապրատին, ով է վիրաւորել խեղճերի սիրտը, ով է գերել ազատ մարդուն, ով է կուրացրել շատերին, ով է սպի մոխիր ցանել շատ տների վերայ. անհաւատ անխղճութիւնը, նիւթապաշտ ագահութիւնը, կոյր և սնափառ ագիտութիւնը։ Հրէաստանում հա-

տասարութեան վարդը թաշնել էր. սակաւամամն ուժեղների ձեռքում տանջուում էր թըշուառների բազմութիւն։ Ուստի բնական է թէ ովքեր պիտի հալածէին Փրկչին և ոչ պիտի աշակերտէին Նորան։

Գալիլիոյ և Երուսաղէմի դռները փակուում են Նորա առաջ և Նա իւր քայլերն ուղղում է դէպի Յորդանանի ափերը. Նորան հետևում են վաստակաւորներն ու բեռնաւորները, ապրատներն ու զղջացող մեղաւորները, մաքով կոյրերն ու կաղերը, որոնց համար աշխարհը մթին է, մթին է և Աստուծոյ թագաւորութիւնը և առաջնորդի են կարօտ։

Փրկչին հալածող մեծատունները իրենց սրտի մէջ խոստովանում են, որ Նորա ասածները բարձր են, իմաստալից են, օրէնքին, ս. Գրքին համաձայն են, ուստի հետաքրքիր են լսելու և շատ անգամ իրենց անձերն են հրաւիրում Նորան հացի և բազմութեան առաջ խօսեցնում. նախ՝ որ բան սովորեն, երկրորդ նախանձով և շահամոլութեամբ լցուած աշխատին ս. Գրքին ընդդէմ խօսք բռնել և Նորա վարկը քցել ժողովրդի մէջ։

Ահա այդ դիտաւորութեամբ Յորդանանի կողմերում մի փարիսեցի հրաւէրք է տարբում, կանչում է Փրկչին և Նորա առաքեալներին. կան

և ուրիշ փարիսեցիք։ Փրկիչն օգտուելով հանգամանքից անմիտ նիւթապաշտութեանը, սեծամտութեանն ու անհաւատարմութեանը մի զօրեղ հարուած է տալիս տնտեսի առակով։ Ահա այդ առակը։

Մի մեծատուն՝ հարուստ մարդ մի տնտես ունէր. տնտեսին ամբաստանեցին տիրոջ առաջ որ նա վատնում է նորա կարողութիւնը. տէրը կանչեց և ասաց նորան. էս ինչ բան է որ լսում եմ քո մասին, տնտեսութեանդ հաշիւները տուր, էլ չես կարող տնտես լինել։ Տնտեսը մտքի մէջ է ընկնում. ինչ պիտի անեմ, տէրս տնտեսութիւնից հանում է ինձ, ուրիշ գործ կատարել չեմ կարող, մուրացկանութիւն անելն էլ ամօթ է։ Հա՜, գիտեմ ինչ անեմ, որ պաշտօնատուրկ լինելուցս յետոյ ինձ իրենց տուն ընդունողներ լինին։ Եւ մէկ մէկ իւր մօտ կանչելով տիրոջ պարտապաններին ասում է առաջինին. իմ տիրոջն ինչ ես պարտական.— Նա պատասխանում՝ է հարիւր չափ ձէթ.— Թուղթ վերցուր և գրիր շուտով յիսուն։ Միւսին հարցնում է՝ դու ինչ ես պարտ.— Հարիւր չափ ցորեն.— Թուղթ վերցուր ու գրիր ութսուն։ Տէրը որ այս բանը իմացաւ գովեց անիրաւ տնտեսին, որովհետև իմաստուն բան արաւ։

«Եւ զովեաց Տէր զանտեան անիրաւութեան, զի իմաստութեամբ արար»։

Զարմանք, ինչպէս կարող էր անիրաւ, զոր անտեսին զովել տէրը և եթէ զովում է, ինչպէս կարող էր արձակել պաշտօնից. հակասութիւն չէ՞ այս սխալ չէ՞ այս։ Բայց ոչ. հասկանալ պէտք է միայն։ Տէրը չի զովում արնտեսի անիրաւութիւնը, այլ զովում է նորա իմաստութիւնը, որ մամոնայի զնով բարեկամ ճարեց։ Բարեկամի տունը, յարկը շատ ուրախ լաւ է, քան մամոնան։ Բարեկամ կարող են լինել բարիք տեսած մարդիկ, բարեկամ կարող են լինել բարի գործերը, որոնց մէջ մարդ հոգեկան երջանկութիւն վայելել կարող է և անտեսը տալիս է մամոնան ու բարեկամ ճարում։

Այսպէս չեն վարուում աշխարհիս յիմարները, որոնք և՛ բարեկամութիւն և՛ բարի անուն, և՛ բարի յիշատակ տալիս են որ մամոնայ զնեն։

Արդ՝ եթէ իմաստութիւն է մամոնան տալ և աշխարհիս վերայ բարեկամ ճարել, բարեկամի յարկ ճարել, ուր մարդ կարող լինի հանգիստ առնել, որչափ առատել մեծ իմաստութիւն է այս աշխարհիս սեփականութեան վերայ նայել իբրև անցողական ժամանակաւոր մամոնայի վերայ, որով կարելի է բարեկամ ունենալ երկնքում Աստուած, բարեկամի տուն՝

յաւիտենական թագաւորութիւն: Ահա անտեսի առակի առաջին իմաստը։

Այս դաղափարն առաւել պարզ կացուցանելու համար մի փոքրիկ պատմութիւն անեմ։

Մերձ ի մահ հիւանդ մի ծերունի հայր հոգին աւանդելուց առաջ այսպիսի մի խրատ է տալիս որդուն. «Որդի, լսիր իմ խրատը, ամէն մի քաղաքում ուր գնաս մի տուն շինիր և դու երջանիկ կ'լինես»։ Զարմանում է որդին. շատ են այդ քաղաքները, ուր գնալ դալ ունի, ինչպէս կարող է ամէն գնացած տեղը մի տուն շինել։ Ցարակուսած որդուն հասկանալի անելու համար մեկնում է հայրը. «Խօսքս, որդի շէնքերի մասին չէ, այլ ուր որ գնաս, աշխատիր լաւութիւն անես, որպէսզի ուր էլ լինիս այնպէս ընդունեն քեզ ինչպէս քո տանը»։ Ուրիշ խօսքով մամնան պիտի տայ մարդ և բարեկամ ու բարի գործ շահի։

Իւրաքանչիւր քահանայ իւր տաճարի մէջ, իւրաքանչիւր մարդ իւր տան մէջ, իւրաքանչիւր կին իւր դաւակաց շրջանում, իւրաքանչիւր ուսուցիչ իւր սանիկների համար անտես մէ։ Ամէնքն էլ իրենց սեփականութիւնից պիտի օգտուին ինչպէս ճանապարհորդը գտնում է իւր ծարաւը պատահող աղբիւրից

ու անցնում և երբէք սեփականութեան գոհ չրեր-
ին առաքինութիւնը, երկնքի բարեկամու-
թիւնը, որ մշտական է, յարատև է յաւիտե-
նական է. ընդհակառակն Աստուծոյ տուած
բարձրագոյն շնորհները, բարին, գեղեցիկը, ճըշ-
մարտութիւնը պէտք է զոհ դնեն այլոց համար
ու չզոհեան, չթագցնեն։

Ցնտեսի այդ իմաստութիւնը գովելով հան-
դերձ Փրկիչն արձակում է անտեսին. «Տուր
գհամար անտեսութեան քո, դի ոչ ես կարես
լինել ամենեւ»։ Ես քեզ յանձնել եմ իմ կարո-
ղութիւնս կատարելու, իմ մամնան քեզ եմ
տուել և դու, որ այդ փոքր, անցողական բա-
նում անհաւատարիմ ես գտնուել, ինչպէս կա-
րող ես հաւատարիմ մնալ եղել ես քեզ աւելի
բարձր գործեր, բարձր ճշմարտութիւններ հա-
ւատամ։ Զէ, չէ, անտեսութեանդ հաշիւները
տուր, որովհետև ով որ փոքր բանի մէջ ազ-
նիւ է, նա միայն մեծ բանի մէջ ազնիւ կ'լինի,
և ով որ փոքր բանի մէջ անիրաւ է մեծ
բանի մէջն էլ անիրաւ կ'լինի»։

Բայց մինչեւ մանր բաների մէջ հաւատա-
րիմ ազնիւ չեղողը, չի կարող ազնիւ լինել,
հաւատարիմ լինել մեծ բաների մէջ. սխալ չէ
այս։ Եւ՞ սխալը մենք ենք տեսատանի
ծագկաւէտ դաշտերից հեռու շրջող ոչոմելի-

ներս, որ կարծումենք թէ աւետարանի մէջ սխալ բան կայ. մենք անիմաստ իմաստուններս, որ կարծումենք թէ մանր պարարերի դէմ աչք փակելով, մեծ պարարերի մէջ հաւատարիմ և ազնիւ կ'լինենք. մենք՝ կամայուրկ փոքրիկներս, որ փոքրիկ գայթակղութիւններին չդիմանալով, կարծումենք թէ մեծերին կ'յաղթենք։ Փոքրիկ մարդկանց մեծ մոլորութիւն։

Դու, աշակերտ եղբայր, ազնիւ պատանի, երախտագիտութեան առաքինութիւնը քո սրտումդ աճել ծառ է դարձել. դա քո իդէալն է։ Երբ հայր քահանան մատնութեան գիշերուայ ապերախտութիւնն է պատմում, որ Յուդայի համբոյրով գրաշմուեցաւ երկնաւոր վարժապետի լուսաշաղ դէմքին, ճակատդ կնճռոտում, դայրոյթի մի որոտացող ամպ է պատում հոգիդ. ա՜հ, գոռում եմ ազնիւ իդէալդ, ազնիւ ձրգտումդ։ Բայց ահա մի փոքրիկ երախտագիտութեան կաթօտ գործ. քո ալեզարդ ուսուցիչդ, որի ոգեորութեան տարիները քո զարգացման վերայ մաշուեցաւ, կաթօտ է լոկ քո յարգանքին. աշխարհը նորան չի ճանաչում, բայց դու ճանաչում ես. նորա մաշուած սիրտը մի խոցիր վատաբանող ապերախտ լեզուիդ սուր նշտարով։ Ո՜հ . . . ինչո՞ւ կախ ընկաւ խրոխտ ճակատդ, դժուար է, խօսքի հերոս, գործի

գաճաճ. «որ ի փոքուն անիրաւ է և ի բազմին անիրաւ է»։

Դու, ուսում առած երիտասարդ եղբայր, որոյ մէջ հաւասարութեան, փոխադարձ օգնականութեան իդէալն ունիս. երբ դու ողորմում ես հերոսական դարերով, երբ հերոս մարդիկ իրենց ինչքն ու կեանքը զոհ էին բերում եղբայրական հաւասարութեան ս. սեղանի վերայ, ես քեզ սիրում եմ, սիրում եմ քո գաղափարդ քո կրակն և քո կուրծքն է վառում։ Բայց ահա մի փոքրիկ օգնականութիւն. դրանք կանգնած է մի խեղճ ազրատ գիւղացի, բեզնից ոչինչ չի ուզում, այլ մի բարի խորհուրդ իւր որդու կրթութեան համար. յիշում ես, դու էլ մէկ օր վեղջուկ հօրդ հետ քեզ նմանների գնեերում կանգնած էիր։ Բայց . . . դու շտապում ես. ա՜, ճաշ է ես հրաւիրուած, ուր փափկասուն օրիորդների շրջանում մարդասիրական ճառեր պիտի ասես։ Ուտուած քեզ հետ, խօսքի հերոս, զործի գաճաճ, «որ ի սակաւուն անիրաւ է և ի բազմին անիրաւ է»։

Ողջոյն քեզ, հարուստ մեծատուն եղբայր, ես չեմ մոռացել այն օրը, երբ դու անիրաւ մեծատան և ազրատ Ղազարոսի առակը լսեցիր. ողորմած հոգիդ վրդովուեց, անիրաւ մեծատան բարեսրտութիւնը քո աչքերդ արցունքներ

քով լցրին։ Գիտեմ մեծամեծ ողբմուլթիւն անելու պատրաստ ես. բայց առ այժմ քո գրածը մի քանի մանրիկ բոկան ու գլխարաց, գրազուրկ ու քաղցած Ղազարոսներ կան, ել, նոցա արցունքը սրբէ. այս փոքրիկ ողբմուլթիւնն արա, մինչև որ գէպքը բերի մեծն էլ կանես։ Բայց . . . ինչու ես գայրացած աչքերդ սեւեռում վերաս. մեղա՜, լթողուլթիւն արա. ես չիմացայ լթէ գրազուած ես, չիմացայ որ ոսկիներդ ես համարում սնդուկներում գարեկոլ համար։ Համբէ, ոսկի համբէ, խօսքի հերոս, գործի գաճաճ, բայց իմացիր, «որ ի փոքրուն անիրաւ է և ի բազմին անիրաւ է»։

Գլխարկ հանած եմ ողջունում քեզ, քայր իմ շնորհալի հայ օրիորդ, որովհետև սրտիդ մէջ երկրպագուլթեան մէկ սեղան ես շինել, նորա վերայ կուսական համեստուլթիւն և մաքրուլթիւն ես բազմեցուցել ու երկրպագուլթիւն ես տալիս. քո իդէալը կուսական առաքինուլթեանց հովանաւոր Ս. Կոյսն է։ Գիտեմ աշխարհիս և ոչ մի մարդիկ չի կարող լթոքչոմել քո մաքուր կենցաղիդ ծայրիկը։ Բայց ահա քո ազգատիկ քոյրերիդ մէկը ձեր դռանն է, սրբատեմ վիշտ ունի, սիրտիանրի է կարօտ։ Բայց.., բայց ինչու ես արհամարհում ինձ. մի՞թէ յան-

ցանք գործեցի, ամ, թողութիւն արա, չէի իմանում թէ ապրատ ապջիկների հետ խօսելն անպատուութիւն է քեզ համար, չէի իմանում որ մեռաբոի հագուստ ու գարդեր ես ուզում, որ մուխ փողոցում տեսութեան գնաս . . . Ներող եղիր խօսքի հերոս, գործի գաճաճ «որ ի սակաւուն անիրաւ է, և ի բազմին անիրաւ է»։

Դուն էլ մեծ յարգանքի արժանի ես քրիստոնեայ պատուական տիկին, որովհետև դուն էլ մեծ իդէալներով ես ապրում։ Քրիստոնէական ճշմարիտ հաւատը որբակեաց կանանց որբոտումն է պահուել. գիտեմ, ուեռաբանի հաւատով Մարիամների պատմութիւնը սիրող յուզում է. դուն էլ կուզէիր մի շիշ Նարդոսի թանգ իւղ թափել Փրկչի ոտների վրայ օծել և վարսերովդ սրբել. հաւատն է քո իդէալը։ Բայց ահա ժամը զարկաւ, խնկան երկնագոյն ծուխն ու ալօթքը զանգի ձայնի հետ միասին դէպի Բարձրեալի ամենն են ելնում. շտապիր, դեռ ժամ, զաւակներիդ և աշխարհի տառապեալների համար ալօթել։ Բայց . . . բայց դու ալօթելու ժամանակ չունիս, հարսնիր պիտի դնաս։ Բարի ուրախութիւն, խօսքի հերոս, գործի գաճաճ «որ ի փոքրուն անիրաւ է, և ի բազմին անիրաւ է»։

Օրհնեան ի Տէր, աջիդ մեռնիմ, հայր քա-

հանայ. լիշում եմ թէ ինչպէս լայ եղար, երբ մէկ օր Նկարագրեցիր Փրկիչ Յիսուսին Երիքովի պարսպի քով թափթփած կոյրերի, կուլերի, բորոտների մէջ, մխիթարութեան սպասման ընելիս նոցա վերաւոր սրտին։ Բայց ահա տղքատ խղճուկին մէկը քո դռանդ ընկաւ ու մեռաւ. երկու մանրիկ որբերը հօր գիրկի վրայ ընկած յուսակտուր կ'հեծկլտան, վեր կայ մխիթարիչ հայր, տար խղճուկին քրիստոնէի կարգով հողը դիր ու որբերին մխիթարիր։ Բայց . . . արժանի եմ ես քո բարկութեան, հայր հոգեւոր. թողութիւն արա. ես չգիտէի թէ հարստի տուն հարենիքի հայ ուտելու կերթամ։ Բարով երթաս խօսքի հերոս գործի դաճաճ, բայց ամենից լաւ դու պիտի իմանաս թէ «որ ի փորուն անիրաւ է և ի բազմին անիրաւ է»։

Ստուած օգնական, հայր վարպետա, կարգիդ մեռնիմ ինչ վսեմ իդէալ ունիս. Պօղոս առաքեալ. նա շրջում է քաղաքներ, նա տիրոջ խօսքն է քարոզում, նորան հալածում են ճշմարտութեան համար, կրկիներ աքսորում, բանտերում կաշկանդում. բայց նա բանտերիցն անգամ մխիթարական թղթեր է գրում իւր հօտին, պաշտպանում է նոցա հեթանոսութեան գայլերից։ Դուն էլ այդ մեծ սուրբի գործերումն

ես ոգևորուում։ Բայց ահա, հայր սուրբ, քրիստոնեայ ոչխարներդ մօտիկ սարի փեշում հանգիստ արածում էին, կարծելով թէ դու իրենց մէջն ես. սարից գայլեր իջան, մոլորուած ոչխարն ապիսդարմ ձայնով մէկ այս, մէկ այն կողմն է վազում, չգիտէ ուր գիմէ, չգիտէ դուն ուր ես։ Վեր կաց, քաջ հովիւ ու հոտդ թող շուրջդ խմբուի, ազատէ նոցա։ Բայց... բայց ինչու աչքերդ ցասումով վար թողեցիր. ինչու լիր լիր երեսիդ վարդերը դեղնեցան բարկութիւնից. մեղա, հայր սուրբ, ես չէի իմանում թէ ճաշիդ ժամանակն է։ Այո՛, դու պէտք է նախ կաքաւ ուտես, կարմիր գինի խմես ու անոյշ քնես, ժամանակ չունիս։ Քնիր, անոյշ լինի քունդ, հայր առաքեալ. թող վարանած հօտն սպասէ. գայլերը խօ չեն կարող բոլորին ուտել..... բայց քաջ իմացիր, «որ ի փոքուն անիրաւ է և ի բազմին անիրաւ է։»

Ցէր Աստուած, այս ինչ վէրք էր որ բացի ես իմ հոգու մէջ. միթէ «ամենեքեան խոտորեցան ի միասին և անպիտանացան», միթէ ամենեքեան. այո՛, այո՛, ամենեքեան։ Ամէնքն էլ իսօքի մէջ հերոսներ են, գեղեցիկ իդէալների տէր, իսկ փոքր պարտականութիւններն երբէք չեն կատարում։ Ինչպէս կարելի է հաւատալ, որ փոքրիկ ցաւին չդիմացողը, ան-

ջանքի կ'դիմանայ, մի լումայ օգնութիւն չտրուողը, իւր կեանքը զոհ կայ։ Ա՛յ, ով որ փոքր բաների մէջ հաւատարիմ է մեծ բաների մէջն էլ հաւատարիմ կ'լինի. ով որ փոքր բաների մէջ անիրաւ է, մեծ բաների մէջն էլ անիրաւ կ'լինի։ Մեծութիւնը մարդկային մանր պարտականութիւնների գումարն է. ամենամեծ ու սուրբ մարդիկ նոքա են, որոնք իրենց մանր պարտքերն են կատարել։ Մանր պարտքերն աւազի հատիկներ են, որոց բազմութիւնը ծովի ալիքների առաջն է առնում և նոցա յետ է դարձնում։

Արդ՝, իմ ունկնդիրներ, հասկանալի պիտի լինի ձեզ թէ անհասկ առակն ինչ միտք ունի. մարդ այնքան իմաստուն պիտի լինի, որ մամոնայի գնով բարեկամ և երկինք ժառանգէ, չկաշկանդուի նիւթապաշտութեամբ և եթէ մարդ իւր մանր պարտքերը լաւ չկատարէ, այլ միայն քրիստոնէական հզօր առաքինութեանց առաջ յուզուի, խիղճը միայն ցնորք դառնայ և ոչ գործ, նա երբէք չի կարող մեծ ճշմարտութիւնների մէջ հաւատարիմ լինել. նա չի կարող Աստուծուն ծառայել, այլ կ'մնայ նոյն մամոնայի գանձաճ երկրպագուն։

Քաջալերուեցէք, ով քրիստոնեայք, մօտ է Աստուծոյ արքայութիւնը. շուտով պարծենկոտ

մեծախօսները կնսեմանան, հանդէս կ'գան իրենց բոլոր մերկութեամբ, իսկ համեստ, հեզ անձնուէրներն իրենց մանր պարտականութիւններին՝ բարձր ի գլուխ կ'կանգնեն Աստուծոյ առաջ։ Իսկ մինչև այդ փառաւոր օրը արտագին ապրելու է ս. Ջնորհալու մեղմիկ աւագով. «Զարթիր Ցէր յօդնել, զարթո՛ զիմմրեալս, զբուարթնոց նմանել» և մեր հայրերի Աստուածը թող զարթեցնէ մեր սիրտը, մամնայի և հպարտութեան փաշուց խեղեցնէ մեր հոգին, որ հասկանանք թէ մանր պարտականութիւնների մէջն է քրիստոնէի մեծութիւնը. «Զի որ ի փոքուն հաւատարիմ է, և ի բազմին հաւատարիմ է»։*)

ТИФЛИССКАГО СОБРАНІЯ БИБЛІОТЕКА

---

*) Ծանօթ. Խօսուած է 1901 թ. Մեծի պահոց անտեսի կիրակէին Ջուշու Մեղրեցոց ս. Աստուածածին եկեղեցում։

Թ.

ՎԱՐՉԵՑ

Քրիստոնեայ Հայ եղբայրներ.

Եղել էր դուք երբ ի իցէ արդարադատութեան մեծ ատեաններում. ընդարձակ դահլիճի մէջ տեղաւորուած է հարիւրաւոր բազմութիւն. դահլիճի ճակատին դատաւորի ամբիոն, նորա առջև գլխիկոր կանգնած մեղադարտը։ Երբար բարկութեամբ լցուած դատաւորը յանցագործի մեղքերը նորա երեսին է տալիս և դատակնիքն է կարդում։ Դուք անիրաւ արարքների նկարագրութիւնից փշաքաղուում էք. դատավճիռը ձեզ սոսկումն է ազդում։

Ճիշտ այս ընաւորութիւնն ունի այսօրուան ս. Աւետարանը. իմ երևակայութեանս առջև կենդանանում է աւետարանի այդ պատկերը։ Կանգնած է Փրկիչը տեղ դատաւորի նման, կարծես այն հեղ, քաղցր վարդապետը չ՛լինի. Նորա առաջ փարիսեցիների և գրիչների մի մեծ բազմութիւն, կեղծ դիտակների, կեղծ կրօնաւորների մի ժողով։ Երեք տարի շարունակ սիրոյ և ճշմարտութեան անոյշ լեզուով քարոզել էր դոցա. բայց կեղծիքի և

անիրաւութեան մէջ փէտացած ժողովուրդն անուղղա էր մնացել. ուստի այժմ նա դիմութիւնը մի կողմ դրած արդարութեան խարազան ձեռքին անխնայ մարակում էր սուան ու կեղծիքը։ Այդ դատաստանը յայտնի է ս. Աւետարանի մէջ «վայե՛ր», կամ «մեծ յանդիմանութիւն» անունով։

Արդ՝, ինչ է սուտը և ինչ է կեղծիքը։ Ստել կնշանակէ, այնպիսի բան խօսել, որ եղած չէ ամենեին, որ սարքուած է. և ոչ են ստողները. ստում են անշնորհքները՝ շնորհալի երևալու համար, ստում են վախկոտ անձնասէրները, որ անվախ հերոս երևան. ստում են ծոյլերը, որովհետև աշխատանքով ապրել չկարողանալով միայն այդ ճանապարհովն են հաց վաստակում։ Ստի վերջնական նպատակն է խաբել. իսկ երբ սուտը յաճախ է կրկնուում, դառնում է բարք, որից այլևս բաժանուել չի կարողանում սատանան։

Կեղծելը ստից փոքր ինչ տարբեր մոլութիւն է. կեղծել նշանակում է շինել այնպէս ինչպէս որ կաս, այլ ձևանալ այնպէս ինչպէս որ չկաս։ Օրինակ՝ երբ սրտիդ մէջ ատում ես ազգականներին և չես ուզում նոցա հանդիպել անգամ, և երբ ուրիշների մօտ ցոյց ես տալիս քեզ ազգատասէր, դու կեղծում ես։ Երբ սրտիդ

մէջ սէրը, հաւատը յոյսը մեռած է, բայց դու աղօթող ես ձեռնում, բերան արած աղօթքներ կրկնում այլոց մօտ, որ սրտումդ ծիծաղես նոցա վերայ, դու կեղծում ես։ Երբ դու սրբի և և այրու բարերար ձեռնադրով, նորա գոյրն ու կայրին աչք ես անկել, դու կեղծում ես և այլն։

Ահա այս կեղծիքը փարիսեցիք իրենց համար ապրելու և փառաւորուելու զէնք էին ընտրել։ Այդ զէնքը սիրով ջարդել չկարողացաւ Փրկիչը և այժմ արդարութեան հարուածներով փշրում է Նա «վայերի» մեծ յանդիմանութիւնը կարդալով։

Վա՜յ ձեզ կեղծաւոր դպիրներիդ ու փարիսեցիներիդ, դուք Աստուծոյ արքայութիւնը փակում էք մարդկանց առաջ. դուք մտնելու չէք, ուրիշներին էլ արգելք էք դառնում։

Վա՜յ ձեզ կեղծաւոր դպիրներիդ ու փարիսեցիներիդ, որ ծով ու ցամաք շրջելով եկամուտ էք ձեռք բերում, որպէսզի դեհենին արժանի գործերի վերայ խարճէք։

Վա՜յ ձեզ, կոյր առաջնորդներ, որ ասում էք թէ տաճարով որ երդուես՝ մեղք չէ, իսկ եթէ տաճարի միջի ոսկով երդուես՝ մեղք է. մորոս ու կոյր մարդիկ, չէ՞ որ տաճարն է որ սրբում է ոսկին։

Վա՜յ ձեզ կեղծաւոր գրիչներիդ ու փարիսեցիներիդ. դուք ձեր ունեցածից տասանորդ էք տալիս տաճարին, բայց մնում էք անպտուղ, անհաւատ. մժգուկներին քամում էք, ուղտերին կլանում. այսինքն ապրանքներին վերջին պատառ հացից զրկում էք, ուղտի պէս խոշոր հարուստների կաչքն էլ խաբեբայութեամբ կուլ տալիս։

Վա՜յ ձեզ կեղծաւոր գրիչներիդ ու փարիսեցիներիդ. դուք բաժակն արտաքուստ մաքրում էք, մինչդեռ ներքուստ անմաքրութեամբ լի է, այսինքն դուք ձեր արտաքինի վերայ էք ուշք դարձնում, բայց ձեր սիրտը կեղտոտ բով լիքն է։

Վա՜յ ձեզ կեղծաւոր գրիչներիդ ու փարիսեցիներիդ. դուք նման էք զարդած գերեզմաններին, որոնք դրսից մաքուր, սպիտակ են, իսկ միջից՝ մեռելի փթած ոսկորներով լի։ Այդպէս էլ դուք դրսից արդար էք ձևանում, բայց ձեր սիրտը լիքն է կեղծաւորութեամբ և անօրէնութեամբ։

Վա՜յ ձեզ կեղծաւոր գրիչներիդ ու փարիսեցիներիդ. դուք այն մարգարէների և արդարների գերեզմաններն էք զարդարում, որոնց ձեր հայրերն սպանեցին և ասում էք. «Եթէ մենք մեր հայրերի ժամանակումն ապրէինք, մարգարէների արիւն չէինք թափի»։ Դարանով վկայում էք թէ մարգարէներ սպանողների որդիքն էք։

Բայց դուք ձեր հայրերից անցել էք անօրէնութեամբ։ Օձի ձագեր, ինչպէս պիտի ազատուիք վնասնու դատաստանից։

Այս ահեղ ու արդար դատաստանն իբրև հուր, կայծակ կեղծաւոր ժողովրդի ղլխին թափելուց յետոյ, Փրկիչն իւր անհուն վիշտն ու սէրը մի տխուր մարգարէութեամբ է յայտնում, մի սրտամաշ հառաչանքով. «Երուսաղէմ, Երուսաղէմ, որ կոտորէիր զմարգարէս և քարկոծ անէիր զառաքեալսն առ քեզ, քանի՞ անգամ կամեցայ ժողովել զորդիս քո, որպէս հաւ ժողովէ զձագս ընդ թեւօք իւրովք և ոչ կամեցարուք. արդ թողեալ լիցին տունդ ձեր աւերակ...»։ Այն, կեղծաւոր, խաբեբայ ժողովրդի տունը վերջ ի վերջոյ աւերակ պիտի դառնայ։ Այդպիսի ժողովրդի համար է ասում և Եսայի կայծակնաշունչն մարգարէն.» Երկիր ձեր աւերակ, քաղաք ձեր հրձիգ, դաշխարհ ձեր առաջի ձեր օտարք կերիցեն, աւերեալ և կործանեալ յազգաց օտարաց.»

Ա՛խ, իմ պատուական ունկնդիր, կեղծիքի դատապարտութիւնը լսելուց յետոյ համեմատիր քո սիրան ու լեզուն, քո գուրսն ու ներսը, ու տես իրար հակառակ չե՞ն դրա։

Հարուստ մարդ, եթէ սիրաց արծաթի մնդուկում փակելով մի մի մոմ ես վառում

կամ մատաղի փոր տալիս մի քանի փարա, որ բարեպաշտ երևաս, դու կեղծում ես, վա՜յ քեզ։

Վաճառական, եթէ սրբի և այրու տուն ու կալուածք գրաւ առնելով մոռացում ես արժան գնով ձեռք ձգես ու միևնոյն ժամանակ բարերար երևաս խեղճերուն, դու կեղծում ես վա՜յ քեզ։

Ցիկին, եթէ ուրիշների մօտ զաւակներիդ փայփայելով ու սէր ցոյց տալով ուզում ես ծածկել որ շարունակ նոցանից հեռու զուարճանում ես, դու կեղծում ես, վա՜յ քեզ։

Բարեգործ, եթէ մի անհնարին բարիք ես անում և սրտիդ մէջ պահանջում, որ դորա համար քեզ փառաբանեն, դու կեղծում ես, վա՜յ քեզ։

Օրիորդ, եթէ ծնողներիդ խաբելով հեռանում ես լաւ պատրուակով, որպէս զի անարժան գործ կատարես, դու կեղծում ես, վա՜յ քեզ։

Երիտասարդ, եթէ մի հարուստ ազգական ձեռքն ես խնդրում դրսից՝ նորան, ներսից փոքր միայն սիրելով, դու կեղծում ես, վա՜յ քեզ։

Ուսումնական, եթէ գիտութիւնդ միայն բառերի և շրջերիդ մէջն է, սրի տակ թաղցնում ես ապեր սիրտդ, որ ուրիշները չտեսնեն, դու կեղծում ես վա՜յ քեզ։

Հայրենասէր եթէ շրթունքներիդ վրայ է միայն հայրենիքդ և ոչ սրտումդ, դու կեղծում ես վա՜ քեզ։

Քահանայ եմէ ապօթքը, խունկը, մոմը, պաշտօնը չի անուշանում մաքուր զգայմունքներովդ, որոնց վերայ չի ազդում և պաշտօնը դարձնում ես միայն հայց ճարելու փեշակ, որ կեղծում ես, վա՜յ քեզ։

Եւ այս փարիսեցիական կեղծիքը վերջ ի վերջոյ պակասեցնում է փոխադարձ վստահութիւնը, հաւատը տան մէջ, դուրսը, հայրենիքում. լցնում է այդ տեղերը կասկած, անվստահութիւն. այո՛. այդ կեղծիքը քանդում է տուն, քանդում եկեղեցական սիրոյ կապեր, քանդում հայրենիք և փակում արքայութեան դռները քրիստոնէի առաջ։ Եմէ դուք ձեր գեղեցիկ շորերի ու զարդերի տակը մի գեղեցիկ ու անկեղծ սիրտ չունիք դուք նման էք բռնաբարներին, վա՜յ ձեզ։

Սարանից աւելի բան չգիտեմ, որ ասեմ. եմէ քարոզը յիրաւի ձեր սրտի վերայ ազդում է, այս քիչն էլ կազդէ, իսկ եմէ չէ, Քրիստոսի վայերը ձեր գլխի վերայ կախուած են։ Ես ձեր առաջը գրի ճշմարտութիւնն ու կեղծիքն, ինչպէս օրհնութիւն և անէծք. ընտրութիւնը ձեզ է մնում. ընտրեցէք որը կամենաք։*)

---

*) Ծանօթութիւն. Խօսուած է 1901 թ. մարտի 18 ին մեծի պահոց ե. կիրակէին Զուչու վերին թաղի եկեղեցում։

Ժ.

Ս. ԼՈՒՍԱՒՈՐԻՉԸ

Ինչպէս հինաւուրց փաքրիկ վանական աշակերտն իւր վարդապետի մօտ ծունկի եկած ս. Գիրք թերթելիս, ինչպէս փաքրիկ մանուկն իւր դաստիարակ մօր քովը նստած պատկերազիրքը նայելիս, այնպէս էլ ես մերթ ընդ մերթ, երբ կեանքի արեր վշտերի ամպերով ապօտանում է առաջիս, գնում ծունկ եմ իջնում յաւիտենական յիշատակների գպիր, դարերի ու ազգերի վարժ նկարիչ հսկայ ժամանակի ոտքերի առաջ։ Ժամանակը բուն չունի, ժամանակը յոգնել չգիտէ. նա մի հսկայական գիրք ունի առջեր դրած, ձեռքին անմաշ վրձին. նա դարերի ու վայրկեանների պատկերներն է բաշում։ Բարի եկիր ով ժամանակ, թերթիր գիրդ, ցոյց տուր այն երեսները, ուր Հայ ժողովրդի դարաւոր կեանքն են արձանագրել։—Հէգ մարդ, պատասխանում է նա, դու մօտենում ես ինձ այսօր, մաշուած սրտով, ոգաւորի սև քօղով, ես չեմ ուզում որ սիրտդ վաղաժամ փշրուի գիւրաբեկ անօթի նման, ուստի ծածկում եմ քո առջև գրքիս այն երեսները, որոնք սիրտ են խորտակում։ Վրձինս թաթախելով Հայոց սև

նախանձի մէջ գրքիս մի երեսում մի սև ծով եմ նկարել, ուր խեղդուում են շնորհքն ու հանճարը. մի ուրիշ երեսում Հայու հոկայ ատելութիւնը՝ ձեռին արիւնլայ թուր, առջեր մի անապատ կեանք, որի վրայ գիակներ են փռուած. մի այլ երեսում արծաթի սար եմ նկարել, ահագին սար և վրձինս Հայու շահամոլութեան թութխալի մէջ թաթախելով մի մեծ բաղմութիւն քերել կպցրել եմ նորա լանջերին, ինչպէս ճանճերի ապահ երամը մեղրահացի վերայ, ուստի պակ գալ և Աստուծոյ անուշ ապառութեամբ ապրել կարող չեն. մի երես էլ հեքիաթական անհաւատութեանն եմ նուիրել. վրձինս ապիտութեան մէջ ընկղմելով մի սև գիշեր եմ նկարել, որի մէջ կոյր, խարխափող ամբոխը ախտերու և գայթակղութեանց մէջ կ'վիսայ... Բայց այս երեսներն ես քեզ ցոյց չեմ տայ։ Վնասս հոգուս քաջալերութիւն ներշնչելու համար կ'բանամ ահա լուսոյ մէջ թաթխած վրձինիս մի պատկեր։ Լաւ նայիր, խորամուխ եղիր այս պատկերիս մէջ։ Ու ես յուսար այս խորհրդաւոր ժամին գիտում եմ այդ պատկեր և ձեզ, քրիստոնեայ Հայ եղբայրներ դայն պատմելու յօժարութիւնն ունիմ։

Տեսնում եմ Հայոց հին աշխարհում մի ժողովուրդ, որ արծաթիկ մագերով Գիսանէ

արձանին է երկրպագում. տեսնում եմ ոսկեձոյլ Անահիտ կուռքի շուրջը պար բռնած մի խելակորոյս կոյր ամբոխ. տեսնում եմ անհաւասարութեան հարուածով թաւթափած մի խեղճ ժողովուրդ, չքաւորների անզէնների մի բազմութիւն սարկական ծառայութիւններ անելիս այժով դասին. տեսնում եմ կանանց բազմութիւն այր մարդկանց աչքերի տակին ընկած. տեսնում եմ մատաղ մանուկներին արհամարհուած, տեսնում եմ դժուարեան ապրիւրը ցամաք, սիրոյ անուշ ջրերը դառնացած։ Մէկ խօսքով դուռ մարմնի կեանք երկրի կեանք նախանձի օձերով, ատելութեան խայթող կարիճներով, արիւնարբու առիւծներով լցուած մի խոր մթին վիրապ։

Այդ վիրապի մէջ արձանանում է իմ առջեւ այսօր մի հոկայ, մի հերոս, մի անմեղ սուրբ, քրիստոնէական սիրոյ մէջ թաթախուած մի լուսափառ խաչով։ Հեթանոս արքան իւր զէնք ու զօրքով, հեթանոս քրմեր իւր արծաթի ոսկով, նախանձոտ ժողովուրդ իւր ատելութեամբ, եսականութիւնն օձի խայթոցով զինուում կանգնում են սիրոյ առաքեալի դիմացը. հարուած հարուածի եռեից, թոյն թոյնին յաջորդելով թափուում են կենդանի նահատակ ս. Գրիգորի վերայ և նորան սոսկալի

տանջանքներով ատելութեան գուրն իջեցնում կարծելով թէ մեռաւ նա, մեռաւ սէրը։ Վիրապից դուրս նորէն մթութիւն, նորէն մառաւոր և բարոյական կուրութիւն, հոգեկան հիւանդութիւն. թագաւորը խողի կեանքով ապրելիս, իշխան ու ժողովուրդ նորան հետեւելիս. իսկ վիրապի մէջ կենդանի է սէրը, կենդանի սիրոյ առաքեալը 15 տարի. և երբ էր տեսել որ սէրը արիւնով խեղդուի, մահով ջնջուի, հալածանքի գերեզմանում անշարժ, անկենդան պառկի. դա մի պողպատի ժայռ է, որի վերայ փշրուում է ամէն անարգ հարուած։

Բազմալեզու է սէրը, նա խօսում է զաղանների հետ, նա երկնից թռչուններին իւր մօտն է կանչում, նա իրրև զեփիւռ շրջում է ծաղկանց երեսին իրրև սոսաւիւն ծառոց տերևին, իրրև անոյշ մեղեդի մարդկանց սրտերին։ Եւ այդ սիրոյ լեզուն հասկանում են ս. Գրիգորի շուրջը պատած օձերն ու կարիճները և չեն խայթում, այլ երախտագիտութեամբ լիզում են նորա ոտքերը։ Սա չէ, տատասկել, այլ խորհրդաւոր իրականութիւն։ Մօտ օրերս մի պատկերագիրք թերթելիս տեսայ սէրը կուսի պատկերով առիւծի գլուխը գրկած հոլանի թեւերով, տեսայ նոյն սիրոյ ոտքերի առաջ առիւծի հպարտ գլուխը խոնարհած։ Եւ առիւծ

Տրդատի թագակիր հպարտ գլուխը ևս տեսնում եմ վերջ ի վերջոյ սիրոյ առաքեալ ս. Գրիգորի տաքերի առջևը խոնարհած։ Հալածուած անդէն սէրը իսաչի լուսով շարախուած յարմնակեց. Հայոց աշխարհի հեթանոս անհաւասարութիւնը հաւասարութեան, եղբայրութեան դաշտ դարձաւ ու այդ հաւասարութեան վերայ իբրև մշտախոս վկայ քրիստոնէական մաքուր հաւատի, պայծառ սիրոյ արձանաձև կանգնեցաւ Հայոց ս. Էջմիածին, Ամոս Հայրապետական. վանք ու վկայարան։ Աստուածեան օձերն ու կարիճները սոսկալով մեծին խորշերն անհետացան և Հայոց աշխարհի համար քրիստոնէական հաւատի լուսափայլ երկինքը բացուեցաւ։ Սէրը կապեց Հայ ժողովրդին քրիստոնէական կրօնի և լուսաւորիչ ս. Գրիգորի հետ։ Հայ ժողովուրդն իմացաւ երախտագիտութեամբ փարուել իւր լուսաւորչին։ Այդ երախտագիտութեան չափը հասկանալի դարձնելու համար մի օրինակ պատմեմ։

Հնդկաստանի հսկայական անտառներում շրջում էր մի որսորդ. նորա ականջին մի ուրիշի ոտիտորմ մանչին հասաւ. գազանի ձայնի վերայ ուրախ ուրախ վազաւ որսորդը, որը մօտ էր. բայց ինչ տեսնի. բոա հսկայական օձերից մէկը ծառն ելնելով՝ իւր պոչը փաթթել էր

առիւծի մէջքին ու սեղմում էր ծառի արմատին. էլի մի քանի վայրկեան և առիւծը իւր շունչը պիտի փշէր սոսկալի տանջանքների մէջ։ Զգացուում է, որսորդը և ուզում է ազատել առիւծին. նա հրացանն ուղղում է օձին, բայց վախենալով մի գուցէ և առիւծին դիպչի գլխադակը, մտածում է մօտենալ և դաշոյնով կտրատել օձին. նորա մտքով չի էլ անցնում թէ կատաղի առիւծն ազատուելուց յետոյ հէնց իւր վրայ կ՚յարձակուի. նա միամտութեամբ հաւատում է թէ սէրը, անձնուիրութիւնը չի մեռնի։ Կտոր կտոր օձը ընկնում է և առիւծն ազատուում։ Ո՜վ զարմանալի երախտագիտութիւն. առիւծը վրայ է վազում որսորդին, լիզում նորա ձեռքերը, պատուում նորա շուրջը և նորանից ընդմիշտ անբաժան մնում, իբրև հաւատարիմ ծառայ, թիկնապահ, երախտագիտութեամբ կապուած մի կամաւոր գերի։ Տարիներ անցնելուց յետոյ որսորդը ծովով պիտի Անգլիա մեկնէր. անբաժան առիւծը հետևեց նորան մինչև նաւը։ Նաւապետն առիւծին նաւի վրայ չընդունեց և երբ նաւն ափից հեռացաւ վշտաւոր առիւծն աչքերը բարերարի դէմքին գցելով ծովն ընկաւ, լողաց, լողաց և վերջին մնաս բարովի հայեացքով ալիքների տակն անհետացաւ

Հայ ժողովուրդը ճիշտ այս ապիրատի հաւատարմութեամբ սիրեց ու կապուեցաւ Լուսաւորչի հետ, որ ասելութեան, հեթանոսութեան խաւարի բոլոր օճն էր սպանել։ Հայոց գաշտերի խաչքարերը Լուսաւորչի անունով կոչուեցան, սաւնորակ ապրիւրները՝ Լուսաւորչի ապրիւր, կամ «լուսապրիւր» մատուռները՝ լուս մատուռ։ Հայը հող ու ջրով կապուեցաւ այդ անուան հետ, իւր ուխտը Լուսաւորչի անունով կնքեց, իւր աղօթքն այդ անուան նուիրեց։ Մի աւանդութիւն ասում է թէ, Արտաշատ սարի վրայ Լուսաւորչի անպարան կանթեղը երկնքից կախ կ'փառի միշտ և ամէն տարի Զատկի ճրագալոյցին արդար մարդիկ արիւր մանեալուց յետոյ տեսնում են այն։ Այս, հաւատի և սիրոյ աչքը պիտի տեսնի թէ Լուսաւորչի լուս հաւատն է, որ կ'փառի Հայոց գլխու վերև. ասենց այդ կանթեղի կ'հանդիպի և Հայն։

Լուսաւորիչ Գրիգորի անուն շատ մայրեր իրենց զաւակների վերայ դրին որ իբրև այդ անուան նուիրուածներ նորա օրհնութեամբ և աստիճնութեամբ ապրին։ Մկրտութեան ս. դրոշմի իւղը Լուսաւորչի աջմն է սրբանում և իբրև Լուսաւորչու դրոշմ Հայ եկեղեցականի ճակատն է պատկում։

Ահա թէ ինչ է Լուսաւորիչ. հաւատի սիւն,

Հայոց կեանքի կեսրոն, ցաք ու ցրիւ Հայուն միացնող կապող ոսկի օղակ, հանապարհ բարի դէպի երկնից անանց արքայութիւն։

Այլ աւա՜ղ, մեր նախնեաց այս ս. դաւանանքը, որ Հայոց եկեղեցին տարէնը երեք անգամ կարդում է ս. Լուսաւորչի երեք տօնին, կարծես դաւանողներ քիչ ունի. ես տեսնում եմ մեր քրիստոնէական պայծառ հաւատի մէջ հեթանոսական գործեր, կարծես հին հեթանոսութիւնը դլուխ է բարձրացնում. հաւատը պակսել արծաթն այժ առել, շնորհքը պակսել, նախանձը թիւ առել, սէրը մեռել ատելութիւն յարութիւն առել. ճշմարտութիւնը լռել՝ բամբասանքը խօսում, Լուսաւորիչը մոռացուել օտար կուռքերն են կանգնել։ Այս տխուր իրականութեան առաջ մի մշուշապատ ապագայ եմ տեսնում. միտքս է գալիս Նենուէ քաղաքը. Յովնան մարգարէն դլխին սգոյ մոխիր ցանած զղջման հրաւէր է կարդում. «Այլեւս երեք աւուրք և Նենուէ կործանեսցի»։ Երջանիկ մարդարէ. նորա խօսքը լսեց ժողովուրդը զղջաց ու փրկուեց։ Չեմ ես մարդարէ և ոչ իսկ ստաց փոշին մարդարէի. բայց սրտի համայն ընդարձակութեամբ հոգոյս բոլոր զօրութեամբ հրաւէր եմ կարդում ձեզ, Հայ եղբայրներ, մօտեցէք ս. Լուսաւորչին, զղջման արցունք յուզեցէք

ձեր աչքերում, սէր և ճշմարտութիւն ձեր սրբութեան ու մի խոսքէք որ Աստուած մեր Նինուէն կործանի։

Լուսաւորչի կանխեկը վառ է. Հայոց սրբազնագոյն Հայրապետն այդ կանխեկի պահապանն է, սրբազան եպիսկոպոսները նորա մէջ հաւատի իւղ լցնողներ։ Ուխտի երախտագիտութեամբ դարձրէք ձեր աչքերը դէպի Հայոց տան արիւնն պահապանները։

Մեր անմոռանալի հօր Մեծ Լուսաւորչի հաւատը լոյս տայ մեր հոգուն, սէր՝ մեր սրտին, շարժարանքներն՝ յոյս մեր աչքերին, որ համոզուինք թէ միայն Լուսաւորչի և նորա նուիրակների հետ կապուիլը մեր երկնաւոր ու երկրաւոր կեանքը կ'բարգաւաճեցնէ, որ համոզուինք թէ. «Ամենայն Հայոց տուն ի վերայ աջոյն Լուսաւորչի հաստատեալ կան»։*)

---

*) Դանիել. Խօսուած է 1901 թ. Մեծի պահոց ս. Լուսաւորչին տօնին Ջուշու Գպրանշեցոց եկեղեցում։

ԺԸ.

ՅՈՒՐ ԼԻՑԻ ՀԵՂ

Հին ու նոր նուիրական յիշատակների սիրով մնուած և ուսած Հայ վարժապետը և դպրանոցիս մատաղ սաները մեր ժողովրդի զգայմունքների սրբազան թանգարանից մանրիկ գարդեր միայն հանդէս բերին ձեր առջև երգերով և արտաբերութեամբ, իբրև գրական առաւօտու առաջին փարձ։ Նորա պարապ կատարեցին. նորա վարժում են թէ ինչ կոչումն ունին, ինչ պարտքեր։

Պարտականութեան զգայմունքը առաքինութեանց սանդուխքի վերին աստիճանն է. դա այն ներքին անուշիկ ձայնն է, որ հրամայում է մարդուն հաւատարիմ մնալ այն կոչման, որին կոչուած է, մոռանալ ինք զինք ու միշտ մերձաւորը, եղբայր, հայրենիք, Աստուած յիշել։ Ազգջեղէք սրբերի, հերոսների, իդէալիստների գերեզմանատունը, որ լաւագոյն գրքերի ծայրերումն է փռուած և դուք այս տապանագիրը կ'կարդաք՝ հալածուեցան, նախատուեցան, բարկուեցան, սպասուեցան, սրոյ մահուամբ մեռան, բայց չընկճուեցան և այս անօրինակ տակնու

պարտաճանաչութեան մենման ծառի վերայ։ Համբայը այն սուրբ ու ոսկրացած ճակատներուն, որոց լաւագոյն զարդը ամբոխի մատներով հիւսուած փշեայ պսակն է եղել։

Ամէն մարդու և ազգի համար պարտաճանաչութեան առաքինութիւնը նոյնն է պարտքերն այլ. այլ է Հայ հովուի պարտքը, հօտինն՝ այլ. այլ է Հայ կնոջ պարտքը, մարդունն՝ այլ. այլ է Հայ ուսուցչի պարտքը. աշակերտինն՝ այլ։ Սոցա ամէնքի պարտքերը լաւագոյն և բնական ժառանգութիւնն է, որ մեր ընտիր նախնիք սահմանեցին ու թողին մեզ։

Այսպէս այս նուիրական յարկում, Հայոց ս. եկեղեցու այս նախապաւթում, Հայ վարժապետն իւր սանիկի ձեռքը բռնած տանում շրջեցնում է յիշատակաց աշխարհը։ Հայ վարժապետի առաջ բացուում են վերիգմաններ, յարութիւն առնում ս. նախնիք, օրհնում ու գգուում Հայ աշակերտին, յորդորում որ անմոռաց պահէ իրենց լեզուն, մրմունջ, ապօթք ու անուն։

Հայ վարժապետը բերում շրջեցնում է իւր սանիկին արդի Հայ ժողովրդի մէջ. մատաղ կուրծքը վեր ու վար է դառնում դեռ կուսական ազգի երդն ու ոգրը լսելով. նա ուխտի ծունկ է խոնարհում վարժապետի առաջ և երդուում թէ քանի շունչ կայ իւր կրծքում

պիտի Հայ ժողովրդի երգն ու ողբը երգէ ու տարածէ, թէ իւր կրծքի մէջ պիտի պահէ նորա սէրն ու հաւատ, նորա յոյսն ու հոգին։ Ահա դատարակ ու սանիկ կանգնած են գիշերուայ պահուն մի հսկայական խարոյկի առաջ, որից հազարաւոր մարդիկ իրենց ճրագներն են վառում. դա համաշխարհային գիտութեան խարոյկն է։ «Վառէ, սանիկս, վառէ ճրագդ, ես նորա մէջ Հայոց դաշտերու ծաղիկներից հանած իւղ եմ լցրել, միայն պատրոյկն է օտար. վառէ ու յետ դառնանք շրջենք մեր ժողովրդի մէջ, դի գիշերուայ խաւարի ծոցումն էլ քեզ ցոյց տալու շատ բան ունիմ»։ Ահա այս է Հայ աշակերտի պարտքը, նորա անդրանիկ առաքինութիւնը։ Այս առաքինութեան մէջն են փարժեցնում Հայ ուսուցիչն իւր սանիկին։ Նորա պարտք են կատարում։

Սակայն պարտքերը հատ հատ օղակներ չեն, այլ շղթայ. անհնարին է ինձ կանգ առնել ամէնքիդ պարտքերի վերայ. այդ առանձին ասելու և ժամանակներու կ'թողնեմ. բայց պարտքերէն անդրանիկն ու սուրբը պարզելու համար երկու օրինակ կ'բերեմ և այդ հերիք թող լինի հասկացողի համար։

Ուրբաթ է օրը, երեկոյեան դէմ. արեը իւր մուտքի առջև բռնկուել է, օրը շատով

կ'հանդչի։ Երուսաղէմի Հրէական թաղի նեղ փողոցներում արտասովոր կենդանութիւն է տիրում։ Աշխատաւոր Հրէայք տուն են մտնում և հաղար ու մէկ գոյներով մարուր հագնուած դուրս են գալիս։ Նոցա շարքերը, բազմագոյն հագուստները ուշեական տեսք են տալիս փողոցներին. բայց լաւ են նոքա ինչպէս գերեզման։ Նոքա սանդուխաձև փողոցներով իջնում են դէպի քաղաքի այն մասը, ուր Երբեմն Սողոմոնի սքանչելի տաճարն էր կանգնած։ Հետզհետէ լսուում է հառաչանք, հեծկլտանք, լաց, հրաշունչ հոգոյներ ու նեղ փողոցներով հոսում է սուգի և ողբի վտակը։ Ողբերի ողբիւրը մի առանձնացած այրի պատ է հսկայական քարերով. գարաւոր ժամանակների կնիքը՝ իբրև գեղնութիւն խփուել է նոքա վերայ և ոսկեզօծել մայր մանող արևի կարմիր վարսերով։ Ահա այդ բեկորի խոռոչներում հազարաւոր մամեր են վառուում։ Հրէայ կանայք ոգւորի շղարշով մօտենում են այդ պատին, այդ քարերին, անօրինակ սիրոյ շրմունքներով կպչում նոցա, ողողում են իրենց անոսպառ արցունքը, յետ քաշուում նստում յատակի վերայ, բարկ հառաչանքներով դատարկում կուրծքն այրող խարոյկը։ Կանանց յաջորդում են տղամարդիկ և այդ վայրը սոսկման աղաղակով, լաց ու շի-

ւանով լցնում։ Այդ պատից, այդ քարերից, որ բիւրաւոր սերնդի արցունքներով է լուացուած, արտասուքն, վիշտ է բուրում, սոսկումն առուակումն։

Այդ բեկորի առաջ կանգնած են աշխարհի դանագան կողմի Հրէաներ, տարբեր իրենց տարազներով, կրքուելեամբ, լեզուով. բայց ամէնքն այդ աւերակի լեզուն, որ օտարի համար համր է, հասկանում են. ամէնքը հասկանում են իրար արցունքների լեզուով և հեծեծանքներով ընկնում նորա առաջ իրրև վաղամեռ սիրելու դիակի առաջ, որի մահն անհաւատալի է թուում։

Հեծկլատանքի, խուլ հեծեծանքի, հառաչների ու ողբի միջից լսուում է մի Դատականի սրտառուչ երգը, որ կրկնում է ողբացող ժողովուրդը. «Կործանուած է փառաւոր ապարանքը և մենք միայնակ կանգնած ենք այստեղ ու լալիս.

Աւերուած տաճարի համար մենք միայնակ կանգնած ենք այստեղ ու լալիս.

Մոխիր դարձած պարիսպների համար մենք կանգնած ենք այստեղ ու լալիս.

Մեր անցեալ փառայ համար մենք կանգնած ենք այստեղ ու լալիս.

Մեր մեծագործ ընկած հերոսների համար մենք կանգնած ենք այստեղ ու լալիս.

Երբեմն դարձած թանկագին քարերի համար մենք կանգնած ենք այստեղ ու լալիս

Մեր նախորդաց մեղքերի համար մենք կանգնած ենք այստեղ ու լալիս...

Մենք կանգնած ենք այստեղ միայնակ ու լալիս...

Խզճա, ով Տէր, խզճա Սիոնի վրայ. Երուսաղէմի ցաք ու ցրիւ որդիներին ժողովէ, միացրու նոցա սրտերը... և այն։ Եւ այս սրտակսկծոր երգի հետ մէկ տեղ լացող ուռենու տերևի նման կախու�քարշ են ընկնում հազարաւոր գլուխներ այն քարերի վերայ ու արցունքով լուանում։

Մթնում է օրը, նուազում են հառաչանքները, ոև սիրտ ժողովուրդը լուռ ու մունջ ցրուում է անհետանում խավարի մէջ։

Այս սղրերի, այս սուրբ սրբազան բեկորը Իսրայէլի հին փառքի՝ Սողոմոնի սքանչելի տաճարի մի պատն է և այդ պատը դղջացող ժողովրդի փառքի վկան, յոյսերի հիմքը, միութեան կապն է։ Կար ժամանակ, որ թագուհի Երուսաղէմի մէջ, Սիոնի լանջից մի հրաշալի ձայն էր լսուում իւր տաճարն ու փառքն արհամարհող ժողովրդի ականջին. «Երուսաղէմ,

Երուսաղէմ, որ կոտրելիր զմարդարէս և քարկոծ առնելիր զաստուածն առ քեզ, քանիցս անգամ կամեցայ ժողովել զորդիս քո, որպէս հաւ ժողովէ զձագս ընդ թեւաւք իւրովք և ոչ կամեցարուք, արդ՝, թողեալ լիցին ձեզ տունդ ձեր աւերակ»։ Երուսաղէմը չ'լսեց այդ ձայներ և այն հրաշակերտ մեծութիւնից միայն մի բեկոր մնաց, իբրև նախատինք անիրատ ժողովրդին։

Ա՛րդ, Հայ ժողովուրդ, երբ գեռ քո սրբրազան տաճարն ու նորա նախապատիւի հոգեոր դպրոցները կ'պահուին Ռուսիոյ ամենողորմած կայսեր հովանու ներքև, սիրէ, կապուիր ս. Սիոնիդ ու դպրոցի հետ, որպէս զի յետնորդ սերնդին մի գեղեցիկ բեկոր չմոռնես, որ արցունք քամէ նորա աչքերից, որ նզովք քաշէ նորա կրծքից դէպի այն նախնիք, որոց տաճարները շունչն իբրև հուր և ծծումբ լափեց, աւերակ դարձուց փառքի փայլուն մնացորդներ...

Հայ մարդ, Հայ կին, Հայ պատանի, այս է քո պարտքը. յուշ լիցի քեզ Երուսաղէմի ողբի պարիսպը, այո, յուշ լիցի քեզ։

Սիոնի սարի գիմացը, Ելէոնի ձորակի այն կողմում, ցամաք, բուսական զարդարանքից զուրկ կանգնած է ցոյսոր մի մենաւոր ծառ. այդ ծառի անունն իբրև մի նզովք է հնչում։

Ըստ աստվածաշնչի դա Յուդայի ծառն է, որից կախաղանցաւ նա իւր անունը աշխարհի տիրապրումներին կատակելով։ Այդտեղ նա համբոյր տուաւ իւր վարդապետին. մի համբոյր, որով աշխարհի բոլոր համբոյրները կատաղածներով թունաւորուեցան։ Աստվածաշունը սասկման յիշատակներով լեցուն այդ վայրումն է, գնում վերջին գոտաստանը։ Նա տեսնում է թէ, այդ օր արև չի ելնի, աստղերը կ'թմրթափին, կեանքը իւր շունչն է փչում։ Գեթսեմանի պարտիզից, Եղէոնի հովտից մի անօրինակ լոյս է ելնում ու սփռուում աշխարհ և այդ լոյսի մէջ երևում է աշխարհի Փրկիչը։ Հնչում է հրեշտակապետի փողը, բացուում են գերեզմաններ, յարութիւն առնում մեռեալներ, շուրջ կանգնում ահեղ դատաւորի առաջ։ Նորան սեռնելիս ամէնքը ծունկ են իջնում. միայն հեռու, մենաւոր ծառի տակ արձանացած կանգնած է Յուդան, դալուկ դէմքով, քարացած. նա անդօր է ծունկի գալու։ Ահա մօտենում է նորան ինքը Փրկիչը. մատնիչի շունչը խեղդուում է կրծքում, արիւնը կանգնում երակների մէջ։ Գալկացած ու սառն, ինչպէս մահ, նա նայում է Փրկչին։ Հեղ Փրկիչը մօտենում, հպում է իւր սիրոյ ջերմ շրթունքներով նորա պաղած շրթունքներին և այսպէս է յետ տալիս Յուդայի

համբույրը մատնությեան գիշեր։ Յանցագործներից ամենամեծը երեսն ի վար ընկնում է նորա առաջ և թողություն սատանում։ Ամենքը թողություն են սատանում բացի նոցանից, որոնք անօգնական են թողել ապրատ մանուկներին, որոնք մոլորեցրել են պատանիներին, որոնք անպաշտպան թողել թոյլերին ու վշտացածներին։

Հրաշալի է այս աստվածությեան բարոյական իմաստը. այն, գիժատան Աստուած նեռում է սոսկալի ապերախտությեան վիրաւորանքը իւր անձի դէմ, բայց չի ներում մատաղ մանուկներին վշտացնողներուն, չի ներում սատանապաշտներին մերժողներուն, վասն զի նորա հաստատությիւն են ազգի, կեանքի, մարդկությեան, նորա դուռս են մարդու անձնականից, նորա Տիրոջ եղբայրներն են։

Հայ հարուստ, յուշ լիցի քեզ այս սիրուն աստվածությիւնը. քո պարտքդ այս տեղից է բղխում. շատ են շատ անօգնական մանուկներ, որոնք քեզ համար ս. յիշատակների պահապաններ պիտի լինին։ Քո աչքի առաջ մերկությիւն կայ, քաղց ու ծարաւով տանջուող մանուկներ կան, գրասէր բայց գրագուրկ աշակերտներ կան։ Յուշ, յուշ լիցի քեզ վերջին գատաստան։

Իսկ քո պարտքն ինչ է մեր տատապանքի օրերում, Հայ կրօնաւոր, Հայ կարգաւոր. վրշ-

տերի օրօր կարդա Տիրոջ ժողովրդի մնացորդին, մինչև քո ողբերիդ ձայնով նա սիմափուի ատելութեան ծանր քնէն. լիաց քո բաժինը միայն հալածանքը լինի, դիր անվեհեր ճակատդ նոցա նախատինքների առաջ. վիշտ սիրէ. չէ՞ որ տարբնութիւնը վշտերի զաւակն է, չէ՞ որ քրիստոնէութիւնը վշտաւորների կրօնն է։ Եւ երբ խաչդ ճնչէ քեզ ու լման լիոյնով լցնէ հոգիդ, նայիր Գողգոթայի արիւնաներկ խաչին և սիրա ու,.

«Մի վհատիր, էլ ասպարէզ
Ու հոմնապի քո քնար
Եւ տանջանքի օրհներգ տուր մեզ
Ողբի ապրիլ մեզ համար»։*)

---

*) Ծանօթ. Արտասանուած է 1900 թ. նոյեմբերի 19-ին Զուշու հոգևոր դպրանցում աշակերտական գրական առաւօտուն Լեռն ամբողջ հանդիսի ամփոփումն

ԺԲ.

ՔԱՋԱՐԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐ

Որքան և անպաճոյճ, որքան և համեստ էր ձեր երկրպագութիւնը, հիացմունքը սուրբի արձանացած յիշատակի առաջ, այնուամենայնիւ քաղցր է տեսնել, որ վարժուում էր ձեր սրտում խունկ պատրաստել մեծերի ու սուրբերի անուան համար ծխելու, որ գաղափարական կեանքի շուշան էր ոսկում սրբոց գերեզմանի վերայ։ Խոսելու ցանկութիւնն այսօր անոյշ թուած էր իմ կրծքի տակ. բայց դուք ձեր պատանեկան սրտառումով յոյսերի անձրեւ ցօղեցիք նորա վրայ, ու սիմափուեցաւ քնէն։ Ուստի թող իմ մրմունջն էլ խառնուի ձեր ապօթքի և ուխտի հետ, թող իմ բազուկներն էլ տարածուին դէպի այն սուրբերը, որ գաղափարական կեանքի լեռներու բարձունքումն են բաղմած։

Մեր սրտերի երկրպագութեան այս հանդիսին, բարեկամ աշակերտներ, կուզեմ քաջարի սուրբ մարդու կերպարանքը ցոյց տալ ձեզ, բայց անհնարին է ինձ անհունութիւնը գրկել. կուզեմ լեզուով սրբութիւնը ճառել, բայց վսեմութիւնը պատմելու համար լեզու չկայ։ Եղել

էք դուք բնութեան ծոցում գիշերուայ պահուն միայնակ ու նկուն. ձեր շուրջը ծաղկաւոր դարերի, ձեր գիմացը երկրից երկինք սլացող հսկայ լեռներ, որոնց սասրոտը քերելով լուսալով հասում ու ճկուն մէջքով պատոյներ գործելով խոյս տալիս արծաթիփրփուր գետակը։ Ձեր գլխու վերև կապուտակ անհունութեան վերայ բեռնուած կ'պլպլան անհամար աստղեր. նոցանից շատ աւելի վար կախուած կ'վառի ժպտերես լուսին, նա ծիծաղում է, վառի վերայ, ծաղկանց երեսին։ Մեղմիկ աւուրով սուլում է զեփիւռ։ Ձեզ թուում է թէ այդ զեփիւռը հեռու յաւիտենականութեան սրտէն է գալիս. ձեզ թուում է թէ այդ լուսինը յաւիտենականութեան աչքն է, աստղազարդ կապուտակ երիցքը՝ նորա հագած ծաղկաւոր ծիրանին, լեռները նորա գահն են, գետակն՝ արցունք, հաղարերանով դաշտ ու հովիտ՝ անձեռագործ գորգ նորա ոտքերու տակ փռուած։ Այս վեհութեան առաջ ձեր սրտումը հիացմունքի և երկիւղածութեան ապրիւր է ծնում ու խեղդում ձեր լեզուն, ձեր ձայնը։ Դուք ձեր փոքրութիւնն զգալով այս վեհութեան առաջ համբանում էք ու լուռ մնում։

Մեծ, սուրբ ու քաջարի նահատակները նման ապաւորութիւն են գործում մարդու վերայ։

Ես կանգնած եմ այժմ քան լեռներ բարձր, քան ալբիւր պարզ, քան լուսին պայծառ վեհ ու սուրբ առաքելոց առաջ։ Երկու հազար տարուայ խորութիւնից է գալիս նոցա անուշիկ ձայնը և արձագանք գտնում աշակերտական մատաղ կրծքում։ Ժամանակի հզօր ալիքը բիւրաւոր մարդիկ է գլորել տարել յաւիտենական մոռացութեան ծոցը, բայց քաջարի սուրբերը, որոց պատուանդանը երկիրն է, օթեւանը՝ երկինք, կանգուն են անշարժ և կանգուն կ'մնան, քանի որ աշխարհը բարոյական այժի կ'կարօտի։

Ահա այդ սրբոց նկարագրելու համար անզօր է լեզուն, վասն զի նոցա հոգու գաղտնիքը յաւիտենական կնքով է կնքած և անկարելի է կտրել այդ կնիքը, լուծել այդ հանելուկը։

Բայց հետեւեցէք ինձ սիրելիք, զէպի վեր նայեցէք. անպիտութեան սև ամպերից, որի վերը սուրբ մարդիկն են, տեղ տեղ պատառուածքներ կան, նայեցէք այդ նեղ անցքերից ու տեսէք քաջարի սրբոց, որչափ տեսնել կարելի է։ Դորա նման չեն սովորական մարդոց և աչ գոցա աշխարհը՝ սովորական աշխարհին։ Մենք կանգնած ենք այստեղ և աշխարհի ձայնը մեզ ասում է. «Ուրիշների նման եղէք, ուրիշների նման զործեցէք, ուրիշների նման մտածեցէք, թող ընդհանուր սովորութիւնն ինչպէս

մահ ծանրանայ ձեզ վերայ, դուք ամբոխի սովորական ճանապարհովը գնացէք, ապա թէ, չ՝ աշխարհը կ՝հալածէ ձեզ»։ Իսկ սրբոց աշխարհից եկող ձայները հակառակն են պնդում. «Հեռու կեցիր չարից, որովհետև իմ, ճշմարտութիւն սիրիր, յետ դարձիր ամբարիշտների ճանապարհից, միշտ քու Տէր Աստուծուն յիշիր ու մի վախենայ աշխարհի անիրաւութիւնից, ընդունիր աշխարհի հալածանքն իբրև սատանայի անբաժան հետևանք»։ Եւ այս սուրբերը մի ճանապարհ են գծում քո առջև, որ քեզ դէպի անմահ աստուածանմանութիւն է տանում։ Այդ ճանապարհը բարոյական արիութեան ճանապարհն է։

Բարոյական արիութիւնը սովորական արիութիւն չէ. դա մի արիութիւն է, որ յանուն ճշմարտութեան արհամարհում է ամբոխի կարծիքը, որ հալածանքի աչքերի մէջն անվախ է նայում տիրին պաշտպանելու, որ մահից չի երկնչում ազգի սովորութիւնը արմատից խլելու, որ միջակութիւնից բարձրանում է և անցաւորի, պայմանական կեանքի շղթաները խզելու երկնից։ Թող ձեզ համար հասկանալի դէպք երկու օրինակ պարզեն այս արիութիւնը։

Հինաւուրց Սարկիրօն զօրավարը յայտնեց Վեսպասիանի իմաստուր Աղրիկոսին. հարիւր

տարուց աւելի քրիստոնեայ Հռոմայեցիք հրաւիրեցին նորան կրկէսների խաղերին, որ դեռ շարունակուում էր հեթանոսութեան օրերից։ Խաղերն սկսում են. կրկէսը բոլորել է 80,000 ամբոխ. փառազարդ գահի վերայ բազմած է կայսրը։ Բարձրահասակ, հսկայ, ուժեղ տղամարդիկ կրկէս են իջնում։ Դռան թշուառ մարտիկներն են. «Բարով մնաս կեսար, մենք մեռնելուց առաջ քո ստերուդ տակն ենք ձգում մեր յարգանքը»։

Մերկ են սրերը. էլի մի վայրկեան, էլի մի նշան և նորա կ'լողան տաք արեան մէջ։

Նոյն վայրկենին արգարութեան ուժով գինուած մի խեղճ կրօնաւոր, ամբոխից ջոկուում, կրկէսն է թռչում մեղսալից սովորութեան դիւական շղթան խորտակելու։ «Մարտիկները չպէտք է կռուին, ապաղակում է նա. անմեղ արիւն թափելով էք շնորհակալ լինում Աստուծուց»։ 80 հազար կրծքից միանուագ դուրս է ժայթքում ատելութեան մի դղրդ. «Ո՞վ է այդ յանդուգն և անպիտանը, որ համարձակուում է մեզնից առաւել հասկացող երևալ, ով է որ 80 հազար քրիստոնեայ ժողովուրդ է մեղադրում վատութեան մէջ. կորչի նա, գարկեցէք, կտոր կտոր յօշոտեցէք»։ Կանգնած է քաջարի սուրբը կրկէսի վերայ, հազար քարեր

տեղում են նոքա գլխին և գետին գլորում։ Մարտիկներն անդամ, որոց փրկութեան համար բարձրացաւ նահատակի ձայնը. մերկ սրերով շամփրեցին, կտոր կտոր մանրելով խառնեցին հերոսի մարմինը կրկէսի աւազներու հետ։ Խաղերը շարունակուեցան, 80 հազար դոյզ ձեռք ծափ էր զարկում։

Վերջացաւ արիւնոտ կրկէսը. բայց անիրաւութեան ամպերը ցրուեցան անմիտ ամբոխի աչքերից. նահատակի արդար արիւնը նոցա հոգու վերայ ծանրացաւ, ամօթի զգացմունքը զարթեց ամէնի սրտում և կրկէսների հեթանոս խաղերն ընդմիշտ վերացան այն պատճառով, որ մի խեղճ կրօնաւոր բարոյական արիութիւն ունեցաւ և աշխարհի տարեգրութեան երեսներից մի ոտ բիծ ևս ջնջուեցաւ։

Մի քանի տասնեակ տարի առաջ Էսօն քաղաքում կար մի ճարպիկ, առողջ և կայտառ պատանի։ Էսօնում տգեղ սովորութիւններ կային, յաճախ հաւաքուած ամբոխը այնպիսի կոպիտ երգեր էր երգում, որ տանելի չէր բարեկիրթ մարդու համար և ոչ վայել քրիստոնեայ ժողովրդին։ Եղպիսի մի ժողովում մեր յիշած փոքրիկ տղան, առանց վախենալու ծաղրից, ծեծից, կանգնում և արգելում է իւր ներկայութեանը անպատշաճ երգեր երգել. և երբ

մոլեգնած ամբոխը չի լսում նորան, նա թողնում է ժողովը և դուրս գնում։ Ամբոխին սիժափուտից, բարոյական արի հերոսի վարմունքը վերջ դրաւ ազգ սոփորուիթեան։ Այդ պատանին Գէորգիջ Պատիսոնն էր, որ եպիսկոպոս եղաւ և Մելանեզիայում նահատակուեցաւ 1871 թ։

Հերիք է։ Երդ, այսպիսի մարդկանց կեանքի համեմատութեամբ մերն ոտոր և եսական չէ. բայց դոցա կեանքն իսկ միայն ազգ ստուերն է Փրկիչ Յիսուսի և նորա սրբազան առաքելոց կեանքի, որոնք բարոյական արիութեան անբասպաս ապրիւր են ոչ միայն Աստուծոյ սուրբերի այլև ամէն մարդու և մասաց աշակերտի համար։

Այժմ, սիրելիք, ուզում էք բարոյական արի սուրբերին հետևել, ուզում էք ջանք դնել որոմներ խլելու մարդկանց սրտերից, ուզում էք բարձր կանգնել ձեր շրջապատից, դաս առէք Էսոնի պատանուց, դաս առէք բոլոր սուրբերից Հայոց մեծ սրբերի ոտնի օրը։

Գաղափարական կեանքի լեռան գլխին կանգնած ձեզ են նայում Հայոց ժողովրդի առաքինի սուրբերը. ձեր հայեացքը գէպի նոցա դարձրէք այստեղից մինչ այնտեղ մի նեղ շաւիղ է անցնում, բարոյական արիների արիւնով կարմիր գծուած ճանապարհ։ Այդ շաւղի վերայ օձերու նման կ'սողայ լժունաւոր նախանձը,

առիւծի պէս կ՚մռնչայ կոյր եսականութիւնը, նորա վերայ անընդհատ կ՚թռչեն պարան մտած շարաւթեան նետերը։ Այդ ճանապարհը քշերն են բռնում, այդ ճանապարհն է ցոյց տալիս ձեզ դպրանոցը։ Գոտեսրուեցէք արիութեամբ, քաջացէք հաւատով, յառաջ դէպի արհաւիրք, յառաջ դէպի անմահացած սրբերի սարի գագաթը.....

«Դեռ հեռու է կատարն անամպ ու յստակ։
Բայց եթէ չհասնենք այնտեղ մենք այսօր,
Վասն այնտեղ ենք անշուշտ. մերն է յաղթանակ,
Դէպի վեր, սարն ի վեր, անվհեր զինուոր»։*

---

*) Նանոթ. Խօսուած է 1900 թ. դեկտ. 2-ին ս. Թադէոս և Բարդուղ. առաքելոց տօնի օրը Զուշու հոգ. դպրանոցում, իբրև տմփոփումն ամբողջ հանդիսի։

ԺԳ.

ՀԱՅՐԻԿՆ ՀԱՅՈՑ

„Ոսկերչ ցամաքեալք լուարուք զպատգամս Տեառն

Մանկական ու պատանեկական այս անոյշ թոթովանքների տպաւորութեան տակ աչքիս յանկիման կ'գայ ու կ'փռուի մարդու ոսկորներով լի մի դաշտ։ Անկենդան դաշտի վերայով լալագին կ'գալարուի, ողբի մրմունջ կ'կարդայ ու ցամքած ոսկորներից խոյս տալով կ'փախչի Յորդանան գետը։ Սիօնի սարի լանջից կիջնի Տէրը և Երուսաղէմի տաճարից ձեռքէն բռնելով կ'հանէ հայրենի սուրբ տան հարազատ զաւակին. կ'բանայ նորա կուրծքը, գոհարանից կրակ կ'վերցնէ կ'դնէ այնտեղ և ցաք ու ցրիւ ոսկորների դաշտ կ'հանէ։ «Զրջիր, մարդու որդի, շրջիր այս ոսկորների ընդարձակ դաշտը, ասա իմ հրամանով ահեղ ձայն արձակիր. «Ցամքած ոսկորներ, ցամքած ոսկորներ, լսեցէք Տիրոջ պատգամը». գուցէ թէ կենդանանան դորա։ Եւ մարգարէի հրաբորբոք շունչը կրկնում է «ոսկերք ցամաքեալք լուարուք զպատգամս Տեառն»։ Լսում են ոսկորները, ցրիւ յօդերը միանում են, ջիլ և միս է գալիս վրաները։

«Մարդու որդի, որոտում է դարձեալ Ցիրոջ ձայնը, մարգարէացիր ու ասա. «Եկ շունչ, եկ շունչ, եկ չորս կողմից հողմերի նման, փչիր այս մեռեալների վերայ որ կենդանանան, յարութիւն առնեն։» Հնչում է մարգարէի զոչող ձայնը «Եկ շունչ, եկ շունչ». և կանգնում են մեռեալներ և յարութիւն առնում դիակնացած ժողովուրդը։

Ցամքած ու թափուած ոսկորները ապերախտ ու անխրատ Իսրայէլի ժողովրդի լաւագոյն զգացմունքներն էին. նորա կենդանի էին, նոցա մէջ կեանք էր եռում, քանի որ Իսրայէլի աչքը ուղղած էր դէպի Հայրենի սրբազան տաճար, ուր Սինայի պատգամաբերի հոգին էր խօսում, ուր Ահարոնի բուրվառի խունկն էր ծխում հայրենի յիշատակաց առաջ, ուր պսակակիր Դաւթի քնարն էր հնչում։

Բայց կուրացաւ Իսրայէլ. մոռցաւ թէ իւր նախամայրերից մէկը Ղոմի կինը Օտար Սոդոմի կեանքի ոիրոյ տենչանքով իւր աչքը յետ էր դարձրել և ապի քար կտրել, ինքն էլ իւր աչքը Սիոնից դարձուց և դէպի Բաբելական դաշտերն ուղղեց ու սոկրացաւ, ցաւ ու ցրիւ եղաւ ու դաշտերում տարածուեցաւ։ Այլ դեռ կ'վառէր ոսկորների աշխարհը լուսաւորող Երուսաղէմի ս. կրակը, այլ դեռ կ'պահուէր նախ-

նեայ հոգին այդ ս. տաճարում ընարեալների ձեռքով։ Նորա կ'խօսէին Տիրոջ հետ աղօթքի լեզուով. «Նորոգեա զմեզ Տէր երբև զաւուրս զառաջինս». և Աստուած մարդարէ հանեց այդ տաճարից, որի հրաշունչ բարոյը կենդանութիւն տուաւ ոսկրացած Իսրայէլին։

Ակամայից աչքս կ'դառնայ դէպի Մայր Սրբոյի ափունք, վարեմի դալարագեղ ծաղկաւէտ ափերում ցամքած ու ցրուած ոսկորների դաշտ եմ տեսնում։ Տիեզերքի Տէրը Մասեաց սարի լանջէն իջաւ Մայր Էջմիածնի սրբազան դսհարանէն կրակ վերուց, մօտեցուց երիտասարդ Մկրտիչ վարդապետի շրմունքներին ու նորան ոսկորների ընդարձակ դաշտը հանեց։ Այն օրուանից կ'հնչէ նորա ականջին Տիրոջ տհեղ ձայնը, այն օրուանից բոցաս հառաչանքներով կ'կրկնէ նա ոսկերք ցամաքեալք, ոսկերք ցամաքեալք, լուարուք զբանս Տեառն»։

Յիսուն տարի հնչել է այդ ձայնը ոսկորների դաշտի մէջ. ոսկրացած զգացմունքները միայն շարժուել են, բայց չեն կենդանացել։ Այժմ երբ Հայրիկն Հայոց ծերացած է, երբ իւր արիմուտքը կիսնարհի, կեանքի վերջալոյսին զողզոջ ձայնով միայն այդ երկու խօսքը կ'կրկնէ «Ոսկերք ցամաքեալք լուարուք զբանս Տեառն».

Ձեր աչքը դէպի Հայրապետութեան բարձունքը դառնայ, ձեր դէմքը դէպի Արարատի հովիտ, ուսկից զարթուցիչ հովեր գան ու շունչ տան ձեր ոսկրացած զգայմանց։ Ապարդիւն պիտի անցնին Հայոց Հայրիկի այս վերջին հառաչանք, երբ Ռուսիոյ Ամենասրբազան Կայսեր հովանաւորութիւնը կ'վայելէ Հայրապետութիւնն Հայոց։ էլ երբ, ա՜խ, էլ երբ, իմ հարազատներ, կ'լսէք ծերոց պատգամը, կ'կենդանանաք ոսկրներ ու կ'կարդաք «Զարթիր փառք իմ, զարթիր, և ես զարթեայց առաւօտուց. ալէլուիա»

Յուշ լիցի ձեզ, իմ հարազատներ, Իսրայէլի ոսկերաց դաշաը յուշ լիցի ձեզ։*)

---

*) Ծանօթ. Գրուած է 1902 թ. փետր. 14-ին Նորին ս. Օծութեան Մկրտիչ կաթուղիկոսի անուանակոչութեան տարեդարձին Ցուշտ հոգեոր դպրանոցում, իբրև ամփոփումն ամբողջ հանդիսի։

ԺԳ.

ՄԻ ՆՈՐ ԱՒԵՐԱԿ ԱՒԵՐԱԿԱՑ ԱԶԽԱՐՀՈՒՄ

„Ահագ զրկանացս, Հաւաղ թշուառական գոսմարթեանս ազգամ զմեզ Հայոց աշխարհ“ (Մովս. Խոր.)

Դեռ կ'ծփծփան Սև ծովի ափեր Հայ ժողովրդի արեան կարմիր կոհակներով, դեռ կը-հնչէ սար ու ձոր շարժող հառաչանքների ազեխարշ արձագանք Սասնու սարերուց, ուր անօրէն սրէն արիւնաթաթաւ ընկաւ մի բազմաշարշար ժողովուրդ. դեռ կ'դեգերին օտար դաշտերում քարշ եկող ժողովրդի սրբացած զաւակներ, դեռ Ախալքալակի երկրաշարժից խորտակուած ժողովրդի գերեզմանի վերայ կը-մնայ խունկ, դեռ կ'լսուի Էրզուրումի մեր Հայ եղբարց սրտակտուր լացը երկրի ծոցն անցած հարիւրաւոր սիրելեաց դամբարանի քով, որոց կենդանի մնացածները ձմրան ձիւնը իրենց բոբիկ ոտքերով կ'հալեն կամ արեան կարմիր վտակով կ'զարդարեն։

Իսկ այժմ կանգնած է մեր առջև Զամախին իբրև մի հսկայական գերեզման, մի քարակոյտ, որի տակ մեր հարազատները կ'հանգչին, որի վերայ թշուառացած ժողովրդի թշուառագոյն մնացորդը քարացած կեցած է։

եւ թնչը լայ գեռ չունչը քերանին մայրը՝ փլատակների տակ ջարդուած իւր սիրասուն զաւակներին լմէ, բնաւեր կենդանի մնացածների բազմն ու ծարաւը։ Ի՞նչը լայ կենդանի մնացած որբը՝ երկրի ծոցն անցած իւր ծնողներին, լմէ ինք զինքն, իւր անտէրութիւն։ Ի՞նչը լայ Հայ ազգիկը՝ իւր բնաւիր վազամեռ փեսան՝ լմէ իւր անապատացած սիրան ու անարատութիւնը, որ անպաշտպան մնաց հողերից դուրս...

Այս սոսկալի թշուառութեան առաջ, որ իրրեւ տատնամեայ հեղեղ հոսում ու ջնջում է մեր սիրական ազգ, միայն է գալիս մեր անմոռան հօր ս. Խորենացու ոգին. «Ասա զրկանացս, ասա թշուառական պատմութեանս, որքամ զրեալ Հայոց աշխարհ»։

Ամերիկների աշխարհում ապրեցած այդ նոր աւերակի վերայ աչքիս յանդիման է գալիս ինքը Փրկիչն Յիսուս ձեռքը դէպի ձեզ մեկնելով, ով բրիստոնեայք.— «Երանի ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն»։ Եթէ թշուառութեան հոգմերը կարող են շարժել ձեր աչքի ծովեր, եթէ համարիւն եղբարց բարկ հառաչանքներ կ'վառեն ձեր սիրտ, իմ հարազատներ, մօտեցէք, մօտեցէք բազմի հալածեալներուն լի ձեռքերով։ Թող ձեր նուիրաբերութիւնն իրրեւ խնկահոտ բուրմունք դէպի վեր

ելնի, թող հասնում Աստուած այդ նուէրն ու շարժուի մեր թշուառութեան վերայ։ Քրիստոնէական գթութեան ճանապարհով կ'պահուի քրիստոնէութիւն, այս ճանապարհով կ'կանգնի ազգ, այս ճանապարհով կ'տեսնենք մեր նախնեաց աւետեաց երկիր և երկնքի անանց արքայութիւն, այս ճանապարհով կ'իջնի Բարձրեալ Աստուծոյ բարկացած սիրտը, այս ճանապարհով ժպիտ կ'դայ դառնացած երկնքի երեսին Հայոց աշխարհին նայելիս։

Զամախու շարժը համայն աշխարհի սիրտը շարժեց. Հիւսիսի հոգևարքիւը՝ մեր ամենողորմած թագաւորը իւր հոկայական հոգեհատոր թեւերի տակն առաւ թշուառներին առատ օգնութիւն անելով. Հայոց սրբացած ժողովրդի սգաւոր Հայրապետը՝ Հայրիկն Հայոց, իւր միշտ բաց, բայց ապրատիկ ձեռքով օգնութիւն հասաւ։ Երկու պետերի վարմունքը թող զեղեցիկ օրինակ լինի մեզ համար։

Հայ քահանայք՝ որ միշտ պատրաստի հունձ ունիք Հայ ժողովրդի մէջ, այսօր անդաստանը խոպան դարձաւ, այժմ սերմանեցէք, որ նորից հնձէք. շատ չէ, ձեր ստացած տօնական մի աջհամբոյրն այսօր թշուառներին դարձուցէք։

Հայ կանայք, որ առատել փափուկ զգացմունքներ ունիք, որ կ'սիրէք զովել գթութիւնն

ու հայրենասիրութիւնը, շատ չէ. ձեր ծաղկոնոցի նման պլիսարկների փեղոյլների մէկի պէս բաւ է, որ մի թշուառի ոտքերանը դառնայ։

Հայ հարուստ, շատ չէ, միայն կանաչ սեղանի վերայ թափուող ուերբով գրամիլ փշրանքներն հերիք է, որ Զամախու աւերակը վերականգնի։

Հայ աշակերտ, իմ պատուական սանիկներ. որ արձաղանք պիտի լինիք ձեր դասարակների լաւագոյն զգացմանց, գիտեմ շատ աղբատ էք, բայց մենք մի մի տեսարակ պակաս կուզենք ձեզնից, նորա գէնը ձեզնից ուելի թշուառ մանուկներուն տուէք, ու թող վարժուին ձեր ձեռքեր միշտ դէպը խեղճութիւն մեկնուելու։

Հայ ուսուցիչ, որ աւերակներու լեզուն ամենէն ուելի լաւ կ'հասկանաս, որ երևակայութեանդ առաջ դարերի Հայոց թշուառութիւնը կ'լեռնանայ, գիտեմ դու անմատն չես ու չես մնայ օգնութեան գործում։

Անուասիկ ձեր ամենիդ առջեր աւեստարան դրի, ս. աւեստարան կանքի մէջը բացուած։ Յոյց տուէք թէ դուք քրիստոնեայ էք, Հայ էք և չէք քարասիրտ։ Եւ քաջ իմացէք, եթէ ձեր խօսքերը, ձեր բարձրագոյն զգացմունքները պէտք եկած վայրկենին գործ չեն դառնայ, մեր ս. Նախնեաց արի հոգին դեռ

չի մեռել, նա կ'վերկենայ, կ'կանգնի ս. տաճարի մէջ, կ'հանէ ձեզ Լուսաւորչու հիմնած քրիստոնէական աւազանից, ձեզ վերստին աւազի մէջ կ'մկրտէ, և գատապարտութեան մի տախտակ կ'կախէ ձեր վզից այս վերատաւելեամբ. «ահա փարիսեցի»։*

---

*) Ծանոթ. Խօսուած է 1902 թ. փետր. 17-ին Ջուչու Ղազանչեցոց եկեղեցում։

ԺԵ.

ԸՐԴԸՐՈՒԹԻՒՆ

„Արդարութիւն ես արդարութիւն յաւիտենից
եւ Օրէնք ես ճշմարիտ ենն“ (սաղմ.)

Երեակայուիմեանս առաջ փռուած մի գաշտ եմ տեսնում, պատերազմի գաշտ։ Հայրենիքի և ազգային շահերի մրրիկը քշել բերել է երկու հակառակ բազմութիւն այս ընդարձակ գաշտը, որ արեան է ծարաւ։ Արեւի շողերու առաջ ակնախտիպ շողշողուն սրեր, անձրեւատարափ ահեղ հարուած, հնձուող լծաւորքոր արիւնամիամիաւ գլուխներ, բիւրաւոր անգլուխ դիակների անկումն, վիրաւորների ապեխարշ հառաչանք, մեռնողների երերուն շրթունքներ, խոցուած սրտերից թռչող վերջին շունչ և յուսոյ... բոսորագոյն դիակներով զարդարուն մի գաշտ, արնոտ գետակ, արնծիլ ծաղիկներ և խաղաղ մեռելութիւն։ Իսկ վերը՝ երկնից կապուտակի մէջ հանդարտ լողացող կերեսմանների պահապան լուսին։

Սոսկում եմ ես մի վայրկեան արնխառնում պատերազմից, որ բիւրաւոր մատաղ կեանքեր է փռում գաշտերի վերայ, չէնն՝ անչէն, ապատն՝ անապատ առնելով։ Բայց ս. գրքի աշխարհից,

ուր պատերազմական զէնքի շառաչ, փողերի շանթեղ է հնչել շատ անգամ, ակամայիս մի ձայն է գալիս։ «Մարդու սրտի, մի սոսկալի պատերազմից, վասն զի նա շատ անգամ խաղաղութեան համար է մղուում, հայրենիքի անարգուած պատիւն է պաշտպանում, մարդասիրութեան համար է թափուում արիւն և երբէք պատերազմը չէ ջնջել մի ազգի կեանք, երբէք լծոյն չի լցրել մարդկանց ոսկորների մէջ, որ կեանքը վարակուի, դիմի և ինքնիրեն մոխիր դառնայ։ Կայ մի արիւն դաշտ, ուր արիւն չկայ, բայց ուր մարդկանց ու ազգի ծաղիկը մոխիր է դառնում, հոգմաձար ցրուում և կեանքն յաւիտենական մեռելութեան փոխուում։ Այդ դաշտը անարդարութեան դաշտն է։

Անարդարութեան այդ սոսկալի դաշտը ազականուած մարդու և նման ազգի որտի մէջն է տարածուում։ Ազգակեր անարդարութիւնից մեզ ազատ պահելու համար այսօր՝ արդարութեան երկրպագու Դաւիթ մարգարէն, անարդարութեան թշնամին՝ Գուլիան աւետարանիչը, արդարութեան քարոզիչ Գօրան առաքեալը հանդէս են եկել, մէկն լոր բնարով, մէկն իրրև նոր կեանքի աւետարեր, միւսն իրրև վերանորոգութեան գլխաւոր զգուշացնող մեզ անարդարութիւնից, որ ազականուած

կեանքի, ինքնասպան ազգի լայնարերան գերեզմանն է։ Լսենք նոցա խօսքը։

«Արդարութիւն քո արդարութիւն յաւիտենից և օրէնք քո ճշմարիտ են. փրկեա զիս ի զրպարտութենէ մարդկան և պահեցից զպատուիրանս քո (սաղմ. 118)»։ «Մի լինիք լծակիցք անհաւատից. քանզի զի՞նչ հաղորդութիւն է արդարութեան ընդ անօրինութեան (կորնթ. բ. 6.)։ «Երանի է ձեզ, յորժամ ատիցեն զձեզ մարդիկ և յորժամ որոշիցեն զձեզ և նախատիցեն և հանիցեն անուն չար զձէնջ վասն որդւոյ մարդոյ» (Ղուկ. Զ. 22)։ Արդարութեան այն ազամանդը, որ այս սքանչելի խօսքերի մէջն է պարփակուած ես ցոյց կ՚տամ, կ՚բացատրեմ ձեզ։

Արդարութիւնը երկու ծագկանի մէկ փունջ է. ծագիկներից մէկն անաչառութիւն՝ միւսն անկեղծութիւն է։ Լինել անաչառ, նշանակում է բարուն՝ բարի, չարին՝ չար ասել. լինել անկեղծ, նշանակում է՝ լինել այն՝ ինչ որ ես և չձևանալ՝ ինչպէս որ չես։ Ապա ուրեմն լինել անաչառ, լինել անկեղծ, նշանակում է արդար լինել։

Արդարութեան լուսոյ հակադրութիւնը անարդարութեան խաւարն է. սա էլ երկու ծագկանի մի փունջ է, որոնցից մէկը աչառութիւնն

է, միւսը՝ սուտն ու իւր եղբայր կեղծիքը. ծաղիկները սև են, հոտը՝ գարշելի։ Լինել աշտակոտ, ստել ու կեղծել նշանակում է անարդար լինել։ Արդարութիւնը յաւիտենական օրէնք է, որ տուն, ազգ է շինում. անարդարութիւնը ախտ է որ տուն, ազգ է քանդում։

Երբ դուք տեսնէք հարուստ մեծատան հոկայական ապարանքներ, ոսկու կոյտեր և աստուծոյ հաց և յանկարծ տեսնէք այդ ապարանքի կործանումն, մեծատան գաւակներին հաց մուրալիս, իմացէք, որ այն ապարանքը անարդարութեան վերայ էր շինուած, որ այն հացը անարդարութեան խմորով էր հունցած։

Երբ դուք տեսնէք մի ընտանիք շատ բաղդաւոր ու երջանիկ և յանկարծ բաղդը խորտակուած, ինքն արատաւոր, իմացէք որ անարդարութեան թոյնը թափնուած էր այն բաղդի մէջ։

Երբ տեսնէք մի ազգ, ուր կինը մարգուն, մարդն իւր կնոջ, քոյրը եղբօր, եղբայր քրոջ, հովիւ հօտին, հօտն իւր հովուին, ընկեր ընկեր, որդին իւր հօր, ամէնք մէկին, մէկն ամէնքին խաբում, ստում, կեղծում հոգին,—մի խաբուէք այդ ազգի կենաց ծառի ճիւղ ու տերևով. նորա արմատում անարդարութեան որդը գործում է և շուտով ահեղ դղրդիւնով կ'խորտակուի այն ծառը։

Երևի կ'հարցնէք, ինչո՞ւ չենք տեսնում անարդարութիւնը, որ շճաշակենք նորա դառնահամ պտուղները։ Որովհետև նա արդարութեան դիմակն է դնում, արդարութեան լուսաթափանց շորերով է շրջում և այդ ծպտեալ անարդարութիւնը ամէն օր, ամէն ժամ ամէն վայրկեան արդարութիւնն է հալածում, արդարութիւնն է սպանում, արդարութիւնն է քարկոծում, արդարութիւնն է խաչում։ Նորա ձեռքով ընկան մարտիրոսներ, նորա լեզուով թունաւորուեցան նահատակներ, նորա գրչով տարապրեցան սուրբեր, նորա չղմեներով դատապարտեալի ամենին կատուեցան ընտիրներ։ Համբոյր նոցա անկման տեղերուն, գալկահար դէմքերուն, տարապրութեան կոխած հողերուն. մի կաթիլ արցունք նոցա հանդարտ՝ բայց վրշտերով այրուող սրտերուն։

Բայց... բայց չէ տեսական անարդարութեան յաղթանակը. յանկարծ երկնքի մի գրգիռնով բարձրանում է արդարութեան մանչոց քամին, հանում թափում է ծպտեալ անարդարութեան հանդերձը, մերկանում է դէմը, զզջում են մարդիկ և ամէնքի առաջ արձանանում կանգնում է արդարութիւնը։ Նա զուգս ու զարդ չունի, և արտաքինով չէ գեղեցիկ, բայց սարսափելի է։ Նորա աչքերի մէջ կրակ

կայ, որից սոսկում են չարագործները, նորա լեզուի վերայ մի սուր նշտար, որից դողում են աշխարհի հզօրները։ Այո՛, սոսկալի է նա, բայց շատ սիրելի։

Սիրելիք, իմ հարազատներ, սիրենք այդ արդարութիւնը, նա մեր կեանքի ճրագն է, մեր որոի խաւար անկիւնները լուսաւորող կանթեղը, մեր երջանկութեան հոգը, մեր ճակատը զարդարող պսակ։ «Եկայք շինեսցուք սուրբ զիսորանն լուսոյ», կերգէին մեր սուրբ նախնիք. այդ լուսոյ իսկական խորանը մեր սիրտը հասկանանք. շինենք այդ կիսաւեր խորանը և թող արդարութիւնը իւր վայելուչ բնակարանումը բազմի։ Եւ այդ սուրբ խորանում ծունկի գանք ու ապօթքով մրմնջանք, «Արդարութիւն քո արդարութիւն յաւիտենից և օրէնք քո ճշմարիտն»։*

---

*) Ծանօթ. Խօսուած է 1902 թ. մարտի 10-ին Ջուշու Ագուլեաց մայր եկեղեցում։

ԺԶ.

ՀԱՅ ՕՐԻՈՐԴԻ ԲԱՐԻ ՎԱՐԿՆ Է ԳՈՎԵԼԻ

Իմ բարեպաշտ ունկնդիրներ.

Ցկար ուժերուս չափով շատ անգամ կենդանի խօսքի լեզուով խօսեցի ձեզ հետ. շատ անգամ հառաջանքներիս ձայնը բարձրել է ձեր սիրտ, բայց յետ դարձող արձագանքները, որոնք միայն քարոզչի սփոփանքը պիտի լինին՝ բաւարար չեղան. այն, եղան որոնց մոմի նման փափուկ և հարթ սրտերու վերայ կենդանի խօսքի գրիչը փորագրութիւններ արաւ. բայց մեծ մասով երկաթի պէս կարծր սրտերի հանդիպեցաւ, ուր հետք չմնացաւ։

Ցեսնել էք դուք մեծ քաղաքների փողոցներուն ծաղիկներ ծախող տղայ ու աղջիկ ապրատներ, նոքա առուտանքներով ծաղիկ են յանել, ջրել, հասցրել, որ մի օր իրենց գուրգուրած ծաղիկը վաճառելու տանին և նոցա սիրուն տեսքը, անոյշ բոյրը դրամով փոխեն ու մխիթարուին։ Բայց ուշ ամէնքը գին են տալիս նոցա ծաղիկ փնջերին և շատ անգամ, իրիկուան գէմ թոռոմած ծաղիկները ձեռքում, վիշտ սրտում յետ են դառնում նոքա իրենց ապրատիկ

խրճիթը, յուսաբեկութեան և նոր յոյսերու ալիքներով ծեծուած։

Ճիշտ այդպէս է և քարոզչի հոգեկան վիճակը. ոգեորութեան լիներով թռչում է նա դէպի Տիրոջ տաճարը իւր սրտի մէջ ցանած, իւր արիւնով ջեռուցած, իւր արցունքով ջրած ծաղիկները վաճառելու։ Բայց շատ անգամ ոչոք չի գնում նորա ծաղկունք և՝ սրտումը կրակ, աչքումն արցունք նա յետ է դառնում և յուսահատ առանձնութեան մէջ բողոք կարդում առ Աստուած. «Տէր, եթէ ես արժանի չէի քո փառքի բեմը ելնելու, ինչու ոգեորութեան կրակ վառեցիր իմ հոգու մէջ, նորա համար, որ քո խոկ անկած գալար ճիւղն այրես։ Դու էիր, որ քո մարգարէի լիովին ձայնով հրնչեցիր ականջիս «ուրախ զի գեղեցիկ են ոտք աւետարանչի ի վերայ լերանց բարձանց... Ե՛լ ի վերայ լերինդ բարձու, աւետարանիչդ Սիօնի, բարձրացս զբարբառ քո, աւետարանիչդ Երուսաղէմի ..»։ Քո ձայնն էր որ իմ մատաղ սրտումս որոտաց. «Որդի մարդոյ, դէտ կացուցի զքեզ ի վերայ տանդ Իսրայէլի..... Իսկ այժմ «Տէր, ո՞ հաւատաց լրոյ մերում»։ Ուրեմն խաբեցիր ինձ, ով Տէր։

Ահա այսպիսի յուսահատ մտքումն մէջ էի մի օր, հոգուս փրփրուն ծովի ալիքները

երկար ժամանակ բաղխեցին ափերը, մինչև որ ուժասպառ եղան և խաղաղություն բերին։ Ելան բոլորած միասին. ընկողմանած դիրքիս մէջ հայեացքս լուսամուտէն թափ անցնելով նորա արծթափայլ դէմքին բեռուեցաւ։ Իմ հարցիս պատասխանը ես լսեցի ստասում։ Դրդռուած երեակայութեանս առաջ տեսայ մի կայծ, որ լուսնից թռաւ և հանդարտ լողալով ու հեղհեղէ մեծանալով՝ դէպի ինձ եկաւ։ Ապշած աչքերուս դիմացը կանգ առաւ լուսնի շողերով մի լուսավառ մարդ և այս սիրտանքը կարդաց. «մարդու որդի, «քաջալերեաց, ես եմ». քո բողոքդ արդար է, սակայն չէ յուսահատական. լսիր իմ պատգամը և հաղորդիր դայն քո ժողովրդին. եթէ այդ էլ նոցա վերայ շաղդէ ն՝նորա անուշադիր թոզնեն խօսքերդ, այն ժամանակ ես քեզ կ՝հանեմ այս անապատից, ուր քրտունքդ անպտուղ սրտերի աւազի մէջն է ծծուում և կ՝տանեմ այնտեղ, ուր ծաղիկ է ծաղկում։

Դէհ, լսիր ինձ։

Թոթովանքներիդ մէջ դու ողբացել ես մինչև այսօր Հայ ժողովրդի կենաց ծառի շորցած ճիւղերը, որոնք են՝ ագէտ քահանայութիւն, անխոհեմ երիտասարդութիւն, անկիրթ մանկութիւն։ Բայց մոռացել ես, որ այդ ճիւղերին մնունդ տուող, իւր ուսերի վերայ

պահպանող արմատում որդ է մտած և արմատի հիւանդութիւնից է, որ ճիւղերը յաւարար դարձան ու գօսացան։ Հայկական կեանքի այդ արմատը Հայ կանայքն են։

Գ՝յիշես թէ հզօր Եգիպտոսի երկրի ձեռքերից ազատուեցաւ Իսրայէլի մի բուռն ժողովուրդ։ Եգիպտոսի օրիորդները բարոյապէս հիւանդ ու հիւծուած մայրեր եղան և վատարի և հիւանդ զաւակներ ծնան. իսկ Իսրայէլի առողջ և կուսական օրիորդաց գրկէն տառապանքների մէջն անգամ հսկաներ ծնան, պարապլուխ ունենալով ահեղ Մովսէս մարգարէին։ Եգիպտական հիւանդոտ կանանց դաճաճ որդոցը դարտերը, մարախը, մուկը կերաւ։ Փառաւոր Եգիպտոսին անբարոյականութեան խաւարը տիրեց այն ժամանակ, երբ Իսրայէլի բարոյական կանանց հսկայ զաւակները արեան ծովերով անցան և լուսաւոր ամպը առաջնորդում էր նոցա։ Հռաքելի տարագիր ու պանդուխտ Յովսէփ որդին Եգիպտոսի անբարոյ կնոջ ձեռքերում ոչ իւր մատաղ կեանքի ծոցիկը, այլ միայն իւր պատառոտուն հանդերձները թողաւ. ուստի և Պետափրէսի զահը առաքինի Հռաքելի զաւակը նստաւ։ Բայց եկաւ մի օր էլ, որ Իսրայէլի օրիորդներու վերայ էլ անբարոյականութեան կարիուտը թափուեցաւ, մանրացաւ Իսրայէլ,

մաշուեցաւ սերունդը։ Իսրայէլի օրիորդները մկան նման մանր, նապաստակի նման վախկոտներ ծնան։ Կուսական այդ կարիտասար անտառի մէջ միայն մի բարձրակատար կուսական ծաս մնաց, մի արհամարհուած Մարիամ, որ իւր բոյրերի անտաւորութիւնից հեռու մնաց. ուստի և Աստուած իւր Փրկիչ Որդուն կոյս Մարիամի գիրկը դրաւ, օրիորդական կուսութիւնը սրբագործելով և Մարիամը իւր տուած Աստուածորդու պատճառով ինքն ևս աստուածանման դարձաւ։

Անթիւ են պատմութեան մէջ օրինակներ, ուր օրիորդական կուսութիւնը դարուն է դարձել ազգերի, արատաւոր օրիորդութիւնը՝ յաւիտենական ձմեռ։ Եւ այս յաւիտենական օրէնք է, ով թոթովախօս, կոխկռտուած ճանապարհների վերայ, ուր ամէն անցորդի ոտքն է ընկնում, բոյս և ծաղիկ չեն ունի, իսկ լերանց բարձունքներում, ուր տաբիտութեան սրտին պահապան արծիւներն են հսկում, այնտեղ մշտապալար դարուն է, այնտեղ դրախտ երկրաւոր։

Դարձուր հայեացքդ Հայոց աշխարհի վերայ։ Ցեռ, Հայոց կուսական դաշտերն առաջ որքան առատ ցորեն էին տալիս ատոր հասկերով, իսկ այժմ ամուլ անապատներ դարձել և տեղ տեղ միայն ազգուն հասկեր։ Առաջ հաւատով զո-

բեղ, հոգով արի, մարմնով առողջ հերոսները փառք բերին իրենց նման մայրերուն, իսկ այժմ հաւատով տկար, հոգով վատարի, մարմնով ախտաւոր զաւակները իրենց ժառանգութիւնը մայրերից ստացան և ամօթ բերին նոցա անուան ու յիշատակին։

Եւ ինչո՞ւ, կ'հարցնես, ահա՛ ինչու.

Առաջ Հայ ազգիկը մայրենի յարկի տակ էր մեծանում. այդ սրբազան տան մէջ, որ միևնոյն ժամանակ և տաճար էր նորա համար նա ապօթում էր, նա կրթուում էր աշխատանքի մէջ, նա մայրութեան համար էր պատրաստուում։ Ամօթխածութեան կարմիր գոյը նորա երեսից ոչ ընկնում և ոչ պատռում էր. նա նման էր անմատչելի լեռների յանգին բուսած շուշանին, ուր երիտասարդի յանդուգն ձեռք չի հասնում։ Հայ ազգիկը օժիտով չէր գնայ մարդու, նորա օժիտը իւր առաքինութիւններն էին, որի առաջ ծունկ էին իջնում երիտասարդները և շատ անգամ նորա ծնողներին իրենց դանձերն էին առաջարկում, որ առնեն այն մարգարիտը։ Եւ օրիորդների առաքինական մրցման պատճառով ոչ մէկը տանր չէր մնայ, թէկուզ մարմնական պակասութիւն ունենար։

Մի իմաստուն թագաւոր այսպէս է ասում.

երբ որ կանայք Աստուծուց վախենալը և մարդկանցից ամաչելումի կոչմը դնեն, կամ իրենք աշխարհի վերջը կ'բերենկամ աշխարհն՝ իրենց։»։ Այժմ այդ ճշմարտութիւնը իրականութեան մէջ տես։ Դարերուց ի վեր մերթ արևի ճառագայթարձակ թեերով կ'շրջեմ ու կ'դիտեմ աշխարհ, մերթ լուսնի շողերով կ'լսեմ։ Ցեսնում եմ այժմ Հայ օրիորդներից շատերին, որոց երեսին ամօթխածութեան քօղը չկայ. ծնողական յարկը նոցա համար այլ ևս չէ տաճար և աշխատելու տեղ. տեսնում եմ կուսական համեստութիւնը թաղչոմած։ Եւ դիտես ինչ է ասում նոյն իմաստուն թաղաւորը կնոջ անհամեստութեան համար. «Կանանց բոլոր միւս պակասութիւնները կանաչ ճիւղի կ'նմանին որ կարող ես շոկել, բայց իրենց անհամեստութիւնը չոր փայտի կ'նմանի, որ չի շոկուի, այլ կ'կտրուի»։ Առաջ Հայ աղջկայ սրբութեան սեղանը տանն էր, խոստովանահայրը՝ մայր, այժմ լեռ ու դաշտ, խոստովանամայրը մանկար..... ՈՒ, շատ բան եմ տեսնում, տեսնում եմ ու մրսկրտում։ Այժմ եթէ անցած գնացած ժամանակների Հայ օրիորդները յարութիւն առնեն, գերեզմաններից վեր կենան, իրենց արատաւոր քոյրերին տեսնելով, վերստին դէպի գերեզման կ'փախչեն ամօթից, լաւ համարելով սև հողե-

բումը պառկել քան այդպիսի քայլերու մէջ ապրիլ *)։

Եւ այս կեանքի դառնութեան մրուրն ո՞վ է քամում։

Աստուծոյ արդարութեան օրէնքով նախ իրենք այդ օրիորդները. ապրատ դեկջուկ աղջիկները շուտով մայրութեան կ'հրաւիրուին իրենց առաքինութեան շնորհիւ, մինչ դեռ առաքինութիւնից լծափուբներուն օժիտ պէտք է որ ճանապարհ դնէ։ Ապա իրենք ծնողները, որոնք իրենց աղջիկներն առաջարկելիս նոցա օժիտն առաջարկեցին կամ ապնուականութիւն, վասն զի առաքինութիւն չմնաց, որ առաջարկէին։ Երիտասարդների մէջ վստահութիւնը մեռաւ. ո՞վ կ'համարձակուի կանացի բարոյական վսեմ դարդերից լծափուբ օրիորդի ձեռք մեկնել։

Արդեր դատապարտեմ։ Բայց ափսոս, անտառն ընկած կրակը ցամաք, չոր խոտերի

*) Այս խօսքը թելադրել են նուաստ քարոզչին մի քանի օրիորդներ իրենց ակնյայտնի քանիմ (թէ՞ անվերջ) վարմունքներով. արտասանուած է սրտի ցաւով այլ ոչ առեղծութեամբ ի զգուշութիւն Ջուշուայ բազմաթիւ պատուական Հայ. օրիորդներու, որոնք կարող էին միամտաբար խաբուել մոլորուածներից։ Ակնարկած մի քանիսը խիստ վրդովուեցան, ուստի և իրենց օգտի տուջ կուրացան։ Ցաւում եմ, բայց պարտքս սիրով եմ կատարում։

հետ և կանաչ դարարին է այրում. շատ համեստ պատուական օրիորդներ իրենց անարժան քոյրերու հետ պատժուած մնացին։ Իսկ ամենախոշոր պատիժը մի թշուառ ժողովուրդ է կրում։

Հռոմի իմաստուն թագաւորը մի ժամանակ բացականչում էր. «Ով Հռոմ, չեմ ողբում ոչ տերուած պալատներդ, ոչ փլած պարիսպներդ, ոչ այրուած անտառներդ. ոչ պակսած բնակիչներդ. ոչ, դոցա վերայ չեմ լալիս։

Ողբում եմ ու լալիս։ տեսնելով քեզ, որ զուրկ ես քո հայրերի առաքինութիւնից ու կրթութիւնից։ Կորաւ վերջացաւ մեր հայրենիք, երբ տղայ ու աղջիկ զաւակներու կրթութիւնը պակսեց. տղայքը լրբացան, աղջիկներն ամօթխածութիւնը մի կողմ դրին, մայրերն անպարկեշտ դարցան»։

Նոյն ողբը քո հայրենիքիդ կարդա, ով թոթովախօս։ Անիծուի փողը, անիծուի հարստութիւնը, անիծուի դրամն անարդ մարդկանց ձեռքում, անիծուի մոլար և անմարս ուսումն, որ մտաւ մեր մէջ և մեր և Հայ աղջկանց առաքինութիւնները խլեց մեր ձեռքէն։

Ասա, ով թոթովախօս, ասա Հայ աղջիկներուն ու մի վախենար, զի հալածանքի վերարկուն դոցա համար հագար. ասա, որ առաքինութիւն սիրեն, ասա որ ճշմարիտ պահր

պահեն մինչև հասնի ս. զատիկ, ասա՝ որ չ՝կորցնեն քո առաջապահ ժողովուրդ։ Կ՝գայ օր երբ վրաց տեղացող նախատինքների փղերը յիշատակիդ վրայէն իրենց մատներովը կ՝ժողովեն. ասա՝, պարարդ կատարիր»։ Ես խոստացայ։

Լսեց ոգին. իր վիրարկուի փեշով սրբեց իմ արցունք, հեռացաւ լռելով, հեռվեռակ փոքրանալով նոյն կայծը դարձաւ և լուսնին միացաւ *)։

ТИФЛИССКАГО СОБРАНІЯ БИБЛІОТЕКА

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени Мясни и на
Ա. ՄՅԱՍ Ի ՅԱՆԻ ԱՆՎԱՆ

*) Ծանօթ. Խօսուած է 1902 թ. մարտի 17-ին Զուշու Ղազանչեցոց եկեղեցում։

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Երես.	Սխալ.	Ուղիղ.
9	տմբոխ	տմբոխ.
23	դուստ	դուստր.
32	այո	այս.
46	եկբորը	եղբօրը։
48	կանգում	կանգնում
61	նոցա կուրծք	. . . . .
66	անշնոռքք	անշնորհք
67	մոռացնել	մոռացնել.
70	արձականք	արձագանգ.
74	իւրաքանչիւր	Իւրաքանչիւր.
78	մեղա՞	մեղա՞յ
81	մեղա՞	մեղա՞յ
82	յուղուի	յուզուի,
84	ամեիօն	ամբիոն,
85	անուզղա	անուղղայ
89	վա	վա՞յ
92	յասօր	այսօր
93	մարսկանց	մարդկանց
105	խաւարի	խաւարի
111	աւաղով	աւաշով
112	ժամանակի	ժամանակի
120	ոոսկերք	ոսկերք
135	արծթափայլ	արծաթափայլ
142	փղերը	փշերը.

ԳԻՆՆ Է 40 ԿՈՊ.

Մուտքագրված է 1958թ.

Ա.Հ

४०५

1973